Գենդերային քաղաքականությունը Հայաստանում

Օրենսդրական, հակագենդերային քարոզչության և համայնք ձևավորելու ռազմավարությունների ուսումնասիրություն

Անի Ջիվանյան

2017

Անի Ջիլոզյան

I. Հակագենդերային տրամադրությունների ազդեցությունը իրավական և կարգավորիչ դաշտերի վրա

II. Վատթարացնող գործոններն ու առաջադիմությունն արգելակող հիմնական սպառնալիքները

III. Հակագենդերային արշավի խորքային ուսումնասիրություն

IV. Քաղված դասեր. ինչ ռազմավարություններ կարող ենք որդեգրել Հայաստանում հակագենդերիզմի խնդիրը լուծելու համար

Բովանդակություն

.06 Համառոտագիր

.09
ա. Գենդերային հավասարություն .10
բ. Հակախտրականություն .14
գ. Ընտանեկան բռնություն .19
դ. Սեռական ու վերարտադրողական առողջություն և իրավունքներ .27

.35
ա. Քաղաքական կամքի բացակայություն .36
բ. Պատմական ժառանգություն .37
գ. Ընկալում, որ պետությունը միջամտում է «ընտանեկան հարցերին» .39
դ. Շփոթմունք բառիմաստների շուրջ .40
ե. Գնալով մեծացող դժգոհություն «եվրոպական արժեքներից» .41
զ. Կանանց շարժման բացակայություն .42
է. Ազգայնական գաղափարախոսություն .45
ը. Ազգ-բանակ հասկացությունը .46
թ. Նեոլիբերալիզմը՝ ետնաբեմում .47

.50
ա. Մոբիլիզացման ռազմավարությունները .52
բ. Գլխավոր դերակատարնե .54
գ. Ուղերձների ձևակերպման ռազմավարությունը .61
դ. Ֆինանսավորման մեխանիզմներ .63

.65
ա. Թիրախավորել բնակչության որոշակի հատվածների .66
բ. Ճիշտ ուղերձի ընտրություն .70
գ. Հանրային մոբիլիզացման ապացուցողական ու հնարամիտ ռազմավարություններ .78
դ. Ռազմավարական դաշինքներ ու լոբբինգ .80
ե. Դոնորների օրակարգի վերաձևակերպում .86

.90 Եզրակացություն

.92 Հավելված. Հետազոտության մեջ ներգրավված հիմնական մասնակիցները

Համառոտագիր

Ներկայիս կիսաժողովրդավարական Հայաստանում կանանց և ԼԳԲՏ անձանց իրավունքների ուղղությամբ համակարգված հարձակումներ են տեղի ունենում պահպանողական, ռուսաստանյան թիկունք ունեցող քարոզչության կողմից, որին սատարում են աջակողմյան պոպուլիստներն ու ուլտրա-ազգայնական ծայրահեղականները: Գենդերային գաղափարախոսության նկատմամբ հարձակումները, որոնք օգտագործվում են որպես Արևմուտքի նկատմամբ անվստահություն սերմանելու և հանրության ուշադրությունը կոռուպցիոն տարբեր պրակտիկաներից շեղելու քաղաքական գործիք, խոչընդոտում են առաջադիմական օրենքների ընդունումը և միջազգային պայմանագրերի պատշաճ կատարումը:

Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է զգալի հետընթաց մի քանի ոլորտներում, ինչը կարելի է փաստել՝ ելնելով գենդերային հավասարության ցուցանիշներից և իրավունքների ապահովման և անխտրականության իրավական մեխանիզմների բացակայությունից: Ներկա պահին Հայաստանում ընդունված չեն առանձին օրենքներ՝ կապված ընտանեկան բռնության և հակախտրականության հետ, իսկ հղիության արհեստական ընդհատումների հետ կապված նոր օրենսդրական փոփոխությունները կարող են հանգեցնել հղիության արհեստական ընդհատման ոչ ապահով և անօրինական պրակտիկաների թվի բարձրացման:

Այնտեղ, որտեղ դե յուրե գոյություն ունի հավասարություն, դե ֆակտո դրան դեռևս պետք է հասնել: Սրա մասին վկայում է նաև մեծապես անկատար մնացած՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման» մասին օրենքը (նախկինում՝ «Գենդերային հավասարության» մասին օրենք): Օրենքի ընդունման ժամանակ «գենդեր» բառի իմաստն աղճատվեց ուլտրաազգայնական խմբերի կողմից, որոնք կարողացան մարդկանց զանգվածներին համախմբել այն գաղափարի շուրջ, որ հանուն հավասարության պայքար մղողները քայքայում են հայ հասարակությունը: Սա հանգեցրեց նրան, որ կառավարությունը սկսեց հեռացնել այդ եզրույթը իրավական փաստաթղթերից և իր գագաթնակետին հասավ այսպես կոչված՝ «գենդերի դեմ պատերազմում» կամ հակագենդերային արշավում:

Հակագենդերային արշավի ալիքի ազդեցությունը դեռ չանցած՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Եվրամիության (ԵՄ) հետ գործընկերության համաձայնագիր ստորագրելու փոխարեն Հայաստանը միանում է Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կազմած՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ):[1] 2013թ.-ից սկսած՝ հակագենդերային արշավը Հայաստանում համընկել է ԵՄ-ից կտրուկ շրջադարձ անելու և արդյունքում Եվրասիական տնտեսական միություն մտնելու գործընթացների հետ, և այս առնչությամբ բազմաթիվ փորձագետներ հիմնականում միաձայն են,

[1] Գոհար Աբրահամյան, Պայքար գենդերի դեմ, թե՞ հակաեվրոպական քարոզ, Հետք, 2015թ օգոստոսի 17

որ գենդերային հարցերը արհեստականորեն են օրակարգ բարձրացվել վախի մթնոլորտ ստեղծելու, պահպանողական զանգվածներին միախմբելու և հանրության ուշադրությունը քաղաքական իրականություններից շեղելու նպատակով:[2]

Այս հետազոտությունը ուսումնասիրում է հանրային ու քաղաքական ուժ համախմբելու նպատակով գենդերային հարցերի շուրջ գործածված և շահարկված դիսկուրսները և հետազոտում է դրանց ազդեցությունը Հայաստանում կանանց ու ԼԳԲՏ անձանց իրավունքներին առնչվող քաղաքականություն ընդունելու և այդ իրավունքները սահմանափակելու վրա: Հակագենդերային արշավը կապելով Հայաստանում նոր զարգացումների հետ՝ այս հետազոտության մեջ կիրառվում է երևույթը վերլուծելու բազմաշերտ մոտեցում, որի նպատակն է տեղեկացնել, թե ինչ ռազմավարություններ կարող են կիրառվել և ինչ արդյունավետ միջոցներով է հնարավոր ապագայում հակազդել նման հարձակումներին:

Հետազոտության մեթոդաբանությունն իր մեջ ներառում է գենդերային ներկայիս օրենսդրության ուսումնասիրություն, ինչպես նաև՝ որակական բաղադրիչ, որն ընդգրկում է 22 խորին կիսաձևայնացված հարցազրույց ոլորտի մի շարք փորձագետների հետ: Հետազոտության մասնակիցներն են եղել կանանց ու ԼԳԲՏ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատ ակտիվիստներ, լրագրողներ, գիտության ու կրթության ներկայացուցիչներ և կառավարության պաշտոնյաներ (հարցված փորձագետների ամբողջական ցանկին կարելի է ծանոթանալ Հավելվածում):

Զեկույցը կազմված է չորս հիմնական թեմատիկ բաժնից. 1) հակագենդերային արշավի ազդեցությունը քաղաքականության ընդունման և իրավունքների սահմանափակման վրա, 2) իրավիճակը վատթարացնող հանգամանքները և առաջընթացի հիմնական արգելակները, 3) համախմբման ռազմավարությունների, գլխավոր դերակատարների, ուղերձների ձևակերպման և ֆինանսավորման մեխանիզմների վերլուծություն, 4) արտաքին հետազոտության և շահագրգիռ հիմնական կողմերի հարցազրույցների հիման վրա առաջարկներ՝ ուղղված ակտիվիստներին և դոնոր կազմակերպություններին՝ որպես ներկայացված խնդիրների լուծումներ:

[2] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Զաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ

Ι.
Հակագենդերային տրամադրությունների ազդեցությունը իրավական և կարգավորիչ դաշտերի վրա

ա. Գենդերային հավասարություն



Գենդերային անհավասարությունը հայաստանյան հասարակության մեջ համատարած է

Գենդերային ճեղքվածքի 2016թ. գլոբալ զեկույցի համաձայն՝ Հայաստանը 144 երկրների շարքում զբաղեցնում է 102-րդ տեղը՝ Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի պետությունների շարքում ամենացածր կատարողականով:[3] Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ոլորտներում կանանց նկատմամբ խտրականությունը լայնորեն տարածված է, ինչպես վկայում է 2015թ. Գենդերային բարոմետր հետազոտությունը:[4] Ավանդական ընտանեկան արժեքների վերաբերյալ խորապես արմատացած պատկերացումներն առաջ են մղում գենդերային կարծրատիպեր ու ամրապնդում են այն ընկալումը, թե տղամարդիկ պետք է լինեն իշխող, իսկ կանայք՝ սպասարկող ու հնազանդ:[5] Անհավասարության հիմնավորումները հաճախ խարսխված են մշակութային ու սոցիալական այնպիսի նորմերում, որոնք տղամարդկանց սոցիալականացնում են լինել ագրեսիվ, զորեղ, անզգացմունքային, վերահսկող, իսկ կանանց՝ լինել պասիվ, հոգատար, հնազանդ, զգացմունքային, անզոր և տղամարդկանցից կախյալ:[6] Տղամարդկանց ու կանանց միջև ուժային հարաբերությունների անհավասարությունն ամրապնդվում է մի շարք գործոններով, ներառյալ՝ հայաստանյան դպրոցական համակարգի ու զանգվածային լրատվության միջոցով:[7]

«Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման» մասին օրենքը

Հայաստանը գենդերին առնչվող միջազգային համաձայնագրերն ու մարդու իրավունքների նորմերն առաջինը ընդունած ու վավերացրած նորանկախ երկրներից է:[8] Մինչև 2000-ականների կեսերը գենդերային հավասարության մասին օրենքի անհրաժեշտության և հարակից հարցերը լուծելուն ուղղված միջազգային մեծացող ճնշման շուրջ արդեն իսկ ծավալված էր լայն հանրային քննարկում:[9] Որպես արձագանք՝ պետությունը կազմեց ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ ռազմավարական ծրագիրը և 2013թ ընդունեց Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենքը (նախկինում հայտնի՝ որպես Գենդերային հավասարության մասին օրենք): ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության փաստաթղթերի վրա հիմնված օրենքի նպատակն է ապահովել քաղաքական, հանրային կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռներեցության, առողջապահության, կրթության եւ

[3] Համաշխարհային տնտեսական ֆորում, 2016թ. Գլոբալ գենդերային ճեղքվածքի զեկույց 2016թ.
[4] ԵՊՀ Գենդերային հետազոտությունների կենտրոն, Հայաստանի գենդերային բարոմետր, 2015թ.
[5] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.
[6] Նույնը
[7] Նույնը
[8] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, Կովկասյան հրատարակություն, 2016.
[9] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ, Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների երաշխիքներ:[10]

Սկզբում դրսևորելով համագործակցություն՝ պետությունն ընդունեց քաղաքացիական հասարակության փորձագետների ներկայացրած առաջարկները և 2013թ. սկզբին անցկացված հանրային լսումների ժամանակ դրսևորեց բարեհաճ վերաբերմունք:[11] Իսկ արդեն 2013թ. մայիսին երկրորդ լսումների ժամանակ, երբ պահպանողական կոչերն ու խնդրի միտումնավոր խեղաթյուրումն արդեն թափ էին առնում, պետական պաշտոնյաները, ներառյալ՝ օրենքը նախագծող աշխատանքային խմբի անդամ պաշտոնյաները,[12] կոչ արեցին հանել «գենդեր» եզրույթը իրավական փաստաթղթերից, փոխանակ աշխատեին գենդերային քաղաքականության մասին հանրային իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:[13] Պահպանողականները հատկապես մատնանշում էին օրինագծի Հոդված 3-ում տեղ գտած ձևակերպումը, ըստ որի գենդերը «տարբեր սեռերի ձեռքբերովի, սոցիալապես ամրապնդված վարքագիծն է»՝ համարելով, որ «ձեռքբերովի» բառը «հղում էր անում նույնասեռականությանը»:[14]

◂ Օրենքի շուրջ քաղաքական զարգացումները

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հիմնականում միակարծիք են, որ գենդերային հարցերը Հայաստանում դարձել են խիստ քաղաքականացված: Ըստ «Հոդված 3» ակումբի ղեկավար Գայանե Աբրահամյանի՝ կար հստակ կապ օրենքի և քաղաքական զարգացումների միջև: «Այս ժամանակ էր, որ ավելի վաղ ստեղծված պուտինյան ակումբները սկսեցին ցուցադրել իրենց ու կազմակերպեցին մի քանի համաժողովներ եվրասիական ինտեգրման թեմայով՝ թիրախելով կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններին (հկ) ու նախաձեռնելով եվրոպական արժեքների թեմայի շուրջ խեղաթյուրումների ալիք»:[15] Այս քարոզչությանը հետևելով՝ պահպանողական զանգվածները սկսեցին սպառնալիքներ հնչեցնել ակտիվիստների նկատմամբ, այդ թվում՝ կոչ անելով հանրությանը «վառել [ակտիվիստներին] ու պայթեցնել նրանց գրասենյակները»:[16]

Այս իրավիճակն ուսումնասիրած փորձագետները նշում են, որ օրենքը հատուկ էր օգտագործվում «հանրությանն ավելի հրատապ խնդիրներից (օրինակ՝ կոռուպցիայից) շեղելու» նպատակով, որպեսզի ստեղծվի «ներքին թշնամի», որից հայ ժողովրդին պաշտպանելու հանձնառությունը կստանձնեն Հայաստանի իշխանությունները, և որպեսզի մարդիկ հեռանան Արևմուտքից, ու Եվրասիական տնտեսական միությունն ու Ռուսաստանի հետ ասոցացումը դառնա նրանց համար ավելի ցանկալի»:[17] «Իրավունքի ուժ» կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանը նշում է. «Այդ արշավի ներքին ոչ տեսանելի նպատակն էր մեղմել կառավարությանն ուղղված քննադատությունը, փոխել հանրության զայրույթի ու իրենց կյանքից դժգոհությունների վեկտորը, մեղքը գցել ամենախոցելի խմբի վրա, որպեսզի պետական պաշտոնյաները պատասխանատվությունից ազատվեն»:[18]

[10] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Զաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ

[11] Աննա Հարությունյան, Վեր հանելով գենդերային դիսկուրսը Հայաստանում. Հիստերիայից մինչև կառուցողական երկխոսություն, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2017թ.

[12] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.

[13] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Զաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ.

[14] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.

[15] Նույնը

[16] Նույնը

[17] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ.

[18] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.

Հակագենդերային արշավի ազդեցությունը օրենքի կիրարկման ու իրավունքների սահմանափակման վրա

Հակագենդերային արշավի հետևանքները մինչև հիմա էլ տեսանելի են: 2014թ.-ից «գենդեր» եզրույթը ոչ պաշտոնապես արգելված է և հեռացված իրավական փաստաթղթերից,[19] և տարածված է համակարծություն, որ օրենքը պատշաճորեն չի կատարվել: Թեև այն տալիս է մի շարք կարևոր եզրույթների սահմանումներ ու արգելում է գենդերային խտրականությունը՝ հանրային մի շարք ոլորտներում հավասարություն երաշխավորելով,[20] այն խտրականությունից տուժածների համար չի ստեղծում դատարաններում իրենց իրավունքները ամրապնդելու մեխանիզմներ, և բնույթով մնում է մեծապես դեկլարատիվ:[21] «Հոդված 3» ակումբի ղեկավար Գայանե Աբրահամյանը, ով ուսումնասիրել է հակագենդերային արշավն այն պահին, երբ այն դեռևս ընթացքի մեջ էր, նշում է. «Թղթի վրա մեզ մոտ շատ բան կա՝ ավելին, քան հարևան երկրներում: Բայց իրականում դրանք բացարձակապես չեն գործադրվում»:[22] Նա նաև հավելում է, որ եզրույթի գործածման ոչ պաշտոնական արգելքը հանգեցրել է ներառականության պակասի, այսինքն՝ ««տղամարդկանց ու կանանց միջև հավասարությունը» և «գենդերային հավասարությունը» բոլորովին նույն արժեքը չունեն»:[23] Հաշվի առնելով այս զարգացումները՝ քաղաքացիական հասարակությունը սկսեց գենդերային խնդիրներում կառավարության ներգրավվածությունը բնութագրել որպես «ֆորմալ, արհեստական, ոչ կառուցողական»[24] և «անպատրաստ անկեղծ երկխոսության»:[25]

Հարցազրույցի մասնակցած փորձագետներից շատերն էին համակարծիք, որ «գենդեր» եզրույթը օրենքից ու այլ իրավական փաստաթղթերից հանելու հետևանքներից էր բացասական ազդեցությունը քաղաքացիական հասարակության վրա: Հարցմանը մասնակցածների շուրջ մեկ-երրորդը նշել է, որ գենդերային հակաքարոզչությունը ստեղծեց բացահայտ ատելության դրսևորման դոմինոյի էֆեկտ ԼԳԲՏ համայնքի և նրանց իրավունքները պաշտպանողների նկատմամբ, ինչն է՛լ ավելի վարկաբեկեց նրանց՝ ստեղծելով նրանց ակտիվիզմը մանիպուլացնելու վտանգ: Բաց հասարակության հիմնադրամների աշխատակից Աննա Հարությունյանի կարծիքով՝ եզրույթի բացառումը ճանապարհ հարթեց, որպեսզի գենդերը դառնա «դավադրությունների տեսությունների զոհ»:[26] Մինչ օրս էլ «գենդեր» եզրույթը հավասարեցված է հայհոյանքի և գործածվում է այնպիսի իրավիճակներ բնութագրելու համար, որոնք իբր հայ ավանդական արժեքներին վնաս հասցնող մեղսագործություն են:[27] Համալսարաններում դասախոսները կոչ են արել, որպեսզի կրթական ծրագրերից ու պետական համալսարանների տարբեր տպագիր նյութերից այս եզրույթը դուրս բերվի:[28] Հակագենդերային արշավն օգտագործվել է նաև բազմաթիվ այլ համատեքստերում քաղաքացիական հասարակության կողմից բարձրացված՝ առաջադեմ, սակայն այս խնդրի հետ կապ չունեցող, հարցերի կարևորությունը նվազեցնելու նպատակով:[29]

[19] Մարիա Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[20] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Զաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ.
[21] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ.
[22] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[23] Նույնը
[24] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ. և Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[25] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[26] Աննա Հարությունյան, հարցազրույց, 2017թ.
[27] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերե՞լք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.
[28] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[29] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.

Օրենքի ընդունման շուրջ հետագա հիստերիան ոչ միայն հավատ ընծայեց այն գաղափարի նկատմամբ, որ եզրույթի գործածումը խրախուսում է սեռական այլասերում ու ավանդական ընտանեկան արժեքների քայքայում,[30] այլև մեծապես ակնհայտ դարձրեց գենդերային քաղաքականության շուրջ պետության ցուցաբերած հակասությունները, որոնք այդ քաղաքականությունն ընդունելու ժամանակ պետությունը չուներ: Հարցազրույցին մասնակցած ակտիվիստները համարում են, որ օրենքում գործածված եզրույթների շուրջ պայթյունը ի ցույց դրեց իշխանությունների անտեղյակությունը թեմայից և միտումը հավաքել քաղաքական միավորներ՝ օրենսդրություն անցկացնելու միջոցով և գենդերային խնդիրների նկատմամբ հետաքրքրություն դրսևորելով այն ժամանակ, երբ դա ֆինանսներ ներգրավելու հնարավորություն կարող է ստեղծել: Այնուամենայնիվ, փորձագետների կարծիքը կիսվում է այն հարցի շուրջ, թե որքանով էին կառավարության ներկայացուցիչները ուղղակիորեն ներգրավված այս մանիպուլիացիաների մեջ: Ոմանք նշում են, որ հենց կառավարության ներկայացուցիչներին ու լայն հանրությանն են մանիպուլիացիայի ենթարկել, երբ հակագենդերային քարոզչության ալիքը ծավալվեց,[31] մյուսները համարում են, որ պետությունը հիմնականում տեղյակ էր իրավիճակից ու միտումնավոր քայլեր էր անում իշխանությունն իր ձեռքում պահպանելու նպատակով:[32]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մեծապես համաձայն են, որ եթե 2013թ. հակագենդերային ալիքի գագաթնակետին պետությունը նախընտրեր հանրությանը կրթել «գենդեր» եզրույթի շուրջ, այսինքն՝ խուսափողականության փոխարեն ընտրեր բարոյական ներգրավվածության քաղաքականությունը, իրավապաշտպանների ու ԼԳԲՏ համայնքի անդամների դեմ հակազդեցությունը կմեղմվեր, իսկ օրենսդրական բարեփոխման շուրջ բացասաբար տրամադրված ալիքը հիմնականում կկանխվեր: Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության աշխատակից Սևան Պետրոսյանը նշում է. «Մեկ ամսում կառավարությունը բնակչությանը սովորեցրեց ավտոմեքենայում ամրագոտի ամրացնել, այդ նույն բնակչությանը, որ մինչ օրս չի սովորել հերթ կանգնել: Եթե ուզենային կանխել, կանեին դա»:[33]

[30] ՓԻՆՔ, Կանանց ու ԼԳԲՏ անձանց իրավունքների վիճակը Հայաստանում, զեկույց, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք, 2013թ

[31] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ և Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ

[32] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ և Սևան Պետրոսյան, հարցազրույց, 2017թ

[33] Սևան Պետրոսյան, հարցազրույց, 2017թ

Բ. Հակախտրականություն

Պատմական խտրականություն ԼԳԲՏ համայնքի նկատմամբ

ԼԳԲՏ համայնքը Հայաստանում առավել մարգինալացված ու քիչ տեսանելի խմբերից է, որը ստիպված է առերեսվել լայն հանրության կողմից դրսևորվող ծայրաստիճան անհանդուրժողության ու խտրականության հետ: 2011թ. Կովկասյան բարոմետր հետազոտությունը ցույց է տալիս, որ հայաստանցիների ճնշող մեծամասնության համար նույնասեռականությունը չի կարող արդարացվել:[34] Վերջերս արված մեկ այլ հետազոտություն պարզել է, որ հարցվածների 72.1%-ը բացասական վերաբերմունք ունի ԼԳԲՏ անձանց հանդեպ, որոնցից 18.6%-ը «ոչ ավանդական» սեռական կողմնորոշումը համարում է հիվանդություն, 27.4%-ը ԼԳԲՏ անձանց մասին գործածում է վիրավորական բառապաշար, իսկ 12.7%-ը համարում է, որ նույնասեռականությունը արևմտյան երկրների բացասական ազդեցությունն է:[35] Դաշտում մեծ գործունեություն ծավալող կազմակերպության՝ Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք (ՓԻՆՔ) հկ-ի կողմից հարցված քուիր անձանց ճնշող մեծամասնությունն ընդունել է, որ եղել է սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության հանցանքների կամ ատելությամբ հրահրված միջադեպերի զոհ կամ ականատես:[36]

Հայաստանի օրենսդրությունը շարունակում է արգելակել ԼԳԲՏ անձանց իրավունքների

իրացումը: Խտրականությունն արգելող ներկայիս օրենսդրությունը չի անդրադառնում գենդերային հիմքով խտրականության դեմ պայքարելուն, և արդյունքում՝ գենդերային հիմքով բռնությունը շարունակում է համատարած լինել:[37] ԻԼԳԱ-Եվրոպա ասոցիացիայի վարկանիշային դասիչի համաձայն՝ Հայաստանը եվրոպական 49 երկրների շարքում 47-երորդն է:[38] 2013թ հակագենդերային արշավից հետո ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության քարոզը շատացել ու ամրապնդվել էր, իսկ ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ հարձակումներն ու թիրախումները փողոցում ավելի էին շատացել:[39]

Խտրականության մասին առանձին օրենքի անհրաժեշտությունը

ՀՀ քրեական օրենսգիրքը չի պարունակում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կատարված ատելության հանցանքների օրենսդրական արգելք օրինակ՝ ԼԳԲՏ անձանց հանդեպ արարքները զուտ նրանց ԼԳԲՏ լինելու պատճառով չեն դիտարկվում հանցանքը կամ պատիժը սաստկացնող հանգամանքներ:[40] Իրականում սա նշանակում է, որ ծեծի, գույքի փչացման կամ ԼԳԲՏ անձանց հանդեպ այլ ոտնձգությունների դեպքում նրանք որևէ արդյունավետ իրավական միջոցից

[34] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) – Հայաստան, http://caucasusbarometer.org/en/cb2011am/JUSHOMO/, Կովկասյան բարոմետր 2011թ.

[35] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.

[36] ՓԻՆՔ, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից Իրականություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ, 2016թ.

[37] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.

[38] ԻԳԼԱ Եվրոպա, Երկրների ծիածանային դասիչ, Լեսբիների, գեյերի, բիսեքսուալների, տրանսների և ինտերսեքսների միջազգային ասոցիացիայի Եվրոպական ճյուղ, 2017թ.

[39] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.

[40] ՓԻՆՔ, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից Իրականություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ, 2016թ.

չեն կարող օգտվել:[41] Ըստ փորձագետների՝ փաստը, որ ներպետական օրենսդրության մեջ խտրականությունը հստակորեն սահմանված չէ, հանգեցնում է իրավունքի գերակայության ցածր մակարդակի ու ձախողում է անձանց պաշտպանությունը խտրականությունից:[42] Ավելին, խտրականության, խտրականության համար պատասխանատվության և դրա դեպքում ապացույցի բեռի հետ կապված հստակ սահմանումների բացակայությունն ըստ էության «զրոյացնում է խտրականությունից իրավական միջոցներով պաշտպանվելու հնարավորությունը»:[43]

Ինչ վերաբերում է ատելության քարոզին, Հայաստանի օրենսդրությունը ըստ էության ապահովում է փոքրամասնությունների պաշտպանություն, սակայն օրենսդրական բացի պատճառով սեռական փոքրամասնությունները մնում են չպաշտպանված:[44] Դե ֆակտո այս հանգամանքը ծառայում է ատելության խրախուսմանը՝ խոսքի ազատության քողի ներքո: Հայաստանյան օրենսդրության մեջ առկա բացերի արդյունքում ԼԳԲՏ անձինք օրենքով պաշտպանված չեն ու շարունակում են ենթարկվել ահաբեկման, սպառնալիքների, ոտնձգությունների, իրավունքների ոտնահարման, ինչպես նաև շարունակում են չունենալ պետական կառույցների, ներառյալ՝ իրավապահ մարմինների ու զինված ուժերի պաշտպանությունը:[45] Հետաքրքրական է, սակայն՝ ոչ զարմանալի, որ նույնասեռ ամուսնությունների թեման օգտագործվել է պետական պաշտոնյաներին համոզելու, որ հակախտրականության մասին առանձին օրենք չպետք է ընդունվի, չնայած նրան, որ նույնասեռ ամուսնությունների թեման ընդհանրապես Հայաստանում քաղաքական օրակարգում չէ:[46]

Վերը նշված խնդիրները շարունակում են չլուծված մնալ՝ չնայած նրան, որ Հայաստանի կառավարությունն ամրագրել է միջազգային համաձայնագրեր, որոնք արգելում են սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիման վրա խտրականությունը: 1993թ. Հայաստանն ընդունել է Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, որն անդամ-պետություններին արգելում է այլոց նկատմամբ խտրականությունը՝ նշելով հիմքերի մի շարք, այդ թվում՝ սեռը:[47] Այնուհետև 2008թ. Հայաստանը Հարավային Կովկասի երկրներից առաջինն էր, որ միացավ ՄԱԿ-ի հայտարարությանը, ըստ որի՝ անօրինական է սեռական կոմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով խտրականությունը:[48] Որպես Եվրոպային խորհրդի անդամ՝ պետությունն ընդունել է խտրականության դեմ պայքարելու հանձնարարականը, ինչով ստանձնել է, այլ հանձնառությունների շարքում, ձեռնարկել կոնկրետ քայլեր ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հանցանքների դեմ պայքարելու, ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցանքները գրանցելու, սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը ՀՀ օրենսդրության մեջ որպես հանցանքը սաստկացնող հանգամանք ընդունելու ուղղությամբ:[49] 2015թ. պետությունն

[41] Նույնը
[42] Արա Ղազարյան և Վահե Գրիգորյան, Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը. իրավագիտական հետազոտություն, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և Նիդեռլանդների կառավարություն, 2015թ.
[43] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[44] IWPR, IWPR –ը Հայաստանում խթանում է հակախտրականության մասին բանավեճ, Պատերազմի ու խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2015թ.
[45] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[46] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[47] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ.
[48] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[49] ՓԻՆՔ, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից Իրականություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ, 2016թ.

ընդունել է ՄԱԿ-ի պարբերական համընդհանուր զեկույցի (UPR) հանձնարարականները՝ կապված խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենսդրական ակտեր ընդունելու հետ: Ի վերջո, արդար է պնդել, որ Հայաստանը պարտավոր է ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դեմ պայքարել՝ որպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի անդամ:[50]

Միջազգային հանրության կողմից խտրականության դեմ պայքարին վերաբերվող առանձին օրենքի ընդունման ուղղությամբ ճնշումը հիմնականում պայմանավորված է անուղղակի խտրականությունը և խտրականության այլ տեսակներն ապացուցելու դժվարությամբ, ինչպես նաև նոր իրավունքների բովանդակային հիմքեր ավելացնելու և դատական ու դատավարական նոր նորմեր ընդունելու անհրաժեշտությամբ:[51] Թեև Հայաստանի իշխանությունները համարում են, որ ներկայիս օրենսդրությունը բավարար է խտրականության դեմ պայքարելու համար ու որ Հայաստանն այն վիճակում չէ, որ առանձին օրենքի կարիք ունենա,[52] Արդարադատության նախարարությունը հակախտրականության մասին օրինագծի մշակումը սկսել է 2015թ.՝ որպես Եվրամիության կողմից առանց վիզայի ռեժիմի շուրջ բանակցությունների նախապայմանի կատարում:[53] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համարում են, որ այս գործընթացը մասնակցային չի եղել, իսկ 2016թ. իրենց ներկայացրած օրինագծի տարբերակը եղել է թերի, քանի որ չի նախատեսել խտրականությունը կանխող ու դրա դեմ պայքարող համապատասխան մեխանիզմներ և չի սահմանել պետական այն մարմինը, որը երաշխավորում է հավասարությունը, անկախ է ու արդյունավետ:[54] Պետությունը դեռևս պետք է պաշտոնապես հրապարակի օրինագիծը, սակայն դրա ընդունման կանխատեսելի ժամանակացույց նույնպես չկա, չնայած այն շարունակում է մնալ Եվրամիության կողմից մարդու իրավունքների ուղղությամբ բյուջետային աջակցության պայմաններից մեկը: Նման օրենքն իրականում կապահովեր խտրականության դեպքում իրավունքներ վերականգնելու իրավական մեխանիզմներ, քանի որ հակախտրականությանը վերաբերող ներկայիս օրենսդրության դրույթները տարբեր իրավական փաստաթղթերում ու նորմերում զուտ դեկլարատիվ են ու իրավական պաշտպանության միջոցներ չեն երաշխավորում:[55]

Տարածաշրջանային քաղաքական զարգացումների ազդեցությունն օրենսդրության վրա

Ռուսաստանում 2013թ., երբ մշակվում էր հակախտրականության մասին առանձին օրենք, նշանակալի իրադարձություն տեղի ունեցավ. ընդունվեց օրենք, որն անչափահասներին պաշտպանում է «նույնասեռական պրոպագանդայից»:[56] Ռուսաստանի օրինակով՝ Հայաստանի իշխանությունները հապճեպ ներկայացրին օրինագիծ, որի նպատակն էր լինելու տուգանել այն անձանց, ովքեր կխրախուսեին «ոչ ավանդական սեռական հարաբերություններ»: Օրինագիծը շրջանառությունից հանվեց միջազգային ճնշման ներքո: Նույն տարում Հայաստանում

[50] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ

[51] Արա Ղազարյան և Վահե Գրիգորյան, Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը՝ իրավագիտական հետազոտություն, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և Նիդեռլանդների կառավարություն, 2015թ

[52] Գայանե Հովակիմյան, Արշակ Գասպարյան և Մարինա Գալստյան, Խտրականության փորձագիտական ընկալումները Հայաստանում, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և Նիդեռլանդների կառավարություն, 2015թ

[53] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ

[54] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ

[55] Արա Ղազարյան և Վահե Գրիգորյան, Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը՝ իրավագիտական հետազոտություն, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և Նիդեռլանդների կառավարություն, 2015թ

[56] Ստիվ Ռոզենբերգ, Ռուսաստանի դուման անց է կացնում «գեյ պրոպագանդան» արգելող օրենք, BBC, 2013թ հունիսի 11

մշակվում էր հակախտրականության մասին օրենքը, որը խտրականության սահմանման մեջ սկզբում հիշատակում էր, սակայն այնուհետև դուրս թողեց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը: Ռուսաստանի հոմոֆոբ քաղաքականությունը դոմինոյի էֆեկտ ունեցավ ավելի լայն տարածաշրջանում, երբ հետխորհրդային մի քանի երկրներում, ներառյալ՝ Հայաստանում, խտրական օրենքներ ընդունելու փորձեր արվեցին:[57] 2013թ օգոստոսին ՀՀ ոստիկանությունը սկսեց Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում փոփոխություններ մշակել, համաձայն որոնց՝ «ոչ ավանդական սեռական հարաբերությունների պրոպագանդայի» համար անձինք կարող էին ենթարկվել վարչական պատասխանատվության:[58] Այնուամենայնիվ, օրինագիծը չէր սահմանում, թե ինչ է նշանակում ոչ ավանդական սեռական հարաբերությունը կամ պրոպագանդան:[59] Թեև օրինագիծը չընդունվեց, այդ փոփոխությունների ու լրացումների քննարկումն ընդամենը հետաձգվել է, այսինքն՝ ապագայում այս հարցը կարող է նորից օրակարգում հայտնվել:[60]

Հատկանշական է, որ ռուսաստանյան՝ «պրոպագանդայի դեմ օրենքները» ոչ միայն ճանապարհ հարթեցին ԼԳԲՏ իրավունքների ոտնահարման համար, այլև լեգիտիմացրին համայնքի նկատմամբ բռնությունն ու շատերի պնդմամբ՝ ազդեցին Հայաստանում հակախտրականության մասին օրենքի գործընթացների վրա: Իր առաջին նախագծում, այսինքն՝ մինչև նույնասեռականության հակաքարոզչության մասին օրինագծի ի հայտ գալը, հակախտրականության մասին օրինագիծը խտրականության սահմանման մեջ ներառում էր սեռական կոմնորոշումն ու գենդերային ինքնությունը, սակայն կարճ ժամանակ անց նոր խմբագրումով օրինագծում այդ ձևակերպումներն այլևս պահպանված չէին:[61] Հստակ չէ, թե այս գործընթացում ինչ դեր է ունեցել ռուսաստանյան ազդեցությունը, քանի որ ապացույցներ չկան,[62] սակայն հավանական է, որ քաղաքական երկու զարգացումները փոխկապացված են՝ հաշվի առնելով, որ Հայաստանը հակված է հետևել Ռուսաստանի օրինակին:[63] Եվ չնայած Հակախտրականության կոալիցիայի վճռականությանը՝ կապված ձևակերպման կարևորության հետ՝[64] պետությունը 2013թ. սահմանումից դուրս թողեց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, ինչն ըստ քաղաքացիական հասարակության ենթադրությունների՝ կապված էր սկզբում պետության կողմից եզրույթների թյուր ընկալման և հետագայում գենդերային հարցերի քաղաքականացման հետ:[65] Հարցմանը մասնակցած փորձագետների շուրջ մեկ-հինգերորդը համարում է, որ անկախ ռուսական օրենսդրությունից՝ օրենքում խտրականության սահմանումը չի ներառի ԼԳԲՏ համայնքին՝ կառավարության խիստ հոմոֆոբ դիրքորոշման և լայն հանրության կողմից դրսևորվող անհանդուրժողականության պատճառով:

◂ Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով խտրականության չընդունում

2017թ. սկզբին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ առանձին հանդիպման ժամանակ արդարադատության փոխնախարար Վիգեն

[57] Վերոնիկա Գրժեբալսկա, Ինչու է «գենդերային գաղափարախոսության» դեմ պատերազմը կարևոր և ոչ միայն ֆեմինիստների համար. հակագենդերիզմն ու նեոլիբերալ ժողովրդավարության ճգնաժամը, Վիշեգրադյան տեսանկյուն, 2016թ. մարտի 7

[58] ՓԻՆՔ, Ոստիկանությունը հետ է կանչում Պրոպագանդայի մասին օրինագիծը, 2013թ. օգոստոս

[59] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ.

[60] Նույնը

[61] Նույնը

[62] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.

[63] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ. և Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.

[64] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.

[65] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ. և Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.

Քոչարյանը բացեիբաց հաստատեց, որ խտրականության սահմանումը չի ներառելու սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը՝ պատճառաբանելով, որ հանրությունն ու իշխանությունները պատրաստակամ չեն «գենդեր» եզրույթն օգտագործել, ոչ էլ՝ պատրաստ են նման օրենսդրություն ընդունել:[66] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին նման հռետորաբանությունը ցույց է տալիս, որ պետությունը հանրությանը բովանդակորեն ներգրավելու կամ գենդերային խնդիրների մասին հանրության իրազեկումը բարձրացնելու ցանկություն չունի:[67] «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Արման Սահակյանը խնդրահարույց է համարում այն, որ սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը ներառված չեն եղել որպես նվազագույն պահանջ Արդարադատության նախարարությանը ներկայացված հանձնարարականների փաթեթում, և որ ԵՄ-ն չունի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը ներառելու հարցում ճնշում գործադրելու իշխանություն:[68]

ԼԳԲՏ հարցերի քաղաքական շահարկումը մինչ օրս էլ շարունակվում է: Մասնավորապես, 2015թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ, երբ առաջարկվող փոփոխությունների միջոցով երկրի կառավարման համակարգը պետք է կիսանախագահականից անցներ խորհրդարանականի, Սերժ Սարգսյանի վարչակազմը պնդել է, որպեսզի փոխվի նաև ամուսնության վերաբերյալ դրույթը՝ սահմանելով այն որպես տղամարդու ու կնոջ միջև միություն՝ այդպիսով կանխելով նույնասեռ զույգերի որևէ հետագա իրավական ճանաչում և բացեիբաց արգելելով նույնասեռ ամուսնությունը:[69] Նախքան այս փոփոխությունները, գործող սահմանադրությունը նման դրույթ չէր պարունակում, ուստի կարող էր հետագայում նույնասեռ ամուսնությունների ճանաչման հնարավորություն բացել:[70]

Անկախ գործող օրենսդրությունից՝ կան մի շարք խոչընդոտներ, որոնք օրենսդրությունը կամ դրա բացակայությունը չի կարող լուծել, ինչի պատճառով շարունակվում է ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խտրականությունը: ԼԳԲՏ անձինք խտրականության կամ որևէ հանցանքի զոհ լինելու դեպքում իրավապահ մարմիններին դիմելու և բողոք ներկայացնելու հակվածություն չունեն, քանի որ այդ մարմինները չեն դրսևորում գենդերային առումով զգայուն վերաբերմունք, նաև քանի որ դրանց ներկայացուցիչները կարող են իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին տեղեկություններ հաղորդել իրենց ընտանիքների անդամներին ու օգտվել այս հնարավորությունից՝ որպես հարկադրանքի մեթոդ:[71] Ավելին, ոչ միայն ոստիկանությունը տարբեր առիթներով ձգձգել է հանցագործության մասին ներկայացված հաղորդումների ուսումնասիրությունը, այլ նաև ոստիկանության աշխատակիցները միտումնավոր խուսափել են իրավական լուծումներ փնտրել՝ իրենց իսկ նախապաշարումների պատճառով:[72] գենդերային առումով զգայուն վերաբերմունք, նաև քանի որ դրանց ներկայացուցիչները կարող են իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին տեղեկություններ հաղորդել իրենց ընտանիքների անդամներին ու օգտվել այս հնարավորությունից՝ որպես հարկադրանքի մեթոդ: Ավելին, ոչ միայն ոստիկանությունը տարբեր առիթներով ձգձգել է հանցագործության մասին ներկայացված հաղորդումների ուսումնասիրությունը, այլ նաև ոստիկանության աշխատակիցները միտումնավոր խուսափել են իրավական լուծումներ փնտրել՝ իրենց իսկ նախապաշարումների պատճառով:

[66] Նույնը
[67] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ և Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ
[68] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ
[69] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ
[70] Նույնը
[71] ՓԻՆՔ, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում Տեսությունից Իրականություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ, 2016թ
[72] Նույնը

գ. Ընտանեկան բռնություն

Ընտանեկան բռնությունը համատարած սոցիալական խնդիր է ճանաչված

Ընտանեկան բռնությունը ծայրահեղ խնդիր է, որին բախվում են Հայաստանում բնակվող կանայք: Հանրապետության ողջ տարածքում վերջերս անցկացված մի հարցման համաձայն՝ տղամարդ զուգընկեր կամ կողակից ունեցած կանանց 22.4%-ը և 45.9%-ը ենթարկվել է համապատասխանաբար ֆիզիկական և հոգեբանական բռնության: Տղամարդ զուգընկեր կամ կողակից ունեցած կանանց 19.5%-ն էլ նշել է, որ իրենց զուգընկերն արգելել է աշխատանքի անցնել կամ որևէ կերպ գումար վաստակել: Իսկ հարցմանը մասնակցած տղամարդկանց 7.6%-ը նշել է, որ ստիպել է որևէ կնոջ կամ աղջկա իրենց հետ սեռական հարաբերություն ունենալ. ահազանգող մի ցուցանիշ:[73] Նույն հետազոտությունը պարզել է կանանց նկատմամբ բռնության մշակութային ընդունելիությունը, այսինքն՝ հարցվածների մեկ-երրորդից ավելին նշել է, որ կանայք պետք է հանդուրժեն բռնությունը, որպեսզի պահպանեն իրենց ընտանիքը, իսկ շուրջ երեք-քառորդն էլ արտահայտել է համոզմունք, որ կողակցի կողմից բռնությունը կարելի է արդարացնել:[74] Մտահոգիչ փաստ է, որ 2010-2015թթ. Հայաստանում պաշտոնապես գրացվել է կնասպանության 30 դեպք,[75] իսկ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան մինչ օրս արձանագրել է առնվազն 14 հավելյալ դեպք:

Չնայած ՀՀ սոցիալական հարցերի և արդարադատության նախարարությունները ընտանեկան բռնության դեմ պայքարելու որոշ միջոցներ են ձեռնարկել, Հայաստանը թերանում է միջազգային իր պարտականությունները կատարելու հարցում,[76] ներառյալ՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայով (CEDAW) ստանձած պարտականությունները:[77] 2002թ.-ից ի վեր կոնվենցիայի հանձնաժողովը ուղղակիորեն մատնանշել է ընտանեկան բռնության խնդիրը լուծելու հարցում համապարփակ մոտեցման և բռնությունից տուժածներին ուղղորդելու արդյունավետ պետական մեխանիզմ ներդնելու անհրաժեշտությունը:[78] Եվ չնայած միջազգային ճնշմանը՝ քաղաքական որոշումների կայացման բարձրագույն մակարդակում դրսևորված քաղաքական կամքը և հետևաբար՝ ընտանեկան բռնության դեմ պայքարին հատկացված ֆինանսական ռեսուրսները եղել են շատ քիչ:[79]

Ընտանեկան բռնության խնդիրը լուծելուն ուղղված օրենսդրության ու քաղաքականության պակաս

Ներկայում Հայաստանում ընտանեկան բռնությունը որպես հանցանք դիտարկելու ու համապատասխանաբար դրան ուշադրություն հատկացնելու վերաբերյալ առանձին օրենք

[73] Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2016թ.
[74] Նույնը
[75] Անի Ջիլոզյան, Կնասպանությունը Հայաստանում՝ լուռ համաճարակ, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, 2016թ.
[76] Արման Ղարիբյան, Ընտանեկան բռնության դեմ պայքարն ու կանխումը Հայաստանում, պետական ու միջազգային իրավական շրջանակները, Մագիստրոսական թեզ, 2016թ.
[77] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.
[78] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.
[79] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.

չկա, ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում միայն առողջությանը վնաս հասցնող արարքի դեպքում՝ առանց հստակորեն սահմանելու ընտանեկան բռնությունը՝ որպես հանցավոր արարք: Գործող քրեական և վարչական օրենսգրքերը, որոնցով արգելվում է անձին միտումնավոր վնասվածք հասցնելը, ընտանեկան բռնության ենթարկվածների օգտին չեն, և վերջինները հաճախ հետ են վերցնում իրենց բողոքները, երբ պարզ է դառնում, որ բռնարարը կարող է պատժվել տուգանքով, որը դուրս է գալու ընտանեկան բյուջեից կամ նա կարող է ձերբակալվել, ինչը կնշանակի՝ ի վիճակի չլինել ընտանիքին ֆինանսապես պահել:[80]

2013թ. ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածների փոփոխությունների շնորհիվ սեռական բռնությանն առնչվող օրենսդրական կարգավորումները բարելավվեցին, մասնավորապես՝ սեռական ոտնձգությունները, հատկապես՝ անչափահասների նկատմամբ կատարվող ոտնձգությունները, սահմանվեցին որպես լուրջ հանցանքներ, իսկ համապատասխան պատիժները՝ խստացվեցին: Այդուհանդերձ, ամուսնական բռնաբարության հստակ քրեականացում չկա, ինչպես և չկան ոչ ամուսնական ինտիմ հարաբերության մեջ գտնվողների համար պաշտպանության միջոցներ:[81] Որպես այդպիսին, սեռական բռնության դեպքերը քննվում են՝ ինչպես մնացած բոլոր քրեական գործերը՝ առանց շեշտադրելու գենդերային զգայունության հարցերը կամ ընտանեկան բռնության դինամիկան, այսպիսով շարունակելով գենդերային պատմական խտրականությունը:[82] Բռնության ենթարկվածներին հաճախ նաև մեղադրում են, որ հենց իրենք են հարձակում գործել կամ սուտ մատնություն տվել:[83] Արդյունքում, բռնության ենթարկվածները իրենց նկատմամբ բռնության դեպքերը են հաղորդում ոստիկանությանը՝ իրենց իսկ նկատմամբ քրեական հետապնդման հեռանկարի մտավախության պատճառով:

Բռնության խնդրին անդրադարձող պետական ծրագրերն ու քաղաքականությունները շարունակաբար բացառում են մարգինալացված կանանց, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող, էթնիկ ու սեռական փոքրամասնություն հանդիսացող, գյուղացի, տարեց, սեքս-աշխատող և այլ կանանց: Ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրինագիծը բացառում է լեսբի, երկսեռական և քուիր կանանց՝ հստակ ազդակ հղելով, թե նրանք գոյություն չունեն և պաշտպանության կարիք չունեն:[84] Բացի այդ, երբևէ չեն ընդունվել քաղաքականություններ՝ ուղղված եզդի աղջիկների՝ այդքան տարածված վաղ ու հարկադրական ամուսնությունները դադարեցնելուն:[85] Գոյություն չունի նաև որևէ պետական քաղաքականություն՝ ուղղված սեքս-աշխատողների նկատմամբ բռնության հարցին համալիր կերպով լուծում տալուն, հատկապես այն պարագայում, երբ սեքս-աշխատանքը շարունակում է պատժելի համարվել ՀՀ վարչական օրենսգրքով:[86] Հաշմանդամություն ունեցող կանայք որևէ կերպ առանձնացված չեն որոշումների կայացման ընթացքում, չնայած նրանք բոլոր տեսակի բռնությունների, ինչպես նաև իշխանություններից աջակցություն ստանալու հարցում խոչընդոտների առումով ավելի մեծ վտանգների կարող են բախվել:[87] ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ ռազմավարական ծրագրում մարգինալացված բոլոր խմբերը միատեղված են՝ չնայած նրան, որ նրանցից յուրաքանչյուրը խոցելի է յուրովի, մի բան, որ պետությունը պարտավոր է հաշվի առնել:[88]

[80] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[81] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.
[82] Նույնը
[83] Նույնը
[84] Աննա Նիկողոսյան, Լռության մեջ պատսպարված իշխանություն, նորմեր և ընտանեկան բռնություն կանանց միջև, Անալիտիկոն հանդես, 2017թ.փետրվար
[85] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.
[86] Նույնը
[87] Զառա Բաթոյան, հարցազրույց, 2017թ.
[88] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.

Բացի օրենսդրության ու քաղաքականության պակասից, թերի է նաև պետության կողմից ընդունված ծրագրերի իրականացումը: Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի և Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրի գնահատումը ցույց է տալիս, որ երկու ծրագրերն էլ սահմանել են չափազանց հավակնոտ նպատակներ և անիրագործելի են եղել գոյություն ունեցող կառուցակարգային (ինստիտուցիոնալ) կարողությունների պայմաններում:[89] Ավելին, ոչ միայն ծրագրերով սահմանված միջոցառումների համար ֆինանսավորում նախատեսված չի եղել, չեն եղել նաև կատարողականի չափելի ցուցիչներ, հստակ ժամանակացույցներ, գործողությունների իրականացման համար պատասխանատու վարչությունների զատորոշում, ինչի հետևանքով ռազմավարական ծրագրերը կարելի է համարել աննպատակային:[90] Ներկայում պետությունը նախապատրաստում է ՀՀ տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների 2017-2021թթ. գործողությունների ազգային ծրագիրը: Հատկանշական է, որ 2017թ. մոտենում է ավարտին, սակայն գործողությունների նոր ծրագիրը, որը վստահաբար կբացառի «գենդեր» եզրույթը, դեռևս մշակման փուլում է և օրենքի ուժ չի ստացել:

Ընտանեկան բռնության խնդիրը լուծելու հարցում կառուցակարգային (ինստիտուցիոնալ) կարողությունների պակասը շարունակում է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ապահովություն ու պաշտպանություն փնտրող կանանց համար: Յուրաքանչյուր տարի հազարավոր կանայք են ենթարկվում ընտանեկան բռնության, իսկ ավելի մեծ թվով կանայք էլ թաքցնում են այն խարանի ու ամոթի քողի ներքո կամ օգնություն փնտրելու անկարողության պատճառով: Զեկույցը գրելու պահին ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար չեն գործում պետության կողմից ֆինանսավորվող ապաստաններ, իսկ քչաթիվ ապահով տարածքները հասանելի են հկ-ների կողմից բացված ապաստաններում:[91] Ոլորտում աշխատող մասնագիտացած ծառայություններ մատուցողները, ներառյալ՝ սոցիալական աշխատողներն ու բուժաշխատողները, չունեն ընտանեկան բռնության դեպքում մասնագիտացած ծառայություններ մատուցելու համապատասխան որակավորում:[92] Շատ կանայք դիմում են ոստիկանություն ու արդարադատական համակարգ ապահովություն և աջակցություն ստանալու ու արդարության հասնելու համար, սակայն այս համակարգերը չեն պաշտպանում նրանց կամ ավելի վատ՝ կրկին զոհավորում են նրանց:[93]

Գենդերային կարծրատիպերի շրջանառությունը՝ բռնությունը լեգիտիմացնող երևույթ

Վերը նշված համակարգային խնդիրներն ավելի են ամրապնդվում գենդերային կարծրատիպերի պատճառով, որոնք պետական մակարդակից իջնում են հանրություն ու ստեղծում կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքի համար պարարտ հող: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) կոչ է անում ոչ միայն ստեղծել ընտանեկան բռնության դեմ պայքարի համապատասխան օրենսդրական ու կարգավորիչ դաշտեր, այլև գործադրել ջանքեր, որպեսզի այն կանխարգելվի, օրինակ՝ հանրային քարոզարշավների, ջատագովության

[89] Ջինա Սարգիսովա, Դիանա Ղազարյան, Գայանե Ավագյան, Լիլիթ Զաքարյան, Նվարդ Մանասյան և Վլադիմիր Օսիպով, Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների Ռազմավարական ծրագրի եվ Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց, ՄԱԿի զարգացման հիմնադրամ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի երեխաների հիմադրամ, 2015թ.

[90] Նույնը

[91] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.

[92] Նույնը

[93] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ.

ու կրթական միջոցառումների միջոցով:[94] 2011-2015թթ. ռազմավարական ծրագրերն, օրինակ, իրազեկման արշավներ էին նախատեսում, թեև մինչ օրս այս ուղղությամբ բացի կրթական փոքրամասշտաբ սեմինարներից շատ քիչ բան է արվել:[95] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համարում են, որ հաշվի առնելով կառավարության անդամների սերտ կապերը լրատվամիջոցների հետ և սուղ ռեսուրսներով քարոզարշավներ ստեղծելու ու տարածելու նրանց կարողությունը՝ հեշտորեն կարելի էր կազմակեպել կանանց աջակցման առկա ծառայությունների մասին իրազեկում, եթե լիներ քաղաքական կամք:[96]

Սակայն ճիշտ հակառակն է տեղի ունենում, կառավարության տարբեր պաշտոնյաների հետադիմական մեկնաբանություններն ու գործողությունները լայնորեն լուսաբանվում են լրատվամիջոցների կողմից, ներթափանցում հանրության գիտակցության մեջ՝ այսպիսով ամրապնդելով գենդերային կարծրատիպերն ու բռնությունը և խրախուսելով կանանց հնազանդ ու սպասարկու լինելը տղամարդկանց: Ցավալի իրականություն է, որ պետական շատ գործիչները կա՛մ գիտակից չեն կա՛մ իրենք են խստորեն դեմ կանանց իրավունքների պաշտպանությանը: Քաղաքական կամքի արտահայտումը արգելակվում է հենց կառավարության ներսում գտնվողների կողմից, իսկ քաղաքական կամքի բացակայությունը խրախուսում է կառուցակարգային (ինստիտուցիոնալ) սեքսիզմն ու անպատժելիության ու անտարբերության մթնոլորտը: Օրինակ, երբ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, Մարիոթ հյուրանոցում վեճի բռնվելով գործարար Սիլվա Համբարձումյանի հետ, բոլորի աչքի առջև հարվածեց նրա դեմքին, Հատուկ քննչական ծառայությունը դեպքի հետ կապված եզրակացրեց, որ նրա գործողությունները չեն համարվում ծեծ և քրեապես պատժելի արարք՝ այդպիսով ազդակելով, որ բռնությունը, նույնիսկ իշխանության բարձրագույն մակարդակում, հանդուրժելի է:[97]

◂ Ընտանեկան բռնության մասին օրենսդրության շուրջ նոր զարգացումներ

2000-ականների սկզբից ի վեր ընտանեկան բռնության շուրջ իրազեկվածությունը բարձրացնելու, բռնության ենթարկվածների համար ծառայություններ ստեղծելու և օրենսդրություն ընդունելու շուրջ աշխատել են մի շարք հկ-ներ՝ միջազգային գործընկերների աջակցությամբ: Հկ-ների նախագծած երկու օրինագիծ է մերժվել նախ 2009թ., հետո՝ 2012թ.: 2012թ. հունվարին այն մերժվել է հիմնավորմամբ, թե նման օրենքն անհրաժեշտություն չէ, արդեն իսկ պահանջ է ներկայացվել համապատասխան դրույթներ ներառել այլ օրենսդրական ակտերում: Արդարադատության նախարարությունը նաև պատճառաբանել է, թե բռնության ենթարկվածների համար նախատեսվող պաշտպանական որոշումները հակասում են անձի՝ սեփականության իրավունքին:[98]

Վերջին տարիներին ԵՄ-ն հայտարարել է, որ մարդու իրավունքներին ուղղված բյուջետային աջակակցության իր 11 միլիոն եվրոյի ծրագիրը կհաստատվի ընտանեկան բռնության մասին օրենսդրություն ընդունելու նախապայմանով:[99] Թեև պետությունը պարտավոր էր օրենքն ընդունել 2016թ. վերը նշված Ստամբուլի կոնվենցիան

[94] Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2016թ

[95] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ և Աննա Հարությունյան, հարցազրույց, 2017թ

[96] Նույնը

[97] CEDAW Հայաստանի գծով աշխատանքային խումբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ստվերային զեկույցը CEDAW կոնվենցիայի կոմիտեին, 2016թ

[98] Աննա Բարսեղյան, Հաջողված քարոզչություն՝ ընդդեմ ընտանեկան բռնության մասին օրենքի, Անալիտիկոն հանդես, 2017թ փետրվար

[99] Արմինե Սահակյան, ԵԵՄ-ն Հայաստանին առաջարկում է լավագույն առիթը՝ ընտանեկան բռնության մասին օրենքն ընդունելու համար, Հաֆինգթոն փոստ, 2016թ ապրիլի 10

ընդունելուց հետո, օրենքի ընդունումը հետաձգվեց մինչև 2018թ., իսկ ինչ վերաբերում է կոնվենցիային, մինչ այժմ էլ անհայտ է՝ արդյո՞ք ստորագրվի այն և եթե այո, ապա՝ երբ:[100] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քննադատում են ԵՄ-ին խնդրի նկատմամբ ցուցաբերած իր վերաբերմունքի պատճառով և իրենց դժգոհությունն են արտահայտում, որ ԵՄ-ն կարծես «դիտորդի» դիրք է բռնել:[101] Որոշ փորձագետներ համարում են, որ կոնվենցիայի ստորագրումը կհետաձգվի ևս մի քանի տարով:[102] Կանանց աջակցման կենտրոնի աշխատակից Հասմիկ Գևորգյանը հռետորական հարցադրում է անում. «Եթե Եվրամիությունը կառավարության վրա ճնշում չի գործադրել Ստամբուլի կոնվենցիան ընդունել նախքան օրենքի ընդունումը, ապա ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ճնշում կգործադրեն օրենքն անցկացնելու հարցում»:[103]

Արդարադատության նախարարությունն ընտանեկան բռնության մասին օրինագիծը հետ վերցրեց ու շրջանառությունից հանեց ճիշտ այն նույն պահպանողական զանգվածների աղմուկից հետո, ովքեր ընդդիմանում էին Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքին՝ միևնույն ժամանակ խոստանալով կազմակերպել հանրային լսումներ ու ստանալ քաղաքացիական հանրության արձագանքը:[104] Հաշվի առնելով երկրի կառավարման համակարգում տեղի ունեցած շարժը դեպի խորհրդարանական կառավարում՝ որոշ փորձագետներ համարում են, որ օրենքը չի ընդունվի մինչև 2018թ. սահմանված վերջնաժամկետը:[105] «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանը նշում է, որ «մեծ ծախսեր ենթադրող օրենքները միշտ էլ հետաձգվում են», քանի որ պետությունը հակված չէ ժամկետներ պահպանելուն, երբ ստիպված է մարդկային ու ֆինանսական մեծ ռեսուրսներ ծախսել, ինչը պետք է տեղի ունենա ընտանեկան բռնության մասին օրենքի դեպքում:[106]

Հակագենդերային քարոզչության ազդեցությունը ընտանեկան բռնության մասին օրենսդրության ընդունման վրա

Ինչպես Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի շուրջ աղմուկ-աղաղակի ժամանակ, նույն հակագենդերային դերակատարները հարձակում կազմակերպեցին ընտանեկան բռնության մասին օրինագծի վրա՝ պնդելով, թե այն ճանապարհ է բացում նույնասեռ ամուսնությունների ու երեխաներին ապօրինաբար ընտանիքներից զրկելու համար:[107] Ակտիվիստները համարում են, որ նման քարոզչության նպատակն է ընտանեկան բռնության մասին օրինագծի շուրջ հույզեր առաջացնել, ոչ թե որովհետև մարդիկ ընտանեկան բռնությունը չեն ընկալում որպես հասարակական խնդիր, այլ ավելի շուտ ԵՄ աջակցությունն օրենքին ընկալում են որպես արտաքին միջամտություն. այսինքն՝ օրենքը հերթական առիթն է հանրությանը քաղաքականապես պատեհ պահերին մանիպուլացնելու համար:[108] Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համակարգող Զարուհի Հովհաննիսյանի կարծիքով՝ դիսկուրսը մանիպուլացնելը հեշտությամբ ստացվել է, քանի որ «երեխաները դիտարկվում են որպես ծնողների սեփականություն, ոչ թե քաղաքացիներ, այսինքն՝

[100] Գայանե Հովակիմյան, հարցազրույց, 2017թ.
[101] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[102] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[103] Նույնը
[104] Գայանե Աբրահամյան, Հայաստան: Արդյո՞ք ընտանեկան բռնության մասին մտահոգությունը լիբերալ արժեք է, Eurasianet, 2017թ. փետրվարի 9
[105] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ. և Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[106] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[107] Աննա Նիկողոսյան, Լռության մեջ պատսպարված իշխանություն, Նորմեր և ընտանեկան բռնություն կանանց միջև, Անալիտիկոն հանդես, 2017թ. փետրվար
[108] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ. և Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» անդամները երթ են կազմակերպում գենդերային բռնության դեմ Երևանում: (Նկարը Ասպարեզից է վերցված:)

վերաբերվում են այնպես, կարծես մարդկանց զրկում են իրենց գույքից»:[109]

Պատգամավոր Կարինե Աճեմյանի կարծիքով՝ խորհրդարանում ընտանեկան բռնության մասին օրինագծի շուրջ քննարկումները նույն իմաստային երանգներն են ստացել, ինչ Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի ժամանակ էր, այսինքն՝ դրանք վերածվել են «ռուսամետ ու եվրոպամետ ուժերի միջև պայքարի»:110 Փորձագետները այս քաղաքական զարգացումը կապել են նույն դերակատարների հետ, ովքեր մղել են հակագենդերային պատերազմը: Նրանք նշում են. «Կրեմլի հովանավորությունը վայելող նույն խմբերը սկսեցին ակտիվորեն քարոզել ընտանեկան բռնությունը կանխարգելող օրենսդրության դեմ, ինչն ուղղակիորեն ազդեց օրենսդիր գործընթացի վրա՝ նախ՝ հանրային քննարկումների դաշտից տեղափոխվելով վախերի ու ֆոբիաների տիրույթ, ապա նաև՝ հետաձգելով օրենքի ընդունումը անորոշ ժամանակահատվածով»:111 Միևնույն ժամանակ, պետական որոշ ներկայացուցիչներ սկսեցին հակադարձել ընտանեկան բռնության օրինագծի մասին պահպանողական խմբերի կողմից շահարկվող առասպելներին, մասնավորապես՝ պնդումներին, թե օրենքը երեխաներին կխլի ընտանիքներից,[112] մի բան, որ հիմնականում տեղի չունեցավ 2013թ. գենդերային հավասարության մասին օրենքի ընդունման ժամանակ:[113]

109 Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
110 Գայանե Աբրահամյան, Հայաստան: Արդյո՞ք ընտանեկան բռնության մասին մտահոգությունը լիբերալ արժեք է, Eurasianet, 2017թ. փետրվարի 9
111 Զարուհի Հովհաննիսյան, Գենդերային բռնությունը՝ որպես բռնության մշակույթի արտահայտություն և կառուցվածքային բռնության դրսևորում, Անալիտիկոն հանդես, 2017թ. փետրվար
112 Գայանե Աբրահամյան, «Չափազանց վտանգավոր». Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված նոր օրենքը Հայաստանում դատապարտվում է «չափազանց եվրոպական» լինելու պատճառով, Codastory, 2017թ. փետրվարի 12
113 Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.

Ընտանեկան բռնությունից տուժածների իրավունքների հարցում հետընթաց Ռուսաստանում և դրա հնարավոր հետևանքները Հայաստանում

Մտահոգիչ է, որ Ռուսաստանում գործող ընտանեկան բռնության մասին օրենքի փոփոխություններ տեղի ունեցան, որոնցով ապաքրեականացվեց մարմնական լուրջ վնասվածքներ չհասցնող, այսինքն՝ հիվանդանոցային բուժօգնության կարիք չառաջացնող բռնությունը, իսկ ոստիկանություն բողոք ներկայացնելու դեպքում՝ տուժողին պարտավորեցվեց բժշկական ու ապացուցողական բոլոր տվյալները հավաքագրել ու ներկայացնել սեփական նախաձեռնությամբ:[114] Թեև այս փոփոխությունները բռնության ենթարկվածների իրավունքների հարցում ակնհայտ հետընթաց էին, դրանք գովերգվեցին իբրև ընտանեկան հարցերը պետության միջամտությունից պաշտպանող միջոց մի հասարակությունում, որտեղ մարմնական պատիժը համարվում է անօտարելի ծնողական իրավունք:[115] Հետաքրքրական է, որ այս որոշման շուրջ տարվող քարոզչությունը շատ նման է Հայաստանում պահպանողական կուսակցությունների քարոզչությանը, որոնք բահայտորեն պատճենեցին այն ապատեղեկատվությունը, թե ընտանեկան բռնության մասին օրենքը պետությանը կզիներ երեխաներին իրենց ընտանիքներից ապօրինաբար խլելու հնարավորությամբ:

Ռուսաստանյան նոր զարգացումները կարող են Հայաստանում ընտանեկան բռնության ոլորտում բարեփոխումների վրա ազդեցություն ունենալ այնպես, ինչպես տեղի ունեցավ գենդերային հավասարության ու հակախտրականության մասին օրենքների դեպքում, թեև փորձագետներն այս հարցի շուրջ ունեն տարամիտվող կարծիքներ: Թեև հարցմանը մասնակցած բոլոր փորձագետները համաձայն են, որ քաղաքական զարգացումները մեծապես անկանխատեսելի են, նրանց կարծիքները կիսվում են, թե նոր օրինագծի քննարկման ժամանակ հակագենդերային քարոզչությունը կազդի՞ դրա ընդունման վրա, թե՝ ոչ ոմանք կարծում են, որ այն կընդունվի և մեծամասամբ ազդեցություն չի կրի աղմուկ-աղաղակից, իսկ մյուսներն իրենց մտահոգությունն են արտահայտում, որ կիրահրվի հիստերիա, որն էլ կվտանգի օրինագծի ընդունումն ու իրականացումը՝ հավանաբար ավելի երկարացնելով գործընթացը կամ ճանապարհ բացելով նոր դրույթների ավելացման համար, որոնցով առաջարկվող մեխանիզմները շատ ավելի քիչ կլինեն, ու օրենքը մեծապես դեկլարատիվ բնույթի կլինի:

Անկախ ֆեմինիստ Աննա Նիկողոսյանի կարծիքով՝ դժվար է կանխատեսել, թե ռուսաստանյան զարգացումներն ինչ ազդեցություն կունենան, քանի Հայաստանը գտնվում է «երկու գերտերություններին հավասարակշռելու կարգավիճակում», թեև ըստ նրա՝ ընտանեկան բռնության մասին օրինագիծը կընդունվի առանց մեծ դիմադրության, բացառությամբ՝ եթե խոշոր քաղաքական տեղաշարժեր տեղի ունեցած լինեն:[116] Շատերն են միակարծիք, որ հակաքարոզը զգալիորեն ավելի քիչ կլինի այն պատճառով, որ ԵՄ բյուջետային աջակցությունն ու նախապայմանի առկայությունը բավարար խթան են օրենսդրությունն անցկացնելու համար, ու քանի որ ավելի քան տասը տարվա ակտիվ իրազեկման աշխատանքներից հետո ընտանեկան բռնության թեման այլևս այդչափ խարանված չէ:

[114] Շոն Ուոքեր, Ընտանեկան բռնության մասին օրենքը մեղմացնելու՝ ռուսաստանյան իշխանություններ քայլը զայրույթ է բարձրացրել, Գարդիան, 2017թ. հունվարի 19

[115] Նույնը

[116] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.

◂ Ընտանեկան բռնության մասին ներկայիս օրինագծի հետ կապված խնդիրները

Հարցազրույցին մասնակցած քաղաքացիական հասարակության մի քանի ներկայացուցիչներ կիսում են այն մտահոգությունը, որ օրինագծի մշակման ընթացքում քաղաքացիական հասարակության բովանդակային մասնակցության պայմաններ չստեղծվեցին, և օրինագիծը չունի բռնության ենթարկվածների իրավունքների պաշտպանության պատշաճ երաշխիքներ: Ինչ վերաբերում է օրինագծին, մտահոգիչ է ընտանեկան բռնությունը չքրեականացնելը,[117] ինչի արդյունքում հանրությանը չի հղվում բռնության անհանդուրժելիության մասին ուժեղ ազդակ:[118] Հարցմանը մասնակցած քաղաքացիական հանրության մի քանի ներկայացուցիչներ բարձրաձայնել են մտահոգություն, որ օրինագծով չեն ճանաչվում ընտանեկան բռնության ռիսկի նկատմամբ առավել խոցելի անձանց խմբերը և չեն նախատեսվում պաշտպանական որոշումներ ենթադրող կարգավորիչ մեխանիզմներ, իսկ պաշտպանական որոշումները կարող են չեղարկվել դատարանի կողմից, եթե բռնարարն ու տուժածը հաշտվեն: Վերջին բացը հատկապես մտահոգիչ է, քանի որ ընտանեկան բռնության ենթարկված անձինք արդեն իսկ մանիպուլացվում ու վերահսկվում են իրենց բռնարարների կողմից, ու օրինագծի ներկայիս դրույթներով կրկին բռնության զոհ դառնալու հնարավորությունը չի բացառվում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ շատ են մտահոգությունները, որ օրենքը մեծապես դեկլարատիվ կլինի: Կանանց աջակցման կենտրոնի աշխատակից Հասմիկ Գրիգորյանը նշում է, որ կառավարությունը կարող է Ստամբուլի կոնվենցիայի որոշ դրույթներ չստորագրել, ինչը միջազգային իրավունքի տեսանկյունից օրինական է:[119] «Իրավունքի ուժ» կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանը նշում է, որ տարբերությունը չնչին է, նույնիսկ եթե օրենքը տուժողակենտրոն լինի, միևնույն է, քիչ ջանքեր են ներդրված ընտանեկան բռնություն կանխարգելելու ուղղությամբ, իսկ իրավապահ համակարգի ներկայացուցիչների համար «կարեկցանքը կամ անկեղծությունը դրդապատճառներ չեն, ոչ էլ՝ իրենց պարտականությունները կատարելու համապատասխան գիտելիքը կամ կարողությունն ունեն»:120 Լաֆայեթ քոլեջից Կատալին Ֆաբիանը հետխորհրդային Եվրասիայում ընտանեկան բռնությանն առչնվող քաղաքականության վերաբերյալ իր հոդվածում նշում է. «Առանց ճգնաժամային կենտրոններին ուղղվելիք զգալի պետական ֆինանսավորման ու օրենքի կիրարկման և առանց ԽԾԲ-ականությունից, «տղայական ընկերական ցանցերից», կոռուպցիայի այլ տեսակներից զերծ պրոֆեսիոնալ վարչարարության՝ ընտանեկան բռնության դեմ օրենքները և կանանց իրավունքներն՝ ընդհանուր առմամբ կմնան թղթի վրա միայն՝ որպես ժողովրդավարության ու մարդու իրավունքների մասին միջազգային հանրությանը ցուցադրելու առարկա:[121]

[117] Գայանե Հովակիմյան, հարցազրույց, 2017թ. և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[118] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[119] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[120] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ
[121] Կատալին Ֆաբիան, Ընտանեկան բռնությունը հետխորհրդային երկրներում. տեղական ակտիվիզմը, պետական քաղաքականություններն ու գլոբալ ուժերը, Բլումինգթոն, Ինդիանայի համալսարանի հրատարակչություն, 2010թ.

դ. Սեռական ու վերարտադրողական առողջություն և իրավունքներ



Սեռական կրթության ու հարակից խնդիրների հետ կապված դրությունը

2008թ. Հայաստանի կառավարությունը հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում ներդրեց «Առողջ ապրելակերպ» առարկան, որն ընդգրկում է առողջությանն ու սեռական կրթությանը, հատկապես՝ ՄԻԱՎ կանխարգելմանն առչնվող թեմաներ:[122] Այս առարկայի և դրա դասավանդման հետ կապված բազում խնդիրներ կան. 1. սեռական ու վերարտադրողական առողջությանն ու իրավունքներին վերաբերող թեմաները ներկայացված են այլ թեմաների, օրինակ՝ սննդակարգի ու մարմնամարզության հետ միասին: Այս բոլոր թեմաների համար հատկացված է 14 դասաժամ, ինչը հնարավորություն չի տալիս, որ աշակերտները բավարար ժամանակ ունենան սեռական կրթություն ստանալու համար: 2. Աշակերտներին չի տրամադրվում որևէ դասագիրք կամ ուսուցողական նյութ, իսկ ինչպես վկայում են հետազոտությունները, դասավանդելիս՝ ուսուցիչները կրթական ծրագրին չեն հետևում: 3. Դասը չի գնահատվում, աշակերտների համար չկան դրան լրջորեն վերաբերվելու բավարար խթաններ: 4. Չկա մոնիթորինգի ու գնահատման համակարգ, որը կգնահատի, թե աշակերտները առարկայից որքան գիտելիք են ստացել, և 5. Մարմնամարզության ուսուցիչները, ում հանձնարարված է առարկայի դասավանդումը, չունեն համապատասխան գիտելիքներ, դրսևորում են վնասաբեր նախապաշարումներ ու առարկան դասավանդելու շատ քիչ շահագրգռվածություն ունեն, քանի որ դա ընկալվում է որպես հավելյալ չվարձատրվող աշխատանք:[123]

Հաշվի առնելով պատշաճ վերահսկողության պակասը՝ առարկան մնացել է առանձին ուսուցիչների հույսին, ովքեր կամ օգտվում են դասավանդման ուղեցույցից ու դասավանդում իրենց հայեցողությամբ՝ ինչ կկամենան, կամ առարկան ընդհանրապես չի դասավանդվում, եթե դպրոցի ղեկավարությունը դրան կարևորություն չի տալիս:[124] Սա արտացոլում է արգելված համարվող թեմաների, մասնավորապես՝ այս դեպքում սեռական կրթության շուրջ ազատորեն խոսելու ավելի լայն հասարակական անհարմարությունը:[125] ՀՀ կրթության նախարարությունը վերջերս հանձնարարել է առարկայի դասավանդման ուղեցույցի վերախմբագրում, սակայն այն շարունակում է անտեսել այն առանցքային խնդիրը, որ ուսուցիչների մոտ կա պատրաստվածության ու զգայունության պակաս:[126]

Ուստի զարմանալի չէ, որ սեռական առողջության ու իրավունքների մասին շարունակում են թևածել

[122] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ
[123] Անուշ Պողոսյան, Նինա Հարությունյան, Լիլիթ Գրիգորյան, Անի Ջիլոզյան, Շուշան Քյուրքչյան և Գոհար Փանաջյան, ՀՀ դպրոցներում վերարտադրողական առողջության դասավանդման գնահատման արդյունքների վերլուծություն, 2013թ
[124] Անուշ Ալեքսյանյան, հարցազրույց, 2017թ
[125] Անուշ Պողոսյան, հարցազրույց, 2017թ
[126] Անուշ Ալեքսյանյան, հարցազրույց, 2017թ

արմատացած առասպելները: Վերջերս անցկացված մի հետազոտության համաձայն՝ հարցվածների ճնշող մեծամասնությունը (85.9%) միակարծիք է, որ կինը մինչև ամուսնությունը պետք է կույս մնա, ինչն ըստ էության նշանակում է մերժել սեփական մարմինն ու սեռականությունը վերահսկելու՝ կանանց իրավունքը:[127] Այդ նույն հարցմանը մասնակցած տղամարդ հարցվողների շուրջ կեսը հայտնել է, որ պահպանակներ երբևէ չի գործածում, իսկ մեկ-քառորդից քիչ ավելին նշել է, որ վերջին 12 ամսվա ընթացքում հազվադեպ է գործածել պահպանակ, ինչը մտահոգիչ է՝ հատկապես հաշվի առնելով, որ հարցվածների 30 տոկոսը նշել է, որ իրենց վերջին սեռական հարաբերությունը եղել է ոչ թե իրենց զուգընկերոջ, այլ՝ ուրիշ անձի հետ, ներառյալ՝ պատահական սեռական զուգընկերոջ և սեքս աշխատողի հետ:[128]

Հղիության արհեստական ընդհատման ու հակաբեղմնավորիչների մասին

Վերջերս անցկացված հարցման համաձայն՝ երբևէ զուգընկեր ունեցած կանանց գրեթե նույն տոկոսն է (46.6%) նշել, որ իր կյանքում ինչ-որ պահի հղիություն է ընդհատել, ինչ հղիություն չընդհատածները (45.8%):[129] Հայաստանում հղիության արհեստական ընդհատման մասին օրենքն ազատական է՝ ժառանգված Խորհրդային Միությունից, ներառյալ՝ որոշակի հանգամանքներում նաև սաղմնավորման 12-րդ և 22-րդ շաբաթներում հղիությունն ընդհատելու թույլատրելիությունը: Խորհրդային Միության տարիներն ծնելիություն խրախուսող պրոպագանդան կանանց վախ էր ներշնչում հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ:[130] Սակայն աբորտները շարունակում էին տարածված լինել, քանի որ դրանք մատչելի էին ու հասանելի, մինչդեռ հակաբեղմնավորման ժամանակակից միջոցները հեշտությամբ հասանելի չէին, ու որոշ հակաբեղմնավորման միջոցների նկատմամբ կար լայնատարած անվստահություն:[131]

Անկախությունից ի վեր հղիության արհեստական ընդհատումը ընտանիքի պլանավորման ամենատարածված մեթոդներից է, քանի որ հեշտորեն հասանելի ու մատչելի է, հանրության կողմից ընդունելի է, իսկ հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների մասին տեղեկացվածությունը ցածր է, և թեև դրանք հասանելի են, ապա մատչելի չեն, իսկ հանրությունը հակված է դրանց շուրջ առասպելներին հավատալուն:[132] Սա է բացատրում Հայաստանում հակաբեղմնավորիչների օգտագործման 20 տոկոս ցածր մակարդակը, ինչն իր բացասական հետևանքներն է ունենում կանանց սեռական ու վերարտադրողական առողջության վրա, միևնույն ժամանակ բարձր է մնում հղիության արհեստական ընդհատումների մակարդակը:[133] Ավելին, մարգինալացված կանայք, օրինակ՝ հաշմանդամություն ունեցողները, կրկնակի դժվարություններ են կրում սեռական ու վերարտադրողական առողջության ծառայություններ ձեռք բերելիս՝ կապված դրանց առկայության, մատչելիության ու հասանելիության հետ, ինչպես նաև բժշկական կենտրոններում իրենց նկատմամբ խտրական վերաբերմունքի հետ:[134]

Աբորտների վերաբերյալ տվյալները ամենայն հավանականությամբ թերհաշվարկված են՝ պետության կողմից տվյալների հավաքագրման արդյունավետ մեթոդաբանության բացակայության և արտահիվանդանոցային պրոցեդուրաները, ներառյալ՝ տարածված համարվող դեղորայքային

[127] Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2016թ.
[128] Նույնը
[129] Նույնը
[130] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.
[131] Անի Ջիլոզյան և Վիկտոր Աղաջանյան, Արդյո՞ք հղիության արհեստական ընդհատումները նվազում են Հայաստանում, Ընտանեկան պլանավորման հետազոտություններ, 2016թ, համար 42(2):163-178
[132] Նույնը
[133] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ.
[134] Զառա Բաթոյան, հարցազրույց, 2017թ.

ընդհատումները չգրանցելու պատճառով:[135] Համապատասխան ցուցումից դուրս «Սայտոտեկ» (միզոպրոստոլ) դեղամիջոցի օգտագործման բարձր մակարդակ է գրանցվում այն երկրներում, որտեղ հղիության արհեստական ընդհատումները կատարվում են գաղտնի, իսկ դեղամիջոցը լայնորեն հասանելի է լինում դեղատներում, հաճախ՝ առանց դեղատոմսի:[136]

Փորձագետները համարում են, որ Հայաստանում վերջին տասնամյակի ընթացքում պաշտոնապես գրանցված հղիությունների արհեստական ընդհատման թվի զգալի անկումը պայմանավորված է «Սայտոտեկ» (միզոպրոստոլ) դեղամիջոցի լայն հասանելիությամբ:[137] 2014թ. օգոստոսին արգելվեց դեղամիջոցի վաճառքն առանց դեղատոմսի, թեև ոչ պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ առանց դեղատոմսի դրա վաճառքը շարունակվում է:[138] Հաշվի առնելով մոնիթորինգի ու գնահատման բացակայությունը՝ պարզ չէ, թե այդ արգելքը որքանով է նպաստել պրակտիկայի նվազմանը և արդյո՞ք այն նաև հանգեցրել է կանանց վերարտադրողական վերահսկողության ընտրության հնարավորությունների կրճատման: Հայտնի է, որ բժիշկների համար ֆինանսապես շահավետ են հղիության վիրահատական ընդհատումները, ուստի և նրանք ավելի քիչ են շահագրգռված խրախուսել դեղորայքային ընդհատումը: Ավելին, Հայաստանի որոշ շրջաններում ժամանակակից բժշկական սարքավորումների բացակայությունը վիրահատական ընդհատման տարբերակը դարձնում է պակաս ապահով:[139] Կարևոր է նաև նշել, որ թեև հղիության դեղորայքային ընդհատման տարբեր ռեժիմների կոմբինացիան ավելի արդյունավետ է, քան «Սայտոտեկ»-ը (միզոպրոստոլ) առանձին, Հայաստանում կանայք հակված են չօգտվել այդ ռեժիմներից, քանի որ դրանք զգալիորեն ավելի բարձր արժեք ունեն, իսկ ոչ պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ կանայք հաճախ վիրահատական ընդհատման են դիմում դեղորայքային ընդհատման ձախողման դեպքում:

Ներկայում Հայաստանը համաշխարհային մակարդակով դասվում է արական ծնելիության երրորդ բարձր մակարդակում, ընդ որում՝ Գեղարքունիքի մարզում տղաների ծնելիությունը առավելապես բարձր է՝ 124 տղա է ծնվում 100 աղջկա դիմաց:[140] Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը հայկական հասարակությունը նորմալ է ընդունում և շատերն այս երևույթը դիտարկում են որպես ավանդույթի պահպանում:[141] Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են, որ կանայք այս հարցի շուրջ որոշում կայացնելու մեջ ուժ չունեն ու ենթարկվում են իրենց ամուսինների և սկեսուրների ճնշմանը՝ ընդհատել իգական պտուղների հղիությունը, ինչն էլ կապված է տարածված հասարակական նորմերի հետ, որոնք փորձում են վերահսկել կանանց անձնական որոշումները՝ կապված իրենց մարմինների ու սեռականության հետ ու տղա երեխաներին տալիս են հարաբերականորեն ավելի բարձր արժեք:[142]

[135] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ.
[136] Սուշիլա Սինկխ, Լիզա Ռեմեզ և Ալիսա Թարթալիոնե, 2010թ., Աբորտի տարածվածության և աբորտով պայմանավորված մահացության գնահատման մեթոդաբանություններ. Ակնարկ, Նյու Յորք Guttmacher Institute և Փարիզ Բնակչության գիտական ուսումնասիրության միջազգային միություն
[137] Ինննա Սակկի, Զարուհի Մկրտչյան, Նունե Դոլյան, Էյմի Արմիստադ, 2008, Հակաբեղմնավորիչների հասանելիությունն ու մատչելիությունը Հայաստանի դեղատներում և առաջնային բուժօգնության հաստատություններում, իրավիճակի նկարագրություն, NOVA ծրագիր, ԱՄՆ ՄԶԳ.
[138] Մարիաննա Գրիգորյան, Հայաստան տնային պայմաններում հղիության արհեստական ընդհատման դեղահաբերը հեշտորեն ձեռքբերելի են՝ չնայած արգելքին, Eurasianet,2014թ սեպտեմբերի4
[139] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ
[140] Քրիստոֆ Գիլմոտո, Ծնելիության սեռային անհավասարակշռությունը Հայաստանում Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2013թ
[141] Անի Ջիլոզյան և Վիկտոր Աղաջանյան, Արդյո՞ք հղիության արհեստական ընդհատումները նվազում են Հայաստանում, Ընտանեկան պլանավորման հետազոտություններ, 2016թ, համար 42(2):163-178
[142] Նույնը

Հղիության արհեստական ընդհատման հասանելիության խոչընդոտների շատացում

2016թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ նոր դրույթներ ներմուծեց Մարդու վերարտադրողական առողջության ու իրավունքների մասին օրենքում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն այս քայլը գնահատում են որպես հեշտ եղանակ Հայաստանի ու միջազգային հանրություններին ապացուցելու, որ ՀՀ կառավարությունը լուծում է ծանրագույն ժողովրդագրական հետևանքների բերող մի խնդիր՝ առանց ծախսատար գործունեություն համարվող՝ լայնամասշտաբ իրազեկման աշխատանքների:[143] Օրենքի նոր դրույթները հստակորեն արգելում են հղիության արհեստական ընդհատումները՝ պայմանավորված սեռով, սակայն չեն քրեականացնում դա. աբորտի դիմող կնոջ համար սահմանում են 3 օրվա սպասման ժամանակահատված և պարտադիր խորհրդատվություն, բարձրացնում են բժիշկների վարչարարական պարտականությունները, ներառյալ՝ սահմանում տույժեր սեռով պայմանավորված ընդհատում իրականացնելու համար: Մինչև փոփոխությունների ընդունվելը խոսք էր գնում ավելի ծայրահեղ միջոցներ սահմանելու մասին, ներառյալ՝ աբորտների համընդանուր արգելքի ու ուլտրաձայնային զննության արգելքի մինչև հղիության 22-րդ շաբաթը: Սակայն այս մտադրությունները մի կողմ դրվեցին շահագրգիռ հիմնական կողմերի հետ քննարկումներից հետո:[144]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հիմնականում դեմ են իրավական նոր սահմանափակումներին և կարծում են, որ թեև օրենքի հռչակած նպատակն էր նվազեցնել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունը, իրականում դրա նպատակն է սահմանափակել կանանց վերարտադրողական վերահսկողության տարբերակները: Անկախ ֆեմինիստ Աննա Նիկողոսյանի կարծիքով՝ «սեռով պայմանավորված աբորտի ու ընդհանուր առմամբ աբորտի քննադատության միջև նուրբ սահմանագիծը» շատ խնդրահարույց է:[145] Կանանց աջակցման կենտրոնից Անուշ Պողոսյանի կարծիքով էլ՝ սա հղիության արհեստական ընդհատումն ընդհանուր առումով ճնշելուն ուղղված քայլ էր, քանի որ որևէ տրամաբանություն չկա սեռով պայմանավորված աբորտն արգելելու մեջ՝ հաշվի առնելով, որ օրենքն արդեն իսկ արգելում է հղիության արհեստական ընդհատումը հղիության 12-րդ շաբաթից հետո: Սա այն ժամանակն է, երբ ուլտրաձայնային սարքի վրա հնարավոր է լինում տեսնել պտղի սեռը:[146]

Կրթության փորձագետ Նվարդ Մանասյանի կարծիքով՝ օրենքի նոր դրույթները, որոնք չեն բխում մարդու իրավունքներից ու ֆեմինիստական տեսանկյունից, հավելյալ բեռ են դնում մայրերի ու բուժանձնակազմի վրա և ցույց են տալիս, որ չի ընկալվել երևույթի կապը «կանանց ու աղջիկների արժեքի» հետ:[147] Նա հավելում է, որ պետությունը «զգույշ խաղ» է խաղացել ու չի մտել «կյանքին կողմ» և «ընտրության հնարավորություններին կողմ» բանավեճի մեջ, ինչպես նաև քաղաքացիական հանրությանը ներգրավել է նոր դրույթների շուրջ երկխոսության մեջ:[148]

Համաձայն նոր դրույթների՝ հղիության արհեստական ընդհատման ծառայություն մատուցողները նախքան միջամտությունը կատարելը պարտավոր են կնոջը «հաղորդել ընդհատման բոլոր բացասական հետևանքների

[143] Անանուն, հարցազրույց, 2017թ.
[144] Նույնը
[145] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[146] Անուշ Պողոսյան, հարցազրույց, 2017թ.
[147] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[148] Նույնը
[149] Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ, : http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=38184,

մասին տեղեկատվություն»:[149] Հատկանշական է, որ աբորտի հակաքարոզչությունը վերջին տարիներին մեծացել է, ինչը վկայում են խոշոր լսարան ունեցող լրատվամիջոցներով այդ թեմայով տարածվող հոդվածները:[150] Հաշվի առնելով վերջին տարիներին աբորտի շուրջ հակաքարոզչության տարածվածությունը, որը սկիզբ է առնում վերին օղակներում որոշում կայացնողներից ու իջնում հանրային մակարդակ, կարելի է պնդել, որ աբորտի այդ նկարագրումները դե ֆակտո առաջ են մղում պարտադիր խորհրդատվության մի տեսակետ, թե ինչպես պետք է բուժաշխատողները այդ խորհրդատվությունն իրականացնեն՝ չնայած այս առումով ցուցումների ու կոնկրետության բացակայությանը: Ավելին, այս հետազոտությանը մասնակցած քաղաքացիական հասարակության մի քանի ներկայացուցիչներ հայտնեցին, որ իրենց կարծիքով՝ այն կանանց, ովքեր աբորտի են դիմում իրենց զուգընկերոջ կամ ընտանիքի անդամների ճնշմամբ, եռօրյա սպասման ժամանակահատվածը հետ չի պահի, քանի որ շատ խորն է թափանցած այն մտածողությունը, որ տղաներն ինքնին ավելի արժեքավոր են, քան աղջիկները: Այսպիսով, շատերն են առաջարկում այն վարկածը, որ եռօրյա սպասման ժամանակահատվածն ու ամենայն հավանականությամբ կողմնակալ խորհրդատվությունն ավելի շուտ կծառայեն կանանց մանիպուլացնելուն ու աբորտի խարանը մեծացնելուն:

Վերջին ամիսներին ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը հայտարարում է 2013-2016թ. ընկած ժամանակահատվածում սեռով պայմանավորված աբորտների 1 տոկոսով նվազեցման մասին, այսինքն՝ 100 աղջկան ընկնող 114 տղայի դիմաց այժմ գրանցվում է 112 տղա, թեև այս տվյալների հետ կապված հետազոտությունը դեռևս չի հրապարակվել:[151] Քաղաքացիական հասարակության որոշ անդամներ կասկածում են վիճակագրության ճշտությանը,[152] ոմանք էլ հավաստիացնում են, որ այդ ժամանակահատվածը չափազանց կարճ է այնպիսի եզրակացություն անելու համար, որ ավելի ցածր ցուցանիշները ներկայացնում են երևույթի զգալի կրճատում:[153] Մյուս կողմից, կանանց իրավունքների պաշտպանները համարում են, որ թեև վերը նշված օրենսդրական փոփոխությունները չեն թիրախել սեռով պայմանավորված աբորտների կրճատումը, աբորտների մակարդակը կարող է ընդհանուր առմամբ նվազել՝ նման ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրների պատճառով:[154] Քաղաքացիական հանրության ներկայացուցիչները համարում են, որ մարգինալացված ու աղքատ համայնքների կանայք իրենց առավել խոցելի լինելու պատճառով կրելու են ամենածանր հետևանքները, քանի որ ապահով աբորտի ծառայություններ ստանալու հարցում նրանք խոչընդոտների են հանդիպելու:[155]

Քանի որ հղիության արհեստական ընդհատման հետ կապված օրենսդրական փոփոխություններն ընդունվել են վերջերս, նաև չկա դրանց իրականացման պատշաճ մոնիթորինգ, դրանց հետևանքների գնահատումը հնարավոր է անել ապագայում միայն: Այդուհանդերձ, կանանց իրավունքների պաշտպանները համաձայն են, որ փոխանակ հասցեագրելու տղա երեխաների նախընտրության խորքային պատճառները, պետական մոտեցումը բարձրացնում է կոռուպցիայի ու ոչ ապահով աբորտների իրականացման ռիսկը, քանի որ

[150] Մարկ Մայքլ և այլք, 2013, Կովկասում չծնված աղջիկների առեղծվածը. սեռերի հարաբերակցության վերլուծություն՝ ըստ ծնվելու հերթականության, International Perspectives on Sexual and Reproductive Health, 39(2):97–102.
[151] ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Մամլո ասուլիս Հայաստանում պտղի ընտրության շուրջ նոր զարգացումների թեմայով, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2017թ. փետրվարի 17
[152] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[153] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[154] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ. և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[155] Նինա Թեգարթի, Ինչպես է Հայաստանը փորձում կանգնեցնել սեռով պայմանավորված աբորտները, News Deeply, 2017թ. ապրիլի 7

այն չի անդրադառնում սեռով պայմանավորված աբորտների հիմնական պատճառին՝ վնասաբեր գենդերային կարծրատիպերին ու նորմերին:[156] Աբորտի հասանելիության արգելքների ստեղծումը զարմանալի չէ: Թեև մինչև վերջին տարիները ժողովրդագրական խնդիրները այդչափ չէին քաղաքականացվել, իշխանությունները աբորտի հակաքարոզչության մեջ խաղարկել է հենց այս մտահոգությունները,[157] և այժմ աբորտի խարանը ավելի ու ավելի է մեծանում,[158] միևնույն ժամանակ «ուժեղ, ձայն ու իշխանություն» ունեցող կրոնական հաստատությունները առաջ են մղում աբորտի առհասարակ արգելում:[159] Սա ավելի մեծ հավատ է ներշնչում հօգուտ այն փաստարկի, որ բժիշկները նոր օրենսդրական դրույթներով սահմանված պարտադիր խորհրդատվության ժամանակ կընդունեն աբորտին դեմ դիրքորոշում,[160] չնայած շատ բժիշկների համար ֆինանսապես շահավետ է աբորտներ անելը: Քանի որ հայաստանյան համատեքստում թափանցիկության պակաս կա, ակտիվիստները մեծամասամբ համարում են, որ բժիշկները հեշտությամբ կարող են շրջանցել այս խնդիրը, և փոքր է հավանականությունը, որ նրանք օրենսդրական այս գործընթացն իրականում կկատարեն:

Փորձագետները այս նոր օրենսդրական դրույթները տեսնում են որպես սայթաքուն թեքահարթակ, որը կապված է վերազգային միտումների հետ: «ԱՍՏՐԱ» ցանցի տվյալներով Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում գրանցվել է աբորտի հասանելիության սահմանափակում, իսկ «ժողովրդագրական ճգնաժամի շուրջ ընդհանուր մթնոլորտը հակված է շատ կառավարություններում սնուցել «ընտրության հնարավորություններին դեմ» օրակարգը»:[161] Կրթության ոլորտի փորձագետ Նվարդ Մանասյանը պնդում է. «Եթե չլինի այլընտրանքային դիսկուրս և կանանց շարժում, եթե մենք չաճեցնենք կանանց մի նոր սերունդ, ովքեր իրազեկ են իրենց մարմնի հետ կապված որոշումներն ինքնուրույն որոշելու իրավունքից, վերջում հայտնվելու ենք առանց աբորտի իրավունքների վիճակում»:[162]

Վերջերս աբորտի սահմանափակման ուղղությամբ Ռուսաստանում տեղի ունեցող գործողությունները սկսել են ավելի խորքային ու համատարած դառնալ՝ 2011թ. սկսվելով աբորտն իրականացնողների համար սահմանված պահանջով, որպեսզի նրանք աբորտի դիմող կանանց աբորտը բնութագրեն որպես առողջության համար վտանգավոր,[163] մինչև 2015թ. ընդունված օրենքը, որով պետական կլինիկաներից դուրս իրականացվող աբորտների համար սահմանվեցին վարչական տուգանքներ, ինչպես նաև սահմանափակումներ մտցվեցին առողջության ապահովագրության ծածկույթում՝ կապված աբորտների հետ, նաև առաջարկվեց արգելել հիրատապ հակաբեղմնավորիչների նշանակումն առանց դեղատոմսի ու պարտադիր դարձավ աբորտից առաջ ուլտրաձայնային հետազոտություն անցկացնելը:[164] Դեռևս պարզ չէ, թե որքանով է ռուսաստանյան

[156] Կանանց ռեսուրսային կենտրոն-ի հայտարարությունը, https://www.facebook.com/inMarmin/. «Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ-ի անձնակազմը իր մտահոգությունն է հայտնում տվյալ օրենքի փոփոխությունների համար, քանի որ հասկանում է, որ օրենքի նշված փոփոխությունները կատարվել են հղիության արհեստական ընդհատումը առավել վերահսկելի և բարդ դարձնելու համար: Հիշեցնենք, որ բոլոր այն երկրներում, որտեղ արգելված է հղիության արհեստական ընդհատումը կամ խոչընդոտներ կան տվյալ օրենքի հետ կապված, ծնելիության մակարդակի շատ քիչ աճ է նկատվում, և դրան հակառակ՝ ավելի հաճախադեպ են դառնում կանանց մահացության դեպքերը, ինչպես նաև վերարտադրողական առողջության հիվանդությունները, քանի որ կանայք այս դեպքում սկսում են օգտվել ոչ լեգալ հղիության արհեստական ընդհատման ծառայություններից, որը բերում է իր հետ իր բոլոր բացասական հետևանքները:...Պետք է հասկանալ, որ արգելող օրենքները ոչ մի դեր կամ փոփոխություն չեն կարող առաջ բերել, մինչև հասարակության մեջ չփոխվի այն մոտեցումը, որ տղամարդիկ առավել գերակա նշանակություն ունեն, քան կանայք, մինչև չգիտակցեն, որ կանայք պետք է հավասար իրավունքներ և հնարավորություններ ունենան տղամարդկանց հետ յուրաքանչյուր ոլորտում»:

[157] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ.

[158] Անի Ջիլոզյան և Վիկտոր Աղաջանյան, Արդյո՞ք հղիության արհեստական ընդհատումները նվազում են Հայաստանում, Ընտանեկան պլանավորման հետազոտություններ, 2016թ, համար 42(2):163-178

[159] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

[160] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ.

[161] ԱՍՏՐԱ, Սեռական ու վերարտադրողական առողջության ու իրավունքների հետ կապված վիճակը Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, ASTRA ցանց, 2014թ.

[162] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

[163] Սոֆիա Կիշկովսկի, Ռուսաստանն ընդունում է աբորտներին դեմ գնացող օրենք, Նյու Յորք թայմզ, 2011թ. հուլիսի 15

[164] Մարիա Ֆեդորիշինա, Ռուսաստանցի օրենսդիները քայլը սահմանափակում է հրատապ հակաբեղմնավորման դեղահաբերի հասանելիություն, Russia Insider, 2015թ. հունիսի 5

քաղաքականությունը հասել Հայաստան, բայց հաշվի առնելով այն միտումը, որ Ռուսաստանը ջանքեր է ներդնում Հայաստանում հակագենդերային օրենսդրություն անցկացնելու ուղղությամբ, հավանական է, որ հենց այս քաղաքականությունը կարող է ազդեցություն գործած լինել Հայաստանում աբորտների անցկացման նկատմամբ օրենսդրական սահմանափակումներ ընդունելու վրա:

II.
Վատթարացնող գործոններն ու առաջադիմությունն արգելակող հիմնական սպառնալիքները

Հարցազրույցների ժամանակ հիշատակվել է, որ գենդերը «խորհրդանշական սոսինձ» է, որը միավորում է հակաեվրոպական, հակալիբերալ, հակակոմունիստ, հակաԼԳԲՏ հայացքներ ունեցող պահպանողականներին,[165] թեև փորձագետների շրջանում չկա համաձայնություն, թե այդ երևույթի բուն պատճառները որոնք են, ուստի դրան վերագրվում են տարբեր բաներ՝ սկսած քաղաքական մանևրներից, մինչև ««սրտից բխող» խնդիրների շուրջ համախմբելու» կարողություն կամ նեոլիբերալ քաղաքականություններից դժգոհություն:[166] Ողջ Եվրոպայում շատացել են զանգվածային բողոքի ցույցերը, որոնք խոչընդոտել են առաջադիմական օրենքների ու քաղաքականությունների ընդունումը և հետ են մղել մարդու իրավունքները:[167] Հայաստանյան համատեքստում, ինչպես այլուր, հակագենդերային քարոզչության արշավը մեծապես քաղաքականացված էր ու հրահրված ուլտրապահպանողական խմբավորումների կողմից, որոնք առաջ էին տանում իրենց իսկ քաղաքական օրակարգերը՝ հանուն քաղաքական միավորներ հավաքելու: Սակայն պարզամտություն կլիներ գենդերային հակաքարոզչության հանկարծակի վերելքը բացատրել զուտ որպես քաղաքական գործիք ու «քավության նոխազ», քանի որ նման դիրքորոշումները «ձևավորվում են կոնկրետ պատմությունների ու սոցիալական, քաղաքական, տնտեսական ու կրոնական համատեքստերի կողմից»[168] և խարսխված են ազգային միությունը ու հայ ազգը պահպանելու մտահոգություններում: Նյութերի հետազոտության ու փորձագետների հետ հարցազրույցների հիման վրա ստորև շարադրված վերլուծությունը ավելի լայն հայացք ձգելու փորձ է, որպեսզի ընկալելի լինեն այն գործոնները, որոնք նպաստել են այս երևույթի խորացմանը և որպեսզի հնարավոր լինի գծագրել մեծացող հակագենդերային տրամադրություններին դիմագրավելու ռազմավարական եղանակներ:

ա. Քաղաքական կամքի բացակայություն



Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի պետական պաշտոնյաները շատ քիչ գործ են անում հանրությանը գենդերային հավասարության ու անխտրականության շուրջ ներգրավելու ու կրթելու ուղղությամբ, ընդհակառակը՝ նրանք հաճախ հերքում են գենդերային խնդիրների առկայությունը՝ դրանով մարգինալացնելով կանանց ու ԼԳԲՏ իրավունքների ապահովմամբ զբաղվող անհատներին ու խմբերին: Պետության այս անգործությունը ծառայել է հանրության հեշտ մանիպուլացիային, երբ օրակարգ են մտցվում հակագենդերային դիսկուրսները, հատկապես, երբ պետության ներկայացուցիչները օգուտ են քաղում նման դիսկուրսի քաղաքականացումից և գործածում այն հանրությունը քաղաքական զարգացումներից ու իրականություններից շեղելու նպատակով:

[165] Էսթեր Կովաց և Մաարի Պոիմ, Գենդերը՝ որպես խորհրդանշական սոսինձ. Եվրոպայում հակագենդերային մոբիլիզացման մեջ պահպանողական ու ծայրահեղ աջական կուսակցությունների դիրքն ու դերը, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2015թ.

[166] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ,Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.

[167] Վերոնիկա Գրժեբալսկա, Ինչու է «գենդերային գաղափարախոսության» դեմ պատերազմը կարևոր և ոչ միայն ֆեմինիստների համար. հակագենդերիզմն ու նեոլիբերալ ժողովրդավարության ճգնաժամը, Վիշեգրադյան տեսանկյուն, 2016թ. մարտի 7

[168] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.

Բ. Պատմական ժառանգություն

Պետական սոցիալիզմի անկումը համընկավ ղարաբաղյան հակամարտության, «մթի տարիների» ու տնտեսական մաքառումների հետ:[169] Անցումը պետականաշինության գործընթացներին բնորոշվում էր յուրահատուկ դինամիկայով, որը շարունակեց իր ազդեցությունն ունենալ նրա վրա, թե ինչպես էին քաղաքականացվում տարբեր խնդիրներ: Գենդերային քաղաքականություններն ու ավանդական ինստիտուտների շեշտադրումը շատ դեպքերում տանում են խորհրդային տարիներին Հայաստանում գոյություն ունեցող սոցիալական կառուցակարգերից առաջ գոյություն ունեցող պատմական ժամանակներ, մինչդեռ խորհրդային վարչակարգի օրոք գենդերային դերերը սահմանվում էին պետության պահանջով, որ կանայք պատասխանատու լինեն ինչպես արտադրողական, այնպես էլ՝ վերարտադրողական աշխատանքի համար:[170] Ինչպես նշում են գիտնականներ Ջո Լեյքոքն ու Ջերեմի Ջոնսոնը.

«Գենդերային «ավանդական» կառուցածքները պահպանվել են տարբեր պատճառներով, ներառյալ՝ խորհրդային բարեփոխումների նկատմամբ տեղական դիմադրության, տեղական մակարդակում գիտելիքի պակասի, խորհրդային տեղական ու կենտրոնական իշխանությունների ունեցած ազդեցության ու ռեսուրսների և միջազգային կազմակերպությունների միջամտությունների պատճառներով: Վերջին տարիներին խորհրդային փոփոխված գենդերային քաղաքականությունները և նորովի շեշտադրումը մայրության ու ավանդական ընտանիքի վրա «ավանդական», հայրիշխանական սոցիալական կառուցվածքների այլ տարբերակ էին հնչեցնում»:[171]

Խորհրդային տարիներին դիմադրության էր արժանանում նաև ֆեմինիզմ հասկացությունը, քանի որ այն «կապված էր բուրժուական և հակահեղափոխական գաղափարախոսության» հետ:[172] Կանանց խնդիրների մասին քննարկումները լռեցվում էին, և շեշտադրումը տեղափոխվում էր արտադրության վրա՝ պարզապես տեղահան անելով կանանց ազատագրման ու հավասարության մասին ավելի լայն դիսկուրսը:[173] Սոցիալիստական պետությունն իրականում շատ քիչ բան էր անում գոյություն ունեցող գենդերային նորմերի դեմ պայքարելու իմաստով, փոխարենը, խորհրդային պետությունն իրեն ներկայացնում էր որպես տիրապետող հոր կերպար՝[174] փորձելով քանդել ընտանեկան հավատարմությունները, որոնք ի վերջո հանգեցրին հակառակ էֆեկտին՝ ընտանեկան կապերի ամրապնդմանը:[175] Ավելի ուշ՝ անկախության տարիներին, երբ տղամարդիկ սկսեցին իշխել քաղաքականության ու բիզնեսի նորաստեղծ պաշտոններում և մասնավորեցրին երկիրը, «իրավունքների ու պարտականությունների

[169] Վրեժ Հարությունյան, Հայաստան, անկախության մութ տարիները, Հետք, 2015թ. սեպտեմբերի 1

[170] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.

[171] Նույնը

[172] Արմինե Իշխանյան, Գենդերացնելով քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարության կառուցումը. Ընտանեկան բռնության հակաքարոզչությունը Հայաստանում, Սոցիալական քաղաքականություն, Հատոր 14, համար 4, 2007թ

[173] Արմինե Իշխանյան, Գենդերայնացված անցումներ հետխորհրդային անցման ազդեցությունը կենտրոնական Ասիայի և Կովկասի կանանց վրա, Գլոբալ զարգացման և տեխնոլոգիայի հեռանկարներ, հատոր 2, համար 3-4, 2003թ.

[174] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ,Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.

[175] Արմինե Իշխանյան, Գենդերայնացված անցումներ հետխորհրդային անցման ազդեցությունը կենտրոնական Ասիայի և Կովկասի կանանց վրա, Գլոբալ զարգացման և տեխնոլոգիայի հեռանկարներ, հատոր 2, համար 3-4, 2003թ.

վերաբերյալ գենդերայնացված մոտեցումները նոր սահմանումներ ստացան»,[176] գերակա դարձավ նատիվիստական ռազմավարությունը, որում կանանց համար կառուցված էին մայրականությանն ուղղված դերեր:[177] Արդարադատության նախարարության փորձագետ Գայանե Հովակիմյանի կարծիքով՝ Հայաստանի ավագ սերունդը մինչ այժմ էլ չի ընդունում, որ Հայաստանի հասարակությունը կանգնած է գենդերային հիմնախնդիրների առջև, քանի որ նման դիսկուրս մեծապես գոյություն չուներ խորհրդային 70-ամյա կառավարման ժամանակ, երբ «հավասարությունը կար դե յուրե, սակայն՝ ոչ դե ֆակտո»:[178]

Ինչ վերաբերում է ԼԳԲՏ հարցերին, խորհրդային իշխանությունները իդեալականացրել էին հետերոսեռական ընտանիքի մոդելը, որի արդյունքում սեռական փոքրամասնություններն էլ ավելի էին մարգինալացվել: Հանրությանն ասվում էր, որ «նույնասեռականությունը կապիտալիստական հասարակության դեգրադացման արդյունք է»՝[179] այսպիսով ԼԳԲՏ համայնքի նկատմամբ սնելով անհանդուրժողականություն: Տղամարդկանց նույնասեռականության քրեականությունը հանգեցրեց նրան, որ ԼԳԲՏ անձինք սկսեցին թաքցնել իրենց ինքնությունները, իսկ նրանց նկատմամբ ատելության քարոզը փաստացի լեգիտիմացվեց:[180] 2003թ. նույնասեռականությունը ապաքրեականացնելու ուղղությամբ Հայաստանի կառավարության իրականացրած քայլը, որ պետք է նպաստեր Հայաստանի անդամակցությանը Եվրոպային Խորհրդին,[181] կարծես ջրհեղեղի առջև դուռ բացեց, քանի որ նախկինում օրենքով արգելվածն այժմ օրինական էր, ուստի այն ընկալվեց որպես սպառնալիք հասարակությանը:[182] Բացի այդ, Հայաստանի իրավական ողջ դաշտը նմանակում է Ռուսաստանին, նույնիսկ անկախությունից շատ տարիներ անց Հայաստանն օգտվում էր խորհրդային քրեական օրենսգրքից:[183] Կրթության փորձագետ Նվարդ Մանասյանը ԼԳԲՏ հարցերի շուրջ երկխոսությունը գնահատում է որպես «մեծ շոկի առաջացում» մի այնպիսի հանրությունում, որը մինչև վերջերս սեռական գործունեության համար նույնիսկ բառապաշար չուներ ու սեռական հարաբերությունը դիտարկում էր հիմնականում վերարտադրության տեսանկյունից:[184]

Լինելով պատմական անհանդուրժողականության ու խտրականության արդյունք՝ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելությամբ պայմանավորված հանցագործությունները, որոնց թիվը գնալով մեծանում է պաշտոնյաների պատասխանատվության պակասի պատճառով, ավելի քան երբևէ հարցը մղել են դեպի հանրային դաշտ: Օրինակ, 2012թ. նույնասեռականների նկատմամբ բարյացկամ «DIY» ռոք ակումբը երկու եղբայր հրկիզեցին, սակայն նրանք ընդամենը մի քանի ժամ անցկացրեցին անազատության մեջ և բավականին արագ ազատ արձակվեցին:[185] Այն, որ ակումբի սեփականատերն ակտիվ էր ԼԳԲՏ համայնքում և մասնակցել էր գեյ շքերթի Թուրքիայում, ստեղծեց մեդիա իրարանցում ու ուղղորդեց ատելության քարոզը ԼԳԲՏ անձանց ու իրավապաշտպանների նկատմամբ:[186] Նմանատիպ հակազդեցություն առաջացավ՝

[176] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.
[177] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[178] Գայանե Հովակիմյան, հարցազրույց, 2017թ.
[179] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[180] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, կովկասյան հրատարակություն, 2016թ.
[181] Նույնը
[182] Վահան Բուռնազյան, Մարիամ Օսիպյան և Մարիա Աբրահամյան, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում, Հասարակություն առանց բռնության հկ, 2016թ.
[183] Գայանե Հովակիմյան, հարցազրույց, 2017թ.
[184] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[185] Հարձակումներ DIY-ի վրա. Երևանյան ակումբի շուրջ իրավիճակը բանավեճ է հրահրում ԼԳԲՏ «իրավունքների ու անիրավությունների շուրջ», Armenia Now, 2012թ. մայիսի 16
[186] Ատելության հանցանքը թիրախում է նույնասեռականների հանդեպ բարյացկամ բարը Երևանում, պատգամավորները փրկագնով ազատում են հանցագործներին, Armenian Weekly, , 2012թ. մայիսի 15

կապված նույն տարվա Եվրատեսիլ մրցույթի[187] և Կանանց ռեսուրսային կենտրոնի ու ՓԻՆՔ-ի կազմակերպած բազմազանության երթի հետ:[188]

գ. Ընկալում, որ պետությունը միջամտում է «ընտանեկան հարցերին»

Նախքան Խորհրդային Միության փլուզումը երկար տասնամյակներ Հայաստանում չկար որոշակի երևույթների, օրինակ՝ ընտանեկան բռնության, սահմանման սոցիալական, մշակութային ու իրավական բառապաշար: Միայն անկախության առաջին տարիներին էր, որ տնտեսական աղքատացման, պատերազմի ու աղետալի երկրաշարժի ծանր բեռը կրող նորաստեղծ հանրապետություն Հայաստանը սկսեց առերեսվել այս խնդրին: Արևմուտքից եկող այդ ընդգրկուն նարատիվը, որ տան պատերի ներսում տեղի ունեցող երևույթներն իրականում պետության հիմնախնդիրներից են, մեծապես ընկալվեց որպես օտար հասկացություն ու մերժվեց պահպանողականների կողմից, ովքեր համարում էին, որ որևէ կառույց չպետք է ընտանիքներին թելադրի, թե ինչպես վարվեն իրենց տան ներսում:[189]

Միևնույն ժամանակ երկրում տիրող ծանր սոցիալ-տնտեսական պայմանները ավելի նպաստեցին ընտանեկան կապերի ամրապնդմանը: Կանանց աջակցման կենտրոնի ղեկավար Մարո Մաթոսյանը նկարագրում է, թե ինչպես ընտանիքը սկսեց ընկալվել որպես «շատ բռնի, փոփոխված ու արմատախիլ եղած հասարակության վերջին հենարան»:[190] Շատերի համար ընտանիքը սոցիալական պաշտպանության միակ ձևն էր[191] և ընկալվում էր որպես կենսունակության ու գոյապահպանության տարրական միավոր, որն օգնում էր ազգին գոյատևել:[192] Այսպիսով, Հայաստանում եվրոպական ներգրավվածությունն ընկալվում է որպես միջամտություն «ընտանեկան հարցերին», իսկ ֆեմինիստների՝ «անձնականը քաղաքական է» լոզունգը հնչում է որպես տագնապի ազդանշան, քանի որ այն հուշում է, թե կանայք պետք է դադարեցնեն իրենց նվիրվածությունն ընտանիքին, որն ընկալվում է որպես՝ «ապահով ու կայուն մի բան՝ այս փոփոխվող ու մեծապես քաղաքականացված ու անկայուն աշխարհում»:[193]

[187] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[188] Նարեկ Սեֆերյան, Լավ օր Երևանում հոմոֆոբիայի համար, Armenian Weekly, 2012թ. մայիսի 22
[189] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ,Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.
[190] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[191] Արմինե Իշխանյան, Անձնականը քաղաքական է: Հայաստանի ՀԿ ոլորտի զարգացումը հետխորհրդային շրջանում, Բերկլիի խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրությունների ծրագիր, 2003թ.
[192] Արմինե Իշխանյան, Գենդերացնելով քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարության կառուցումը. Ընտանեկան բռնության հակաքարոզչությունը Հայաստանում, Սոցիալական քաղաքականություն, Հատոր 14, համար 4, 2007թ.
[193] Արմինե Իշխանյան, Ժողովրդավարության կառուցումն ու քաղաքացիական հասարակությունը հետխորհրդային Հայաստանում, Լոնդոն, Նյու Նորք, Ռութլեջ հրատարակչություն, 2008թ

դ. Շփոթմունք բառիմաստների շուրջ



Ինչպես արդեն նշվել է, «գենդեր» եզրույթի թյուր ըմբռնումը և բառիմաստային շփոթմունքը հեշտ շահարկման ճանապարհ հարթեց պահպանողական հասարակությունում, որը մեծապես անտեղյակ է տվյալ եզրույթաբանությունից:[194] Հարցազրույցի մասնակցած փորձագետները համակարծիք են, որ պետությունը սկսեց խնդրահարույց համարել «գենդեր» եզրույթի առկայությունը օրենսդրության մեջ և հետագայում նախաձեռնեց խտրականության դեմ պայքարի մասին օրինագծից «սեռական կողմնորոշում ու գենդերային ինքնություն» բառակապակցությունների հեռացումը՝ հիմնականում նախքան օրենքի մշակումն այս եզրույթների թյուր ըմբռնման պատճառով:

«Իրավունքի ուժ» կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանը գնահատում է, որ «գենդեր» եզրույթի ու ավելի լայն գենդերային հարցերի շուրջ հասարակական ընկալումներն ու ըմբռնումը պետք է որ հիմնվին թույլ եղած լինեն՝հաշվի առնելով, թե որքան արագ հանրությունը հանձնվեց հակաքարոզչությանը:[195] Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող Վլադիմիր Օսիպովի տեսանկյունից՝ գենդերի հասկացությունը «լղոզված սահմաններով իմացաբանական ծուղակ է», քանի որ իրավական փաստաթղթերը վերաբերում են տղամարդկանց ու կանանց բացառապես սոցիալական դերերին և չեն գործածում ավելի ներառական կոնցեպտուալացում:[196] Այն խնդիրը, որ գենդերն անհստակ է սահմանվում, շարունակում է Հայաստանի հանրության համար խնդրահարույց լինել: Ինչպես նշում է Բաց հասարակության հիմնադրամների փորձագետ Աննա Հարությունյանը. ««Գենդերի» ու հարակից եզրույթների շուրջ չկա համընդհանուր ըմբռնում և ավելին, կա դրանց գերգործածում և միևնույն ժամանակ՝ սխալ գործածում, ինչը հանգեցնում է գենդերային հավասարության շուրջ շեղված դիսկուրսի և (վերա)արտադրում է սխալ մեկնաբանություններ ու հավելյալ կարծրատիպեր»:[197]

[194] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո. ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, կովկասյան հրատարակություն, 2016թ.

[195] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.

[196] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.

[197] Աննա Հարությունյան, Վեր հանելով գենդերային դիսկուրսը Հայաստանում. Հիստերիայից մինչև կառուցողական երկխոսություն, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2017թ.

Ե. Գնալով մեծացող դժգոհություն «եվրոպական արժեքներից»

Քանի որ եվրոպականացումը դարձել է ԼԳԲՏ իրավունքների հոմանիշ,[198] Եվրամիությունը գնալով ավելի շատ է սկսել ընկալվել որպես մշակութային գաղութարար, որն աշխատում է հայկական ավանդույթներն ու մշակույթը փչացնելու և ճնշելու ուղղությամբ:[199] Հայաստանի քաղաքացիական հասարակության դիրքավորումը միջազգային կազմակերպությունների շարքերում ու իրավապաշտպան շրջանակներում սկսել է ընկալվել որպես մոլորեցնող արտաքին ներգործություն և հարձակում հայ ընտանիքի նկատմամբ,[200] ինչը ոլորտում ակտիվ անձանց հեռացրել է հանրությունից ու հանգեցրել այն գաղափարին, որ ակտիվիստները «պետության անհավատարիմ թշնամիներն են»,[201] քանի որ գենդերային հարցերի շուրջ նրանց վերաբերմունքն ու ընկալումները համընկնում են նման արժեքների հետ ու տրամագծորեն հակադրվում են մեծամասնական տեսակետներին ու պահպանողական-ազգայնական արժեքներին, որոնց կրողն է հայաստանյան հասարակությունն ու Հանրապետական կուսակցությունը:

Միևնույն ժամանակ, Հայաստանը ստիպված է եղել ցուցադրել իր կողմնորոշումը դեպի Եվրոպայի կողմից սահմանված ժողովրդավարական սկզբունքները, թեև շատերն են կառավարությունում շարունակում գենդերային դիսկուրսին անլրջորեն մոտենալ և օրենսդրական փոփոխություններ են կատարում միայն այն ժամանակ, երբ իրենցից պահանջվում է գործուն միջոցներ ձեռնարկել:[202] Սա արտացոլում է Հայաստանի արտաքին քաղաքականությունը, որը ենթադրում է դրական հարաբերություններ ապահովել բոլոր տարածաշրջանային դերակատարների հետ՝ ոչ անպայմանորեն կիսելով նույն մտածելակերպը կամ շահերը:[203] Կարևոր է նշել, որ հայաստանցիների գնալով ավելի հրապարակային դարձող բարոյական պահպանողականությունը, որը գործածվում է նրանց «եվրոպական արժեքներից» զատորոշելու նպատակով, արտացոլում է նաև իրենց եզակիությունը, քրիստոնեական արժեքները պահպանած լինելն ու Եվրոպայից ու նրա ազատականացման ճանապարհից տարբերվելը ցույց տալու ցանկությունը: Ռուսաստանը շահարկել է հենց այս նուրբ պահը՝ ցուցադրելով իրեն որպես այլընտրանք Եվրոպային և որպես

[198] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.
[199] Նույնը
[200] Նվարդ Մանասյան, հարցազրույց 2017թ.
[201] Ռիչարդ Մոուլ, LGBT in CEE – A New Acceptance is Being Born from Migration, Emerging Europe, 2016թ. հոկտեմբերի 1
[202] Վլադիմիր Օսիպով, 2011, Գենդերային հավասարությունը Հայաստանում. ընկալված կարիք, թե՞ հարկադրված պայման, Հայկազյան հայագիտական հանդես, 32, 209-227.
[203] Նելի Բաբայան և Նատալիա Շարապովա, Հայաստան. Արևելյան գործընկերության անպատասխան սիրահարը, FRIDE Policy Brief, 2011թ. սեպտեմբեր

քրիստոնեական արժեքները պահպանած մի երկիր, որն ավելի համարժեք է հայկական ինքնությանը:[204]

Կանանց աջակցման կենտրոնի ղեկավար Մարո Մաթոսյանը ներկայացնում է իր մտորումները, թե ինչպես է այս հռետորաբանությունն օգտագործվել քաղաքական նպատակներով. «Եվրամիության հետ մերձեցման ցանկացած հանգամանք հանգեցնում է մարդու իրավունքների հարցերի, հատկապես՝ գենդերային հարցերի դեմ հակազդեցության»:[205] Կրթության փորձագետ Նվարդ Մանասյանն էլ պնդում է, որ գենդերային հարցերի շուրջ ռուսաստանյան սնուցմամբ դիսկուրսը տեղ չէր ունենա, եթե Հայաստանը չլիներ մեծ քաղաքականության ներգործության ներքո ու ունենար «ուժեղ, եվրոպական արժեքների վրա հիմնված, չզիջող ներկայություն»: Այս հանգամանքը, զուգորդվելով այն անհանգստությամբ, որ եվրոպական արժեքները մոտ են «մեր հավատքները նզովող»[206] բազմազան սեռականություններին ու նույնասեռ միություններին, կրակի վրա, այսպես ասած, յուղ է լցրել:[207]

զ. Կանանց շարժման բացակայություն

Հայաստանյան համատեքստում դեռևս չի ձևավորվել ուժեղ ու ինքնավար ֆեմինիստական շարժում, թեև նման շարժման համար սերմեր կան:[208] Քաղաքացիական հասարակությանը դեռևս չի տիրապետում շահերի պաշտպանության այն եղանակներին, որոնք անհրաժեշտ են քաղաքական որոշումների վրա ազդելու համար, մինչդեռ հակագենդերային խմբերը ավելի հաջողակ են եղել գենդերին առնչվող օրենսդրության և քաղաքականության վրա ազդելու հարցում՝ գլխավոր որոշումներ կայացնողների հետ ավելի ամուր կապերի ու ավելի մեծ ռեսուրսների շնորհիվ: Կանանց ու ԼԳԲՏ անձանց կարիքները բավարարելուն միտված քաղաքական կամքի բացակայությունը, վերը նշված իրականությունների հետ միասին, ստեղծում է մի իրավիճակ, երբ շահերի պաշտպանները չափազանց ծանրաբեռնվում են՝ փորձելով կատարել երկակի դեր՝ տրամադրել ծառայություններ ու առաջ մղել իրենց շահերը՝ աշխատելով խիստ սուղ բյուջեով:[209]

Կանանց աջակցման կենտրոնից Մարո Մաթոսյանի կարծիքով՝ հասարակական ընկալումներում փոփոխությունները պետք

[204] Մարլեն Լարուել, Ռուսաստանը՝ որպես հակալիբերալ եվրոպական քաղաքակրթություն, Էդինբուրգի համալսարանական հրատարակչություն, 2016թ.
[205] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[206] Նույնը
[207] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[208] Նույնը
[209] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.

է ներքևից բխեն դեպի վերև և դառնան ժողովրդական մշակույթի մի մաս՝ վերևից իջեցվող օրենսդրության հետ մեկտեղ, այլապես «օրենսդրությունը հասարակությանը հարկադրում է մի բան, որին նա պատրաստ չէ»:[210] Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող Վլադիմիր Օսիպովն էլ համարում է, որ քաղաքացիական հասարակությունը հկ-ներին նվազեցնելը արգելակում է քաղաքացիական անշահախնդիր մասնակցությունը, իսկ կանանց շարժում հնարավոր է կառուցել միայն այն ժամանակ, երբ առկա լինեն մեծապես համակարգված արմատաբուխ (grassroots) կազմակերպություններ:[211] Այդուհանդերձ, ներկա պահին չկա ֆեմինիստների կրիտիկական զանգված, որը պատրաստ կլինի հրապարակային խոսել, իսկ ակտիվիստներն ավելի շատ կենտրոնացած են մայրաքաղաքում:[212] Ինչպես բացատրում է հետազոտող Ալեքսանդրա Փիթմանը.

«Ֆեմինիզմի բացակայության պայմաններում կանանց իրավունքների հետ կապված գործունեությունը չունի իշխանության՝ կանանց զանազան ձևերով սահմանափակող ու ճնշող առկա կառուցակարգերին ու ձևերին մարտահրավեր նետող քաղաքական համապարփակ նկարագիր կամ կազմակերպման սկզբունք: Քաղաքացիական հասարակության դաշտը և մասնավորապես կանանց իրավունքների դաշտն ինչ-որ իմաստով սահմանափակված է ժողովրդավարական նեղ հնարավորությունների, ռադիկալ պահանջների պակասի և կանանց իրավունքների դիրքերը ներկայացնող դերակատարների համասեռությամբ աչքի ընկնող փոքրաթիվ խմբերի միջև ուժի մեծ կենտրոնացման պատճառով: Չափավոր ձայները ժամանակի ընթացքում ստվերել են ավելի ռադիկալ հնչող պահանջները:»[213]

Տարրական պաշտպանության բացակայությունը պատասխանատվության բեռը դնում է կանանց ծառայություններ ու ապահով տարածքներ տրամադրող կազմակերպությունների վրա:[214] Կարելի է անել այն պնդումը, որ պետության պարտականությունը համարվող հանրային ծառայություններ մատուցող ֆեմինիստական հկ-ները թուլացնում են շահերի պաշտպանության իրենց ջանքերն՝ ուղղված նրան, որ պետությունը ստանձնի այդ ծառայությունների մատուցումը:[215] Այս խնդրին ավելանում է նաև կանանց ու ԼԳԲՏ կազմակերպությունների մարգինալացումը և հաճախ նրանց գործունեության նեղ շրջանակը: Երբ ավելի շատ հկ-ներ սկսեցին ծառայություններ մատուցել իրենց շահառուներին ու ավելի պրոֆեսիոնալ դարձան, դիսկուրսը դուրս եկավ լուսանցքներից ու կենտրոնական դիրք գրավեց, ինչպես նկատել է հետազոտող Ադրիանա Զահարիջևիչը.

«Այսպիսով, կար ժամանակ, երբ քաղաքացիական հասարակությունն ընկալվում էր՝ որպես հազվագյուտ մի տարածք, որտեղ կարելի էր իրագործել զորակցության ու մոբիլության այլընտրանքային քաղաքականություններ: Այն նաև ֆեմինիստական քաղաքականությունն արտահայտելու հարաբերականորեն ինքնավար տարածք էր, սակայն 2010-ականների կեսերից քաղաքացիական հասարակությունը դարձավ մի խողովակ, որի միջոցով հռչակվում էին ճիշտ խնդիրները, հաստատում ստացած թեմաները և թե որոնք էին պատշաճ

[210] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[211] Վլադիմիր Օսիպով, Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[212] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[213] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.
[214] Նույնը
[215] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ

Ֆեմինիստները մասնակցում են գենդերային հավասարության համար ցույցին Երևանում: (Հեղինակ Սվետլանա Անտոնյան:)

կազմակերպությունները: Կարիքների, սակայն նաև գիտելիքի, հմտությունների և առկա (լեգիտիմ ու օրինակելի) դիսկուրսների նման կառուցակարգումը, որի միջոցով այդ կարիքները կներգծվեին կառավարական գործողությունների կամ քաղաքական լեզուների մեջ, սահմանափակեց քաղաքական ակտիվիզմի որոշ ձևերի տեսանելիությունը: Ավելին, այն վերացրեց կոլեկտիվության չափումն ու շարժման լայնակիությունը:[216]

Շատերը նաև հավատում են, որ արմատաբուխ (grassroots) ուժեղ շարժման բացակայությունը ճանապարհ է հարթել, որպեսզի ընդդիմախոսները հարձակվեն նախաձեռնությունների վրա ու անվանեն դրանք արտասահմանից ֆինանսավորվող ու ուղղորդվող: Օրինակ, նախքան անկախության տարիները կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ջանքեր մեծ հաշվով գոյություն չունեին:[217] Այսպիսով, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը դեռևս պետք է հաշտվի այն փաստի հետ, որ իրենց հետապնդած քաղաքական ու սոցիալական օրակարգերն արտացոլված են այն տեսակի ծրագրերում, որոնք դոնորներն են պատրաստ աջակցել, իսկ սա արժանացել է և կշարունակի արժանանալ հասարակական անվստահության: Խնդրի ճանաչումը պահանջող արմատաբուխ շարժման բացակայությունը՝ զուգակցված խնդրիներին արևմտյան դոնորների կողմից առաջարկվող լուծումներով, որոնք ենթադրում են պետության միջամտություն ու մեծապես օտար

[216] Նույնը

[217] Կատալան Ֆաբիան, Անվանում տալով իրավունքներին. ազգը, ընտանիքն ու կանանց իրավունքները ժամանակակից Հունգարիայում ընտանեկան բռնության շուրջ բանավեճերում, Հունգարագիտության ակնարկ ամսագիր, հատոր XLI, համարներ .1-2, 2014թ.

հասկացություններ են, ինչպես օրինակ՝ թեժ գծերն ու ապաստանները, ավելի են ամրապնդել այն գաղափարը, թե վերազգային դերակատարները «արհեստականորեն ներմուծել ու հարկադրել են» իրենց տեսակետները:[218]

է. Ազգայնական գաղափարախոսություն



Մեծապես հայրիշխանության ավանդույթի վրա հիմնված և կրոնական մոլեռանդությամբ ու կոլեկտիվիստական մտածելակերպով միահյուսված ազգայնական գաղափարախոսության գերակայությունը արգելակում է Հայաստանում գենդերային խնդիրների շուրջ այլընտրանքային դիսկուրսի զարգացումը: Գենդերն ու ազգայնականությունը հիմնականում միահյուսված են, ու երկուսն էլ ուժային պայքարների դրսևորումներ են: Ինչպես տեղին նկատում է դասախոս Քեթրին Բեյքերը. «Եթե ազգային ու էթնիկ ինքնության նարատիվները որոշում են, թե ով է պատկանում ազգին, ապա գենդերային ռեժիմները փոխհատվում են սրանց հետ՝ որոշելու, թե ինչպես է տղամարդ կամ կին դասակարգված անձը պարտավոր պատկանել ազգին»:[219]

Լրատվամիջոցների, աջակողմյան քաղաքական գործիչների ու եկեղեցու պաշտոնյաների ստեղծած հանրային դիսկուրսը հայերին ներկայացնում է որպես համասեռ մի խումբ, որը կրում է նույն արժեքային համակարգերը, մինչդեռը իրականում կան քաղաքական ու կրոնական շատ տեսանկյուններ: Հայաստանում ազգայնականությունն ու կրոնական մոլեռանդությունը միահյուսված են այն աստիճանի, որ էթնիկ ու կրոնական պատկանելությունը նույնացվում են, և ստացվում է, որ նրանք, ովքեր շեղվում են նախասահմանված կրոնական հավատքից, չնայած հանրության շրջանում կրոնապաշտության տարածված չլինելուն, համարվում են ազգային ինքնությունը դավաճանողներ և ազգային անվտանգությանը սպառնացողներ:[220] Գլոբալ մակարդակում կրոնական պահպանողական աջերի, ինչպես տեղական մակարդակում՝ Հայ առաքելական եկեղեցու կողմից գործածվող մարտավարություններից է սեռականության ու գենդերի հարցերը հանրային դիսկուրսի կենտրոնում պահելը՝ կապելով կանանց զորացումը հայկական ավանդական ընտանիքները քայքայելու հետ:[221] Ավելին, կա մղում «կանանց կամ ԼԳԲՏ անձանց

[218] Արմինե Իշխանյան, Գենդերացնելով քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարության կառուցումը. Ընտանեկան բռնության հակաքարոզչությունը Հայաստանում, Սոցիալական քաղաքականություն, Հատոր 14, համար 4, 2007թ.

[219] Քեթրին Բեյքեր, Գենդերը քսաներորդ դարի Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, 1-ին հրատարակություն, Լոնդոն, Փալգրեյվ Մաքմիլան, 2017թ.

[220] Լուսինե Քարամյան և Հովհաննես Հովհաննիսյան, Հանդուրժողականությունը հայաստանում այսօր. Կրոնական հանդուրժողականության հեռանկարները, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2012թ.

[221] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.

իրավունքների համար պայքարող մարդկանց շուրջ կերտել հակաազգ ու հակաընտանիք կերպար»:[222] Հաշվի առնելով Հայաստանի բնակչության էթնիկ համասեռությունը՝ կանանց ու փոքրամասնությունների իրավունքները գտնվում են ինքնության շուրջ պայքարների առաջնագծում և այդ պատճառով հեշտությամբ շահարկվում են, որպեսզի ստեղծեն ինքնության շուրջ պառակտումներ:

Ժողովրդագրական ցուցանիշների անկման վախերը հաճախ են հայտնվում ազգայնականության ու գենդերի շուրջ բանավեճերի կենտրոնում: ԼԳԲՏ անձանց մեղադրում են ծնելիության նվազման և «հայ ազգի ցեղասպանության» մեջ:[223] 2000-ականների սկզբին ԱՄՆ ՄԶԳ ընտանեկան պլանավորման մի ծրագրի շուրջ արվեցին թյուր մեկնաբանություններ, թե իբր այն ուղղված է ցածր ծնելիությունը խրախուսելուն ու այն պիտակվեց որպես «ցեղասպանության նոր տեսակ»:[224] Երկրի ժողովրդագրական վիճակը խորհրդային անցյալից հետ է բերում մայրության իդեալները՝ որպես պետության կայունությունը ապահովող պարտականություն և ուշադրությունը շեղում է ցածր ծնելիության իրական մեղավորներից՝ աղքատությունից ու արտագաղթից:

ը. Ազգ-բանակ հասկացությունը



Հայաստանը համարվում է աշխարհում ամենառազմականացված երկրներից մեկը:[225] 2016թ. պատերազմական գործողությունների թեժացման ժամանակ, ինչպես թեժացումների մյուս դեպքերում, հանրությունը մեծապես ուղղորդված էր, որպեսզի ազգային անվտանգության հաշվին՝ չկիսի հակապատերազմական տրամադրություններ:[226] Այս թեմայի շուրջ մի հոդվածում Գայանե Աբրահամյանն արտահայտում է իր կասկածները Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի առաջ մղած «ազգ-բանակ» հասկացության կապակցությամբ, որը նա գնահատում է որպես «պոտենցիալ իմաստով ողջ հանրության համընդհանուր մոբիլիզացման հնարավորություն՝ ի ծառայություն ազգային անվտանգության»:[227] Երևանի պետական համալսարանի գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար և Կանանց ռեսուրսային կենտրոնի համահիմնադիր Գոհար Շահնազարյանի կարծիքով՝ այս քայլերը նմանվում են «սոցիալ-հոգեբանական էքսպերիմենտի», երբ ռուսամետ և ռազմականացմանը կողմ նարատիվները

[222] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[223] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո. ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, կովկասյան հրատարակություն, 2016թ.
[224] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[225] Գայանե Աբրահամյան, Հայաստան. Ազգ-բանակի ծրագիրը հասարակության ռազմականացման մտահոգություններ է առաջացնում, 2017թ. հունիսի 14
[226] Աննա Ժամակոչյան, Հայաստանը՝ «ազգային միասնության» ծուղակում, Open Democracy, 2017թ. փետրվարի 7
[227] Գայանե Աբրահամյան, Հայաստան. Ազգ-բանակի ծրագիրը հասարակության ռազմականացման մտահոգություններ է առաջացնում, 2017թ. հունիսի 14

հակադրվում են եվրոպամետ քարոզչությանը և հասարակությանը սնում են այն պատումով, թե Հայաստանի հույսը Ռուսաստանն է՝ որպես պատերազմի հերթական բռնկումը կանխող փրկիչ, իսկ Եվրոպայից ներմուծված արժեքները քայքայում են հայկական ավանդական արժեքները:[228]

Կասկած չկա, որ «անցումային շրջանի գենդերայնացված բնույթի»[229] վրա իր հավելյալ հետևանքներն է թողել չկարգավորված հակամարտությունը և գոյատևողի գաղափարաբանությունը, քանի որ շատ ծայրահեղականներ ղարաբաղյան պայքարն օգտագործում են ազգայնականությանը թափ տալու նպատակով և պնդում են, թե հայրենասիրական չէ ազգային միասնությունը վտանգելը, քանի որ պատերազմի վերսկսումը միշտ էլ վերահաս է:[230] Գենդերային խնդիրները, ինչպես շատ այլ սոցիալական խնդիրներ, մի կողմ են նետված, մինչդեռ հասարակական ուշադրության կենտրոնում ազգը պահպանելու մասին հախուռն գաղափարներն են: Այս թեմայի շուրջ անկախ ֆեմինիստ Աննա Նիկողոսյանը գրել է հետևյալը.

««Ազգ-բանակ» գաղափարաբանությունը ոգեկոչում է կնոջ ու տղամարդու միջև միություն ու ենթադրում է ամուսնության ու երեխաների առկայություն, որոնցից տղաները նախընտրելի են, քանի որ նրանք կծառայեն բանակում, կուղարկվեն առաջնագիծ ու որպես մսացու կլցնեն կառավարության ղեկավարների գրպանները: Իսկ ահա գեյ, երկսեռական ու քուիր կանայք միլիտարիստական այս ռազմավարության մեջ չեն տեղավորվում, նրանք չեն համարվում «ազգի համար զինվոր ծնողներ»՝ վերատրադրողական մեքենա: Ուստի նրանց կյանքերը դառնում են անկարևոր, նրանց փորձառություններն անտեսվում են, իսկ նրանց կրած բռնությունները՝ լռեցվում:»[231]

թ. Նեոլիբերալիզմը՝ ետնաբեմում

Հետխորհրդային ժամանակաշրջանում ականատես եղանք պետության, որպես իր քաղաքացիների հոգսերը հոգացողի, նվազող դերին ու լիբերալ տնտեսական շուկայի վերելքին, որն առաջացրեց մեծ սոցիալական անկայունություն ու բարձրացրեց գործազրկության մակարդակը: Քաղաքական տնտեսական խնդիրները, ներառյալ՝ գործազրկության բարձր մակարդակը, աղքատությունը, արտագաղթը, կոռուպցիան ու ժողովրդագրական անկումը չեն նահանջել ու սրել են ազգայնական տրամադրություններն ու գոյատևողի մտածողությունը: Հայաստանում աճի միտում ունեցող ճակատային ազգայնական միտումները

[228]Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ. և Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[229]Արմինե Իշխանյան, Գենդերայնացված անցումներ. հետխորհրդային անցման ազդեցությունը կենտրոնական Ասիայի և Կովկասի կանանց վրա, Գլոբալ զարգացման և տեխնոլոգիայի հեռանկարներ, հատոր 2, համար 3-4, 2003թ.
[230]Մարիա Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[231]Աննա Նիկողոսյան, Լռության մեջ պատսպարված իշխանություն, նորմեր և ընտանեկան բռնություն կանանց միջև, Անալիտիկոն հանդես, 2017թ. փետրվար

արգելակում են մարդու իրավունքների միջազգային նորմերի ու գենդերային խնդիրների ներառումը քաղաքականությունների ընդունման մեջ: Բաց հասարակության հիմնադրամների փորձագետ Աննա Հարությունյանի կարծիքով՝ խնդրի առանցքում «հաստատված մասկուլինային իշխանությունն» է, որը վերածվել է կոռուպցիայի:[232] Նա հակագենդերային քարոզչությունը դիտարկում է որպես ավելի լայն՝ հակահիրավունքի, հակաժողովրդավարության, հակաճշմարտության դիսկուրսի արտացոլում: Այսպիսի դժվար միջավայրում հանուն վերարտադրողական իրավունքների, ԼԳԲՏ իրավունքների և ընդդեմ կանանց նկատմամբ բռնության պայքարները մի կողմ են մղվում:

Կանայք կրում են նեոլիբերալ քաղաքականությունների բեռի մեծ մասը, քանի որ նրանք են երեխաների, հաշմանդամների ու տարեցների խնամողները պետական սոցիալական աջակցության համակարգերի բացակայության պայմաններում:[233] Կանայք կազմում եմ պաշտոնապես գործազուրկների մեծամասնությունը և որպես այդպիսին՝ հանրային ոլորտից դուրս են մղված ու ավելի քիչ քաղաքական ձայն ունեն, ինչն էլ ավելի է խորացնում գենդերային ասիմետրիան ու անհավասարությունները:[234] Շուկայական համակարգը ամրապնդում է գերակա մասկուլինային մշակույթը, ինչն էլ ավելի է թեժացնում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունը, ներառյալ՝ ոչ պատշաճ բուժօգնությունը և հաճախակի բռնությունները:

Թեև Հայաստանում ծավալվող հակագենդերային քարոզչությունը միգուցե չի ունեցել պետության կողմից խթանվող նեոլիբերալիզմի հետ ակնհայտ կապեր, նման քաղաքականություններից խաբված լինելը կարող էր նպաստավոր դեր խաղացած լինել, որպեսզի հակագենդերային քարոզչությունը հանրության շրջանում արձագանք ստանար:[235]

[232]Աննա Հարությունյան, հարցազրույց, 2017թ.
[233]Արմինե Իշխանյան, Գենդերացնելով քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարության կառուցումը. Ընտանեկան բռնության հակաքարոզչությունը Հայաստանում, Սոցիալական քաղաքականություն, Հատոր 14, համար 4, 2007թ
[234]Արմինե Իշխանյան, Գենդերայնացված անցումներ. հետխորհրդային անցման ազդեցությունը կենտրոնական Ասիայի և Կովկասի կանանց վրա, Գլոբալ զարգացման և տեխնոլոգիայի հեռանկարներ, հատոր 2, համար 3-4, 2003թ.
[235]Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.

III.
Հակագենդերային արշավի խորքային ուսումնասիրություն

ա. Մոբիլիզացման ռազմավարությունները

Ապատեղեկատվություն տարածող գլխավոր դերակատարներից ոմանք ուղիղ կապեր ունեն միմյանց, ինչպես նաև Հայաստանի ու Ռուսաստանի կառավարական պաշտոնյաների հետ, իսկ տարբեր երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ռուսաստանում ու այլ երկրներում գործող հակագենդերային խմբերի միջև նմանությունները ակնբախ են:[236] Հաշվի առնելով այն, որ բացահայտվել են այդ դերակատարներից շատերի հանդիպումները տարբեր կոնֆերանսներում, ողջամիտ կլինի ենթադրել, որ նրանք համագործակցել են, փոխանակվել գիտելիքներով ու ռեսուրսներով և մեծապես գործել՝ ըստ մյուսների օրակարգերի:[237] Թեև ըստ անհրաժեշտության՝ որոշ մարտավարություններ տեղայնացվել ու հարմարեցվել են տեղական համատեքստերին, ծնողական կոմիտեների նույն անվանումները և նույնական ուղերձները սոցիալական մեդիաներով ցույց է տալիս, որ շատ ռազմավարություններ յուրացվել ու աներեսաբար արտագրվել են: Հաշվի առնելով տեղական, ազգային ու վերազգային այս կապերը՝ Սոդերթորն համալսարանից էլիժբիետա Կոլորձժուկն առաջարկում է. «Մենք պետք է գենդերի շուրջ պատերազմը վերլուծենք ու քննարկենք որպես երկարատև վերազգային երևույթ, այլ ոչ թե՝ վերջերս ու տեղական մակարդակով տեղի ունեցած մի բան»:[238]

2013թ. Հայաստանում ծավալված հակագենդերային արշավի գլխավոր հատկանիշներից մեկը քաղաքացիական ակտիվիզմի



օգտագործումն էր լայն հանրությանը գենդերային օրենսդրության ու քաղաքականության դեմ խոսելու շուրջ՝ «խաղարկելով ավանդական ընտանիքը կորցնելու վախը»:[239] Սովորական քաղաքացիները, որոնցից շատերը քաղաքականապես պասիվ էին, բողոքի պաստառներով դուրս ելան փողոցներ ու ակտիվորեն սկսեցին գրառումներ անել ու արտատպել ֆեյսբուքյան տարբեր էջերում և մասնավորապես՝ Համահայկական ծնողական կոմիտեի, «Ստոպ գենդեր նախաձեռնության» և «Մեկ ազգ»-ի էջերում:[240] Աջակողմյան ծայրահեղականները ոչ միայն իրենց կարծիքներն էին կիսում, այլև թիրախավորում ու սպառնում էին անկախ ակտիվիստներին՝ կեղծ վիրտուալ օգտատերերի անուններից:[241] Երբ գենդերային հարցերը հայտնվում են քաղաքական օրակարգում ու քաղաքական պատեհ ժամանակ է առաջ գալիս, այս նույն դերակատարները վերստին ակտիվացնում են հակագենդերային համախմբումը և շարունակում են սոցիալական տարբեր մեդիաների զանազան

[236] Գոհար Աբրահամյան, Պայքար գենդերի դեմ, թե՞ հակաեվրոպական քարոզ, Հետք, 2015թ. օգոստոսի 17

[237] Էսթեր Կովաց և Մաարի Պոիմ, Գենդերը՝ որպես խորհրդանշական սոսինձ. Եվրոպայում հակագենդերային մոբիլիզացման մեջ պահպանողական ու ծայրահեղ աջական կուսակցությունների դիրքն ու դերը, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2015թ.

[238] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ,Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ

[239] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

[240] Աննա Հարությունյան, Վեր հանելով գենդերային դիսկուրսը Հայաստանում. Հիստերիայից մինչև կառուցողական երկխոսություն, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2017թ.

[241] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.

էջերում գործողության կանչել, որպեսզի արգելակեն քաղաքականության ընդունումը: Հակաքարոզչության դեպքերից մեկը ճիշտ վերջերս տեղի ունեցավ՝ կապված ընտանեկան բռնության օրինագծի հետ:[242]

Քաղաքացիական հասարակություն ներկայացուցիչներից մի քանիսը համարում են, որ հակագենդերային արշավը պետք է որ լավ քարտեզագրված ու նյութապես զինված լինի, քանի որ հակագենդերային դերակատարները տիրապետում են ազդեցության դիրքերի և կապեր ունեն պետության հետ, որոնք նրանց թույլ են տալիս ունենալ լրատվամիջոցների լայն հասանելիություն և որոնք նրանց ընձեռում են վախ ու ապատեղեկատվություն տարածելու հնարավորություն: Ահա այս պատճառով է, որ Կանանց աջակցման կենտրոնից Մարո Մաթոսյանն այդ արշավը բնութագրում է որպես «լավ կազմակերպված քարոզչական մեքենա»՝ մատնանշելով, որ այն երկրները, որոնք 2013թ. եղել են արշավի թիրախում, ձգտում էին Արևմուտքի հետ ավելի խորը դաշինքների:[243] «Նոր սերունդ» հասարակական կազմակերպությունից Արման Սահակյանն էլ կարծում է, որ միմյանց հետ միգուցե ուղիղ կապեր չունեցող կազմակերպություններն, այնուամենայնիվ, համերաշխություն են դրսևորում իրար՝ փոխկիսվելով գրառումներով և արտատպելով նույն դիսկուրսը՝ իրականում նպատակ ունենալով մարդկանց մոբիլիզացնել ու առաջ մղել իրենց ընդհանուր արժեքային համակարգերը:[244] Սրանից հետևում է, որ ինտերնետային դարաշրջանում, թերևս, պետք է վերաարժևորվի մոբիլիզացման հասկացությունը, որ գաղափարաբանները կարող են ապավինել զանգվածային հաղորդակցությանը, և նրանց ուղերձները կարող են հասնել լայն լսարաններին:

Հասարակություն առանց բռնության կազմակերպությունից Լիդա Մինասյանը համարում է, որ շատ անհավանական է, որ մեծ թվով մարդիկ ներգրավված լինեին նյութեր ստեղծելու ու տարածելու մեջ, քանի որ մոբիլիզացված տարբեր լրատվամիջոցներն օգտագործվում էին միաժամանակ ու ստեղծում էին հսկայական ալիքի էֆֆեկտ:[245] Սակայն որքանով էին այս դերակատարներն աշխատում միասին ու որքան մարդ էր ներգրավված, մնում է մեծապես անհայտ: Որպես այդպիսին, չափազանցություն կլինի հակագենդերային քարոզարշավը համարել շարժում, թեև արժե հիշատակել, որ ակնհայտ է հակագենդերային խմբերի գնալով մեծացող պրոֆեսիոնալիզմը, որոնց շարքում են արմատաբուխ (grassroots) փոքր կազմակերպություններից սկսած՝ մինչև հանրապետական ու միջազգային մակարդակի հկ-ներ և կայացած քաղաքական կուսակցություններ, որոնք համախմբել են, այլոց թվում, նաև հայ առաքելական եկեղեցուն և լրագրողներին:[246]

[242] Վերջապես Հայաստանի խորհրդարան կներկայացվի ընտանեկան բռնության դեմ օրենք, Ասպարեզ, 2017թ. հոկտեմբերի 23
[243] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[244] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[245] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[246] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ,Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.

Բ. Գլխավոր դերակատարներ

Հակագենդերային քարոզարշավները բեմականացնող պատասխանատուների հետաքննությունը ցույց է տալիս, որ աջակողմյա բարձրաստիճան մի քանի պոպուլիստներ ու ուլտրաազգայնական ծայրահեղականներ կապեր ունեն Ռուսաստանի ու Հայաստանի իշխանությունների, եկեղեցու, լրատվամիջոցների հետ և կարողացել են իրենց շուրջ հավաքել սովորական քաղաքացիների՝ ատելության կոչեր տարածելու նպատակով:[247] Հակագենդերային դերակատարների ընդհանուր հատկանիշներից է այն, որ նրանք կրթված են, բարձր հեղինակություն ունեցող հաստատություններում են աշխատում, ունեն անսասան վարկանիշ և պետության կողմից խրախուսանքներ են ստանում:[248] Հայտնի դարձած հաստատություններից ու անհատներից մի քանիսի անունները հիշատակված են ստորև: Սակայն կարևոր է չմոռանալ, որ այս ցանկը սպառիչ չէ, քանի որ շատ բան հանրային տեսադաշտից թաքցվում է, ինչն էլ քաղաքացիական հանրության որոշ ներկայացուցիչների դրդում է կարծել, որ հայտնի դարձած դերակատարները «այսբերգի միայն գագաթն» են:[249]

Ռուսաստանի իշխանությունները

Հայաստանը կարծես մի պարան լինի, որի մի ծայրից քաշում է Արևելքը, մյուսից՝ Արևմուտքը, երբ ինչպես Եվրամիությունը, այնպես էլ Ռուսաստանը ամրապնդում են իրենց տնտեսական ու աշխարհաքաղաքական շահերը երկրում: Հենվելով ԵՄ-ի վրա՝ որպես իր տնտեսական առևտրային գործընկերոջ, Հայաստանը միևնույն ժամանակ կախված է Ռուսաստանից իր ֆինանսական կայունության, հակամարտության կառավարման ու անվտանգության առումներով:[250] Ուսումնասիրելով հակագենդերային վերազգային շարժումների և մասնավորապես՝ Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջաններում ծավալված շարժումների երևույթը՝ պարզ է դառնում, որ Ռուսաստանի իշխանությունները մեծապես ուղղորդել են հակագենդերային քարոզարշավները՝ գործածելով այնպիսի քաղաքական սխեմաներ, որոնք «շեղում են ուշադրությունն իրական սոցիալական խնդիրներից՝ դեպի հնարովի խնդիրները»:[251]

Կրեմլի ռազմավարական շահերը Հայաստանում անցնում են քաղաքական ու տնտեսական ոլորտներից անդին, շատ դեպքերում ռուսաստանյան ներքին քաղաքականությունը ուղղակիորեն իջեցվում է Հայաստան:[252] Վառ օրինակ է 2012թ. Ռուսաստանում օրենսդրական փոփոխությունների ընդունումը, որով Արևմուտքի կողմից ֆինանսավորվող հկ-ները պետք է գրանցվեին որպես «արտասահմանյան գործակալներ»:[253] Թեև Հայաստանը նույն ուղիով չընթացավ, Հայաստանում Ռուսաստանի

[247] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ. և Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[248] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.
[249] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ. և Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[250] Կարլոտա Վեբեր, Եվրոպա, Եկեք խոսենք Հարավային Կովկասում ԼԳԲՏԻ իրավունքների մասին, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2016թ.
[251] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո. ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, կովկասյան հրատարակություն, 2016թ.
[252] Նիկիտա Լոբանով, ԵԵՄ ռազմավարական նարատիվն Արևելյան գործընկերության երկրների հանդեպ և ՌԴ հետ կոնֆլիկտի ինտենսիվացումը. Կանգ առնել, դանդաղեցնել, թե՞ առաջ գնալ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2016թ.
[253] Նոնա Շահնազարյան, Այգյուն Ասլանովա և Էդիտա Բադասյան, Ծիածանադրոշների ներքո. ԼԳԲՏԻ իրավունքները Հարավային Կովկասում, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ամսագիր, կովկասյան հրատարակություն, 2016թ.

դեսպան Իվան Վոլինկինը կոչ արեց փակել այն հկ-ները, որոնք «սեպ են խրում Հայաստան-Ռուսաստան հարաբերություններում», ինչից հետո ծայրահեղականները հկ-ների դեմ սկսեցին զազրելի հակաքարոզչություն՝ հատկապես թիրախելով ու սպառնալով ԼԳԲՏ իրավունքները պաշտպանող հկ-ներին:[254]

Քաղաքացիական հանրության ներկայացուցիչները համարում են, որ հակագենդերային արշավի ուղղորդվածությունը Ռուսաստանի կողմից ակնբախ է: Երբ հակագենդերային հիստերիան իր գագաթնակետին էր, ռուսաստանցի այսպես կոչված՝ «փորձագետները» թեմայի շուրջ մի քանի հարցազրույց տվեցին հայաստանյան լրատվամիջոցներին, իսկ քարոզարշավի ուղերձները կարծես ուղղակիորեն արտագրված լինեին ռուսաստանյան քարոզչությունից: Հետքում հրապարակված՝ «Պայքար գենդերի դեմ, թե՞ հակաեվրոպական քարոզ» հոդվածում հեղինակը նշում է. «ՀԿ ներկայացուցիչներն այն կարծիքին են, որ այս թվացյալ գաղափարաբանական բանավեճն ավելի խորն արմատներ ունի, որոնք կապված են Ռուսաստանի հետ, իրականացվում են Ռուսաստանի նախագահ Վլադիրմի Պուտինի հրահանգով, ով նախատեսում է վերականգնել նախկին Խորհրդային Միությունը՝ արևմտյան ժողովրդավարական արժեքները խեղաթյուրելով և ներկայացնելով որպես պիղծ արժեքներ և ազդեցության հասնելու նպատակով թիրախելով հատկապես ընտանիքի հասկացությունը»:[255] Կանանց աջակցման կենտրոնի ղեկավար Մարո Մաթոսյանն էլ հաստատում է. «Թեև Ռուսաստանը չի կարող կատեգորիկ կերպով արգելել մարդու իրավունքները, ինչպես խորհրդային տարիներին էր, այն խորամանկորեն գտել է լիբերալ դեմոկրատական կարգը ցնցելու ավելի նուրբ ու արդյունավետ եղանակ՝ տարածելով այլընտրանքային լուրեր, ստեր ու վախ»:[256]

Հակագենդերային արմատաբուխ (grassroots) նախաձեռնություններ

2013թ. գարնանը ռուսաստանյան «Համառուսական ծնողական դիմադրության» նմանությամբ ստեղծված պահպանողական ծնողական կոմիտեները սկսեցին աշխուժանալ Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում՝ նույնանման անվանումների, լոզունգների և լոգոտիպերի նշանաբանությամբ՝ քարոզելով ընտանիքի արժեքներ ու իդեալներ:[257] Համահայկական ծնողական կոմիտեն, ինչպես և մյուսները, կիրառում է բարոյական խուճախի մարտավարությունը և շահում հանրության ուշադրությունը՝ միևնույն ժամանակ շեշտադրելով ծնողների դերը իշխանություն ու ավանդական արժեքներ վերակերտելու հարցում:[258] Հետաքրքրական է, որ չի գործադրվում որևէ ջանք՝ թաքցնելու, որ սա ռուսաստանյան քարոզչություն է: Կոմիտեի գաղափարների մեծ մասն ուղղակիորեն է վերցված «Համառուսական ծնողական դիմադրությունից» և մնում է ռուսերեն լեզվով կամ թարգմանվում հայերեն՝ ռուսերեն ենթագրերով: Այս խմբերը մինչ օրս շարունակում են միջոցառումներ կազմակերպել, օրինակ, 2014թ. նրանք կազմակերպել են համաժողով՝ «Սպառնալիքներ հոգևոր-ազգային արժեքներին և դիմադրության գործիքներ» խորագրով, որի հռչակված առաքելությունն էր «գնահատել հայ ընտանիքին ու հոգևոր ավանդական արժեքներին ուղղված մարտահրավերներն ու սպառնալիքները»:[259]

[254] Նույնը
[255] Գոհար Աբրահամյան, Պայքար գենդերի դեմ, թե՞ հակաեվրոպական քարոզ, Հետք, 2015թ. օգոստոսի 17
[256] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ
[257] Գոհար Աբրահամյան, Պայքար գենդերի դեմ, թե՞ հակաեվրոպական քարոզ, Հետք, 2015թ. օգոստոսի 17
[258] Տես, օրինակ, Համահայկական ծնողական կոմիտեի կայքը http://hanun.am
[259] Տես https://www.facebook.com/events/1570863506478731/.

Համահայկական ծնողական կոմիտեից բացի կան նաև մի շարք արմատաբուխ նախաձեռնություններ, որոնք ղեկավարվում են գենդերի ու Արևմուտքի հակաքարոզչությամբ զբաղվող նույն դերակատարների կողմից:[260] Այդ թվում են՝ « Stop G7», «Հանուն ինքնիշխանության վերականգնման», «Ստոպ գենդեր նախաձեռնություն», «Մեկ ազգ», «Երևանյան աշխարհաքաղաքական ակումբ», «Լույս» տեղեկատվական վերլուծական կենտրոն, և «Ի՞նչ, Որտե՞ղ, Ո՞վ ակումբ» նախաձեռնությունները կամ խմբերը, որոնք բոլորն ունեն միանման նկարագիր: Այս խմբերում ներգրավվածներից առնվազն մի քանիսը հաճախել են Հայաստանի ամերիկյան համալսարան և/կամ աշխատել արևմտյան կազմակերպություններում, ունեն անգլերենի և հկ դաշտի լավ իմացություն, ինչը նրանց շատ ավելի տեղեկացված է դարձնում ու բարձրացնում նրանց կողմից սպառնալիքի լրջությունը:[261]

Համահայկական ծնողական կոմիտեի ղեկավար Արման Բոշյանը ռուսական պետական պաշտոնյաների մոտ տարիներ շարունակ աշխատել է որպես լրագրող, դարձել Երևանյան աշխարհաքաղաքական ակումբի խոսնակը, նաև ակտիվ է «Լույս» տեղեկատվական-վերլուծական կենտրոնում:[262] Նա մասնակցել է «Համառուսական ծնողական դիմադրության» կազմակերպած մամլո ասուլիսներում,[263] դասավանդել է Ռուսաստանի կառավարության կողմից ֆինանսավորվող և Երևանում գործող՝ «Ռուսաստանի գիտական ու կրթական կենտրոնում»:[264] Բոշյանը հայկական մամուլին հայտարարել է, որ կոմիտեի ստեղծումը գենդերի շուրջ թեժացած բանավեճերի ամենասուր ժամանակահատվածում պարզապես համընկնում է եղել, սակայն նրա անցյալ ու ներկա գործունեությունը հետազոտելով՝ պարզ են դառնում նրա քաղաքական շարժառիթները:[265] Բոշյանը նաև մի շարք քաղաքական հոդված է հրապարակել հօգուտ ռուսամետ քաղաքականության, ինչպես նաև ապահովում է ռուսերեն լեզվով լրատվական հոսք Երևանից դեպի Ռուսաստան:[266]

Սերգեյ Կուրղինյանը՝ հայտնի որպես «Պուտինի աջ ձեռք»,[267] Ռուսաստանում բնակվող ծագումով հայ է, հիմնադրել է կոմունիստական հայրենասիրական «Ժամանակի էությունը» շարժումը, որի առաքելությունն է վերականգնել Խորհրդային Միությունը:[268] Հետաքրքրական է, որ «Ժամանակի էությունը» կարևոր օժանդակող դեր է կատարում Համառուսական ծնողական դիմադրություն շարժման մեջ: Կուրղինյանը 2013թ. հակագենդերային արշավի գագաթնակետին այցելել է Հայաստան, հարցազրույցներ տվել հայաստանյան լրատվամիջոցներին և ուղիղ եթերով հայտարարել է, թե Եվրոպան խրախուսում է նույնասեռական ամուսնություն և ինցեստ:[269] Հետաքրքրական է, որ 2013թ. նա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ միասին «Համառուսական ծնողների դիմադրության գագաթաժողովին» հրավիրվել էր որպես պատվավոր հյուր:[270] Կուրղինյանի կինը՝ Մարիա Մամիկոնյանցը, ով նաև «Համառուսական ծնողական դիմադրության» նախագահողն է, նույնպես ակտիվ է ու առանցքային դեր է ունեցել Ռուսաստանում ընտանեկան բռնության դեմ օրենքի որոշ դրույթների ապաքրեականացման օգտին քարոզելու հարցում: Նրա հայտնի խոսքերից է, որ ծիծաղելի է քրեականացնել «գրեթե բոլոր ընտանիքներում կիրառվող սովորական դաստիարակչական ապտակները, որոնց նպատակն է երեխաներին իրենց չափերը հասկացնելը»:[271]

[260] Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24
[261] Սևան Պետրոսյան, հարցազրույց, 2017թ.
[262] Աննա Նիկողոսյան, Հայաստանում գենդերը աշխարհաքաղաքական է, Open Democracy, 2016թ. ապրիլի 16
[263] Նույնը
[264] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[265] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[266] Նույնը
[267] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.
[268] «Ժամանակի էությունը» շարժման մանիֆեստ՝ http://eot.su/sites/default/files/manifest_eot_eng.pdf.
[269] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[270] Նույնը
[271] Շոն Ուոքեր, Ընտանեկան բռնության մասին օրենքը մեղմացնելու՝ ռուսաստանյան իշխանություններ քայլը զայրույթ է բարձրացրել, Գարդիան, 2017թ. հունվարի 19

Բացի Բոշյանից ու Կուրղինյանից, արշավում ակտիվորեն ներգրավված են եղել ևս մի քանի հակագենդերային դերակատարներ: Բլոգեր Տիգրան Քոչարյանը, ով հայտնի է նաև որպես Փիղ, ղեկավարում է «Ինչ, Որտեղ, Երբ» ակումբը[272] և ֆեյսբուքում ունի ավելի քան 12.500 հետևորդ: Օգտագործելով աստեղային իր հնարավորությունները, նա քարոզել է անհանդուրժողականություն ԼԳԲՏ համայնքի նկատմամբ և պայքար գենդերային հավասարության, հակախտրականության ու ընտանեկան բռնության մասին օրինագծերի դեմ:[273] Հայկ Նահապետյանը գլխավորում է Եվրասիական տնտեսական միությունն ու Կրեմլը գովերգող՝ «Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնությունը:[274] Համարվում է նաև, որ նա ակտիվ է «Stop G7»-ում, Երևանյան աշխարհաքաղաքական ակումբում և «Լույս» տեղեկատվական վերլուծական կենտրոնում:[275] Հայկ Նահապետյանն ակտիվորեն արտահայտվել է ընտանեկան բռնության մասին օրինագծի քննարկումների ժամանակ և Արևմուտքը ներկայացրել որպես Հայաստանի ռազմական թշնամի՝ ապատեղեկատվություն տարածելով իբր ԱՄՆ-ն Հայաստանում կենսաբանական զենք է կիրառել:[276] Ոմանք համարում են, որ Համահայկական ծնողական կոմիտեն այժմ նա է ղեկավարում:[277] «Քրիստոնյաներն ընդդեմ մարդկանց համարակալման» միավորման ու «Մխիթարիչ» հիմնադրամի ղեկավար Խաչիկ Ստամբոլցյանը նույնպես ակտիվ է այս արշավում, ով որակվել են որպես «կրոնական ֆանատիկոս»:[278] Նա, այլոց հետ միասին, կոչ էր անում հանել «գենդեր» եզրույթն օրենսդրությունից:[279] 2014թ. նա ներխուժեց գենդերային կրթության վերաբերյալ հասարակություն առանց բռնության կազմակերպության հրավիրած կլոր-սեղան քննարկումը՝ փորձելով խանգարել այն:[280]

ՀՀ իշխանությունները

Կառավարության որոշ անդամներ, որոնք ամենայն հավանականությամբ հակագենդերային արշավի կազմակերպման պատասխանատուները չեն, ուղիղ կապեր ունեն դրա դերակատարների հետ ու սատարում են նրանց քարոզչությունը:[281] Պետության ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև ոչ ֆորմալ խոսակցությունների ժամանակ պարզ է դարձել, որ պետությունը դեռևս 2012թ. տեղյակ է եղել, որ հակագենդերային արշավ է նախապատրաստվում:[282] Որոշ փորձագետներ ենթադրում են, որ պետությունը պետք է որ տեղեկացված լիներ Ռուսաստանից այս արշավի համար ուղղված ֆինանսական հոսքերի մասին:[283] Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ պարզ էր, որ հակագենդերային դերակատարները սերտ կապեր ունեն կառավարության պաշտոնյաների հետ[284] ու իրենց այս «ուժեղ դիրքն» օգտագործում են նոր դաշնակիցներ ներգրավելու նպատակով:[285] Օրինակ, ՀԱՍԱԿ (Հանուն սոցիալական արդարության) կուսակցությունից Արման Ղուկասյանն ու իր կուսակիցները ավելի վաղ էին սկսել խթանել ռուսամետ կողմնորոշումներ ու հակագենդերային քարոզչությանը միացել են ավելի ուշ:[286] Ապատեղեկատվություն տարածելու գործում ակտիվ մասնակցություն են ունեցել նաև մի շարք բարձրաստիճան պետական գործիչներ: ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը ոչ միայն բարձրաձայնել էր, որ գենդերը ընդամենը

272 Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24
273 Anna Muradyan, Storm Over "Gender" Word in Armenia, Institute for War and Peace Reporting, August 23, 2013.
274 Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24
275 Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
276 Նույնը
277 Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
278 Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
279 Նույնը
280 Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
281 Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
282 Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
283 Անանուն, հարցազրույց, 2017թ.
284 Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
285 Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
286 Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24

բառիմաստի հարց է ու անիմաստ մի եզրույթ, այլ պարզվել է, որ նրա ենթակայությամբ աշխատող շատերը կապված են եղել հակագենդերային արշավի հետ:[287]

Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները

Երբ հակագենդերային արշավն ուժեղ թափով ընթանում էր, հակագենդերային դերակատարների ու Հայ առաքելական եկեղեցու շահերը համընկան, քանի որ եկեղեցին ուներ իր սեփական ազգայնական օրակարգն ամրապնդելու խնդիր: Այսպիսով, եկեղեցու որոշ ներկայացուցիչների համար պատեհ ժամանակ էր ներկայացնել ընտանիքը և հայկական ավանդույթները պահպանելու մասին իրենց տեսակետները:[288] Արշավի ընթացքում մի շարք բարձրաստիճան սպասավորներ Կանանց ու Տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը քննադատող հարցազրույցներ տվեցին ու հոդվածներ գրեցին, ինչպես նաև մասնակցեցին բողոքի ցույցերին, հակաքարոզչության ու վախի տարածմանը՝ իրենց յուրահատուկ ուղերձների միջոցով:[289]

Քաղաքացիական հանրության կարծիքը հավասար կեսերի է բաժանված՝ կապված եկեղեցու դիրքորոշման ու հնարավոր ուժի շուրջ: Ոմանք պնդում են, որ նրա ուժը մեծանում է՝ հաշվի առնելով վերջին տարիներին իր գերիշխող մշակութային դիրքն ու պետության ու եկեղեցու օրակարգերի համակարգված լինելը,[290] մինչդեռ մյուսները պնդում են, որ եկեղեցին տեսանելի ապագայում վերածնունդ չի ապրի այն պատճառով, որ չունի հաղորդակցության հզոր միջոցներ, որոնցով աջակցություն կմոբիլիզացնի:[291] Կան նաև մարդիկ, ովքեր պնդում են, որ բարձրաստիճան սպասավորների կողմից սատարում արտահայտելն արդեն իսկ ընդհանուր առմամբ եկեղեցու անունից խոսել է նշանակում,[292] մինչդեռ հետազոտության մասնակցած այլ մասնակիցներ համարում են, որ եկեղեցու մի քանի տեսանելի ներկայացուցիչների կարծիքը չի կարող արտացոլել ողջ հաստատության կարծիքը:[293]

Թե որքանով է եկեղեցու ներգրավվածությունը հակագենդերային արշավում արդյունավետ, դեռևս պարզ չէ, սակայն ակնհայտ է, որ մի քանի ազդեցիկ քահանաների ուղերձները սեփականացվել են Համահայկական ծնողական կոմիտեի ու այլոց կողմից և օգտագործվել հանրությանը մանիպուլացնելու նպատակով:[294] Եկեղեցու սպասավորները Համահայկական ծնողական կոմիտեի ետևում կանգնած հայտնի ծայրահեղականների հետ համատեղ հանդես են եկել կլոր սեղան քննարկումներում, վերջիններս էլ օգտագործել են հայկական ընտանեկան արժեքները քայքայելու մասին եկեղեցու ուղերձները: Նրանք հոդվածներ են տպագրել չափազանցված այնպիսի հայտարարություններով, ինչպիսիք են՝ «Ոչ գենդերային օրենքին, Ոչ ազգային քայքայմանը, Հանուն հայ ընտանիքի, Հանուն հայ երեխաների, Հանուն մեր երեխաների»:[295] Նախքան 2013թ. հակագենդերային արշավը Եկեղեցին զբաղված է եղել ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության ու բռնության քարոզով:[296] Վառ օրինակ է եկեղեցականների մասնակցությունը 2012թ. Բազմազանության երթի դեմ ելած հակացույցին:[297] Եկեղեցու գործողություններն այս ուղղությամբ չեն դադարել: Անցյալ տարվա փետրվարին

[287] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[288] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[289] Մարո Մաթոսյան, Ռուսաստանի կեղտոտ խաղը, Ասպարեզ, 2017թ. փետրվարի 24
[290] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ. և Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[291] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[292] Անանուն, հարցազրույց, 2017թ.
[293] Հասմիկ Գևորգյան, հարցարույց, 2017թ.
[294] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[295] Աննա Հարությունյան, Վեր հանելով գենդերային դիսկուրսը Հայաստանում. Հիստերիայից մինչև կառուցողական երկխոսություն, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2017թ.
[296] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[297] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ

Հայաստանի կրոնական մայրաքաղաք համարվող Էջմիածնում կազմակերպված միջոցառման ժամանակ միաբանվել էին ազդեցիկ գործիչներ, որոնք հավաքվել էին խոսելու նույնասեռ ամուսնությունների վտանգի մասին, ի թիվս այլ թեմաների:[298]

Լրատվամիջոցները

Լրատվական վերահսկողությունը պետությանը ցույց է տվել, որ այն հայրիշխանական կարծրատիպեր տարածելու և կանանց ու ԼԳԲՏ իրավունքները ճնշելու արդյունավետ եղանակ է:[299] Հակագենդերային արշավի թեժ պահին մի շարք պահպանողական լրատվական գործակալություններ հրավիրեցին Համահայկական ծնողական կոմիտեի գլխավոր դերակատարներին, եկեղեցու ներկայացուցիչներին ու այլոց՝ գենդերային հարցերի շուրջ իրենց տեսակետներին ձայն տալու նպատակով: Երբ քննարկումներին հրավիրվել էին ակտիվիստները, նրանց ձայները հաճախ լռեցվում էին:[300] Հետագայում ավելի ուղղակիորեն բացահայտելով այս շարժման կապը քաղաքական գործընթացների հետ, նոր քաղաքական զարգացումներին հակազդեց հակագենդերային խմբերի հանկարծակի ակտիվացումը հեռուստատեսությամբ, ռադիոյով և սոցիալական մեդիաներում:[301]

Իշխող Հանրապետական կուսակցության անդամին պատկանող «Իրավունք» թերթը, որը հանդիսանում է տեղեկատվական հարթակ ՀԱՍԱԿ կուսակցության ու ռուսաստանյան քարոզիչների համար, ավելի թեժացրեց գենդերային հիստերիան, երբ ընդունվում էր Կանանց ու Տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը,[302] և սկսեց հոդվածներ հրապարակել հակախտրականության ու ընտանեկան բռնության մասին առանձին օրենքներ անցկացնելու վտանգների մասին:[303] «Նոր սերունդ» կազմակերպությունից Արման Սահակյանը «Իրավունք» թերթը համարում է «քաղաքականացված լրատվամիջոց», որը միտումնավոր խեղաթյուրում ու ուռճացնում է կանանց ու ԼԳԲՏ խնդիրները՝ հետապնդելով քաղաքական շահեր:[304] 2014թ. մայիսին «Իրավունքը» թերթը հրապարակեց «Նրանք ծառայում են միջազգային համասեռամոլ լոբինգի շահերին» վերնագրված հոդվածը, որը քննադատում էր գենդերային քաղաքականությունն ու կոչ էր անում սև ցուցակի մեջ ներառել 60 ակտիվիստների, ովքեր հայտնի են՝ որպես ԼԳԲՏ պայքարը սատարողներ:[305] Հոդվածը կոչ էր անում կոնկրետ գործողությունների դիմել՝ խրախուսելով քաղաքացիներին չհաղորդակցվել նրանց հետ, իսկ պետական պաշտոնյաներին՝ չընդունել նրանց աշխատանքի պետական ծառայության ոլորտ կամ եթե արդեն աշխատում են, ապա հեռացնել նրանց աշխատանքից:[306] Ակտիվիստներից մի քանիսը դիմեցին դատական ատյաններին՝ պնդելով, որ հոդվածը ատելության հիմքով հանցանք է, քանի որ պարունակում էր նաև իրենց մասին անձնական տվյալներ, սակայն դատարանը ներկայացված հայցում հանցակազմ չտեսավ:[307] Նույն տարում «Իրավունք» թերթի խորհրդի և Հանրապետական կուսակցության անդամ Հայկ Բաբուխանյանը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանից ստացավ Պատվո շքանշան:[308]

[298] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ
[299] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[300] Շարլոթ Տապանի, Արդյո՞ք լուծումը ներառումն է. Հայաստանում կանանց կազմակերպությունների ու անհատ կին ակտիվիստների քաղաքական մասնակցության ուժային վերլուծություն, մագիստրոսական թեզ, 2016թ.
[301] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[302] Նույնը
[303] Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24 Տես, օրինակ, http://www.iravunk.com/news/18058
[304] Արման Սահակյան, հարցազրույց 2017թ.
[305] Գեորգի Լոմսաձե, Հայաստան, դեղին պարբերականը կարող է հրապարակել նույնասեռականների սև ցուցակ, վճռել է դատարանը, Eurasianet, 2014թ. հոկտեմբերի 31
[306] Նույնը
[307] Աննա Նիկողոսյան, Հայաստանում գենդերը աշխարհաքաղաքական է, Open Democracy, 2016թ. ապրիլի 16
[308] Նույնը

Թեև գենդերային հակաքարոզչությունը ամենաբարձրը հնչեցնում էին «Իրավունք» թերթի լրագրողները, այլ ինտերնետային թերթեր, ինչպես՝ tert.am-ը, news.am-ը, տպագիր մամուլից ու ռադիոներից մի քանիսը նույնպես լծված էին ապատեղեկատվություն տարածելու գործին:[309] Օրինակ, ռուսական «Սպուտնիկ» ռադիոալիքի հայկական մասնաճյուղի ներկայացուցիչները հրավիրել էին վերը նշված դերակատարներից մի քանիսին գենդերային հարցերի շուրջ հարցազրույցներ տալու և ընտանեկան բռնության մասին օրինագծի դեմ խոսելու:[310]

Ընտանիքը պաշտպանող արևմտյան կազմակերպություններ

Քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ կասկածներ ունեն, որ հակագենդերային քարոզարշավում միգուցե ներգրավված են եղել նաև ընտանիքի պաշտպանությունը քարոզող որոշ արևմտյան կազմակերպություններ:[311] ՓԻՆՔ-ից Նվարդ Մարգարյանը մատնանշում է, որ Համահայկական ծնողական կոմիտեի նմանությամբ՝ ընտանիքը քարոզող կազմակերպություններ սկսել են առաջանալ ու ակտիվանալ տարբեր համատեքստերում, ներառյալ՝ Ֆրանսիայում, Լյուքսեմբուրգում, Լիտվայում, Էստոնիայում, Չեչնիայում, Լեհաստանում և Միացյալ Նահանգներում, որոնցից շատերը Ռուսաստանի հետ սերտ կապեր չունեն:[312] Թեև հայաստանյան քարոզչությունը ամենայն հավանականությամբ մեծապես ռուսաստանյան ազդեցությունն է կրում, սակայն հնարավոր է նաև, որ արմատաբուխ (grassroots) նախաձեռնությունները կապեր ունենան այնպիսի խմբերի հետ, ինչպիսիք են՝ «Ընտանիքների համաշխարհային կոնգրեսը», որը Միացյալ նահանգներում ստեղծված կոալիցիա է՝ բաղկացած աջակողմյան միջազգային մի քանի խմբերից, որոնք խստորեն ընդդիմանում են վերարտադրողական, ներգաղթյալների ու նույնասեռականների իրավունքներին: 2016թ. Թբիլիսիում կայացավ «Ընտանիքների համաշխարհային կոնգրեսի» համաշխարհային կոնֆերանսը՝ հայտնի նաև որպես «աշխարհի ամենամեծ սիմպոզիումն ընդդեմ նույնասեռականների»,[313] որի մասնակիցները բացահայտորեն սատարում էին Ռուսաստանում նույնասեռականների առնչությամբ տարվող քաղաքականությունն ու տարածաշրջանում նույնասեռականության դեմ ծավալվող քաղաքականությունները.[314]

[309] Արման Սահակյան, հարցազրույց 2017թ.
[310] Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24
[311] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ. և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[312] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[313] Hatewatch Staff, World Congress of Families gathering in Tbilisi showcases anti-LGBT rhetoric and conspiracy theories, Southern Poverty Law Center, June 1, 2016
[314] Նույնը

գ. Ուղերձների ձևակերպման ռազմավարությունը

Հակագենդերային արշավի համար հաջողված ուղերձներ ձևակերպելու ու դրանք մեծ թվով մարդկանց հասցնելու ուղղությամբ գործադրվել են մի քանի ռազմավարություններ: Կրթված ու հռետորական հմտություններ ունեցող մարդիկ, ինչպիսին է Բոշյանը, օգտագործում էին քվազի-գիտական ու չափազանցված հռետորաբանություն՝ խաղալով մարդկանց հույզերի վրա:[315] Ավելի լայն տարածաշրջանում ծավալվող հակագենդերային արշավների նմանությամբ՝ այս դերակատարները բարձրացնում են մարդկանց զգացմունքները ռացիոնալ դիսկուրսից վեր ու հավասարեցնում գենդերային հավասարությունը պաթոլոգիաների ու շեղումների հետ՝ հաջողությամբ հարուցելով մարդկանց վախերը:[316]

Հատկանշական է, որ ուղերձները հստակորեն ուղղված են Հայաստանի հասարակության որոշակի հատվածներին: Ըստ Կանանց աջակցման կենտրոնից Մարո Մաթոսյանի՝ «Արշավը ստեղծեց ահռելի վախ, որը պատեց բնակչության երկու կարևոր հատվածների. մեկը՝ պահպանողական, կրոնամետ խումբն էր ու նրանց ջատագովները, և մյուս հատվածը՝ սովորական քաղաքացիներին էին, որոնք արժևորում են այսպես կոչված՝ ավանդական հայկական ընտանիքը»:[317] Շեշտադրելով ընտանեկան արժեքները՝ հակագենդերային քարոզչության առաջնորդներն առաջ էին մղում այն միտքը, թե գենդերային հավասարության ու ընտանեկան բռնության դեմ օրենքների ընդունումը կհանգեցնի հայ ավանդական ընտանիքի քայքայմանը:[318] Կային նույնիսկ գենդերային հավասարության, հակախտրականության ու ընտանեկան բռնության մասին բոլոր օրինագծերը միասին շրջանառությունից հանելու մասին հրապարակային կոչեր:[319]

Սոցիալական ցանցերով քարոզչությունը կիրառում է վախի ստեղծման մարտավարությունը՝ ցուցադրելով կանացի հագուստով տղամարդկանց ու տրանսգենդեր զույգերի կերպարներ, տարածելով նրանց մասին տեսանյութեր ու հոդվածներ՝ պնդելով, թե Եվրոպայից ոգեշնչված օրենսդրությունը թույլ է տալիս ինցեստի ու պեդոֆիլիայի մուտքը Հայաստան:[320] Ավելին, նրանք հանրությանը մղում են համարելու, թե ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունումը կհանգեցնի նույնասեռ ամուսնությունների օրինականացման, ինչպես նաև պատշոնյաներին թույլ կտա խլել

[315] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[316] Վերոնիկա Գրժեբալսկա, Ինչու է «գենդերային գաղափարախոսության» դեմ պատերազմը կարևոր և ոչ միայն ֆեմինիստների համար. հակագենդերիզմն ու նեոլիբերալ ժողովրդավարության ճգնաժամը, Վիշեգրադյան տեսանկյուն, 2016թ. մարտի 7
[317] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[318] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Ջաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ.
[319] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[320] Մարիաննա Գրիգորյան, Հայաստան, Պայքարն ընդդեմ գենդերային հավասարության վերածվում է ընդդեմ Եվրամիության պայքարի , Eurasianet.org, 2013թ հոկտեմբերի 11

Նշանը տեղադրված է հակա-գենդերային դերակատարների կողմից Երևանում:

երեխաներին ընտանիքներից ու տեղավորել ապաստաններում, որտեղ նրանց սեռական շահագործման կենթարկեն կամ նրանց կորդեգրեն նույնասեռ զույգերը:[321] Քարոզարշավի մասնակիցները խաղում են ներս թափանցող Արևմուտքի մասին քաղաքացիների վախերի վրա և հրահրում մեկուսացնել «օտարերկրյա գործակալներին ու գրանտակերներին»՝ ջանալով վարկաբեկել ակտիվիստների տարած աշխատանքը:[322] Բարոյախրատական լեքսիկոնի լայն կիրառմանը վերաբերող մի հոդվածում Ավստրալիայի Դիքին համալսարանից Քայ Վիլկինսոնն գրում է.

«Բարոյական խուճապներն ու ավելի լայն բարոյական խուճապները, որոնց մասն են դրանք կազմում, ակնբախ հիշեցումն են այն մասին, որ անձնականը քաղաքական է և քաղաքականը սաստիկ անձնական է, կամ կարող է արագորեն դառնալ անձնական: Ինչպես ԱՄՆ-ում և այլ երկրներում ցույց է տվել վերարտադրողական իրավունքների ու սեռական բռնության հետ կապված փորձը, այնպես էլ ԼԳԲՏ իրավունքների հետ կապված ռուսաստանյան իրադարձություններն են ցույց տվել, որ բարոյախրատական քաղաքականության պրակտիկաները էությամբ պառակտող ու ապամարդկայնացնող են, ինչը մարդկանց արժենում է կյանքի ու ապրուստի գին, և հանգեցնում են նրան, որ այդ նույն մարդիկ մեղադրվում են զոհ դառնալու համար»:[323]

[321] Տես Ծնողական կոմիտեի ֆեյսբուքյան էջի հայտարարությունը : https://www.facebook.com/CnogakanKomite/posts/362424873945112?pnref=storyվ

[322] Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, Հայաստան. հույսի ու անվստահության արանքում, Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, 2014թ.

դ. Ֆինանսավորման մեխանիզմներ

Համահայկական ծնողական կոմիտեի ղեկավարները հրապարակայնորեն հայտարարել են, որ իրենց ինքնաֆինանսավորվում են և արտաքին աջակցությունից կախված չեն:[324] Թեև միգուցե նրանք որոշ չափով ճիշտ են, կան ապացույցներ, որ կոմիտեն և հակագենդերային արշավի միջոցառումներում ներգրավված այլ մարդիկ ռուսաստանյան աղբյուրներից ֆինանսավորում են ստանում: «Նոր սերունդ» հկ-ի իրականացրած հետաքննությունը բացահայտել է, որ այս քաղաքացիական ակտիվիստները Կրեմլից ֆինանսավորվել են եվրոպական արժեքների դեմ պայքարելու համար արտասահմանում դասընթացների մասնակցելու նպատակով:[325] Հաշվի առնելով այն, որ այս անհատները նաև կազմակերպությունների ղեկավարներ են, օրինակ՝ Համահայկական ծնողական կոմիտեի, քաղաքացիական հանրության ներկայացուցիչները համոզված են, որ կազմակերպությունները նույնպես ֆինանսավորվում են Ռուսաստանի կառավարության կողմից:[326] Հիշարժան է նաև այն փաստը, որ Համահայկական ծնողական կոմիտեն բավականին մեծ գումարներ է ծախսում իրենց ֆեյսբուքյան գրառումները գովազդելու վրա, որպեսզի դրանք հասանելի դարձնի հազարավոր մարդկանց,[327] իսկ իրենց ներկայացուցիչները տարբեր քննարկումների ներկայանում են թանկարժեք տեսաձայնային սարքավորումներով:[328] Այս երկու դրսևորումները ցույց են տալիս, թե նյութապես որքան լավ է ապահովված արշավը:

Այս ամենի համատեքստում առավել բովանդակ ու տեղեկատվությամբ հարուստ է «Իրազեկ քաղաքացիների միավորման»՝ Երևանում գործող արևմտամետ գիտա-վերլուծական կազմակերպության հետաքննական զեկույցը, որը հրապարակվեց 2016թ. վերջին և բացահայտեց ընտանեկան բռնության մասի օրինագծի շուրջ ապատեղեկատվություն տարածողների մասին տվյալներ, մասնավորապես՝ Երևանում Ռուսաստանի դեսպանատնից, «Ռոսսոտրուդնիչեստվո» ռուսական պետական հիմնադրամից, «Ռուսսկիյ միր» հիմնադրամից ու Ռուսաստանի Ֆինանսների նախարարությանը հետ առչնվող «Գորչակով» հիմնադրամից աջակցություն ստանալու և «ռուսաստանյան դրամից կախված» լինելու մասին:[329] Աջակցություն ստացողների շարքում էին՝ Համահայկական ծնողական կոմիտեն, «Stop G7»-ը, Երևանյան աշխարհաքաղաքական ակումբը, ՀԱՍԱԿ կուսակցությունը, «Լույս» տեղեկատվական վերլուծական կենտրոնը, Հանուն ինքնիշխանության վերականգնման կազմակերպությունը, «Իրավունք» թերթը, և Սպուտնիկ Արմենիա լրատվամիջոցը:[330] Այս հարցի կապակցությամբ «Իրազեկ քաղաքացիների միավորման» ղեկավար Դանիել Իոնիսյանն ասում է. «Սա պարզապես հարմար առիթ է լայն հանրության շրջանում հակաեվրոպական տրամադրություններ տարածելու համար, քանի որ հայտնի բան է, որ ընտանիքն ու երեխաները շարունակում են մեր հասարակության առավել զգայուն կետերը լինել»:[331]

[323] Ռուսաստանի օրենքները նույնասեռականների դեմ. Բարոյական խուճապի քաղաքականությունն ու հետևանքները, The Disorder of Things, 2013թ. հունիսի 13
[324] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[325] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[326] Նույնը
[327] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[328] Գայանե Աբրահամյան, հարցազրույց, 2017թ
[329] Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից, Իպրես, 2016թ. դեկտեմբերի 24
[230] Նույնը
[231] Գայանե Աբրահամյան, «Չափազանց վտանգավոր». Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված նոր օրենքը Հայաստանում դատապարտվում է «չափազանց եվրոպական» լինելու պատճառով, Codastory, 2017թ. փետրվարի 12

IV.
Քաղված դասեր. ինչ ռազմավարություններ կարող ենք որդեգրել Հայաստանում հակագենդերիզմի խնդիրը լուծելու համար



Հիմնվելով նյութերի վերլուծության և փորձագետների հետ հարցազրույցների վրա՝ այս բաժնում շարադրված առաջարկների նպատակն է տեղի իրողություններից և պայմաններից բխող խնդիրներին մի շարք լուծումներ ներկայացնել: Հաշվի առնելով այն, որ անհրաժեշտ է վերևից իջեցվող փոփոխությունների ուղղությամբ շարունակել ճնշում գործադրել՝ զուգադրելով այն արմատաբուխ (grassroots) ջանքերի հետ, կանանց և ԼԳԲՏ կազմակերպություններին ուղղված առաջարկները ներառում են ինչպես նախաձեռնություններ հիմնելու, այնպես էլ՝ քաղաքական լոբբինգ իրականացնելու վերաբերյալ կետեր: Վերջին տարիներին քաղաքացիական հասարակությունը մի քանի հաղթանակներ է գրանցել՝ տապալելով կառավարության անբարենպաստ որոշումներն ու բարձրաձայնելով ավելի ու ավելի շատացող իր մտահոգությունները: Այս փաստաթուղթն ամփոփվում է դոնոր կազմակերպություններին ուղղված առաջարկներով, որպեսզի բարելավվի կանանց և ԼԳԲՏ կազմակերպություններին ցուցաբերվող օժանդակությունը: Փաստաթուղթն ընդամենը ճանապարհային քարտեզ է առաջարկում. ավելի սպառիչ առաջարկների ցանկ մշակելու համար կարիք կլիներ զրուցել ավելի մեծ թվով դերակատարների հետ և շատ ավելի մեծածավալ տվյալներ հավաքագրել, ինչը սույն հետազոտության սահմաններից դուրս է:

ա. Թիրախավորել բնակչության որոշակի հատվածների



Ծնողներ

Համահայկական ծնողական կոմիտեի շնորհիվ հակագենդերային շարժումը հաջողությամբ մոբիլիզացրել է հազարավոր մտահոգ ծնողների: Այդքան մեծ թվով ծնողների մասնակցությունը Կոմիտեի միջոցառումներին ու ցույցերին, ինչպես նաև նրանց զանգվածային ակտիվությունը սոցիալական մեդիաներում պետք է ոգեշնչող լինի քաղաքացիական հասարակության համար այն իմաստով, որ հարկ է ավելի շատ ջանք կենտրոնացնել ծնողների հետ ռազմավարական դաշինքներ ստեղծելու և ոչ-բռնի վարքագիծն ու գենդերային հավասարությունը ընդունելի դարձրած էգալիտար ընտանիքի մոդելներ խթանելու վրա: Քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ ծնողները դեռևս չօգտագործված ռեսուրս են և որ նրանք հաճախ գերծանրաբեռնված են, որովհետև պարտավորված են առերեսվել մի շարք այնպիսի խնդիրների, որոնց բավականաչափ պատրաստված չեն և բավարար օգնություն չեն ստանում պետությունից կամ իրենց համայնքային կառույցներից:[332] Իրավունքների քննարկման շուրջ ծնողների կողմից օրինակելի դեր ստանձնելուն ուղղված նախաձեռնություններից է Կանանց ռեսուրսային կենտրոնի սեռական

[332] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ. և Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

կրթության ծրագիրը, որը կոչվում է «Ծնողները հանուն երջանիկ երեխաների»: Այս ծրագրի համատեքստում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մշակել են սեռական կրթության առաջին հայալեզու կայքը և դասընթացներ են անցկացրել ծնողների հետ, որոնց նպատակն էր կրթել ծնողներին սեռական առողջության մասին և քաջալերել նրանց խոսել իրենց երեխաների հետ բաց ու անաչառ կերպով՝ շեշտադրելով սեռականության և սեռական կրթության նկատմամբ դրական վերաբերմունքի կարևորությունը:[333]

Լրագրողներ

Մեր օրերում գենդերային խնդիրները լուծելու և հանրությանը կարևորագույն խնդիրների մասին տեղեկացնելու և դրանց շուրջ մոբիլիզացնելու հարցում որոշիչ է դարձել քաղաքացիական լրագրության գործադրումը և հնարամիտ ուղիների որոնումը:[334] Հակագենդերային քարոզարշավի արմատավորման ու տարածման պատճառներից մեկը հակագենդերային դերակատարների և մեդիան վերահսկողների միջև գոյություն ունեցող սերտ կապերն են: Հարկ է ճնշում գործադրել հիմնական զանգվածային լրատվամիջոցների վրա, որպեսզի վերջիններս տարածեն բռնությանը դեմ և հավասարությանը կողմ արտահայտվող ուղերձներ. սա կօգնի այս հարցերի շուրջ հանրությանն ավելի զգայուն դարձնել և կամրացնի իրավապաշտպանների հիմքերը: Չնայած ծախսատարությանը՝ քաղաքացիական հասարակությունը պետք է կարողանա իր համար ապահովել ավելի շատ եթերաժամանակ և սոցիալական մեդիան օգտագործի ավելի պրոֆեսիոնալ կերպով՝ իր դեմ հարձակումներին իրական ժամանակում հակահարված տալու համար: Նրանք պետք է կարողանան նաև ավելի լսելի դարձնել իրենց քննադատությունը: Առկա իրադրության պայմաններում, երբ լրատվական գործակալությունների մեծ մասը պահպանողական հայացք ունի և խուսափում է խոսել հակասական հարցերի մասին, հատկապես կարևոր է անկախ լրատվական ցանցերի սատարումը: Նման հաջողված օրինակ է «Հոդված 3-ի» հիմնադրումը, որն անկախ լրատվական ցանց է և անվճար տարածք է տրամադրում քաղաքացիական հասարակությանը՝ հանրային կարևորության հարցերի, այդ թվում՝ գենդերային հարցերի շուրջ մամլո ասուլիսներ ու քննարկումներ կազմակերպելու համար:

Տղամարդիկ

Գենդերային հավասարության արժեքներ ու վարքագծեր խթանելու և կոնսոլիդացնելու ուղղությամբ թիրախային միջամտությունները կօգնեն հիմնել գենդերային հավասարության համար պայքարող տղամարդ իրավապաշտպանների ցանց, ինչը հույժ կարևոր է Հայաստանի նման գերազանցապես տղամարդակենտրոն, պատրիարխալ հասարակությունում: Ավելի շատ տղամարդ իրավապաշտպանների ներգրավումն այս ջանքերում նոր ուղիներ կհարթի վնասակար գենդերային նորմերն ու կարծրատիպերը կոտրելու համար և «կտրուկ կբարելավի աջակիցների բազան, որն էլ կապահովի ինտելեկտուալ, իրավապաշտպան, սոցիալական և քաղաքացիական-ակտիվիստական ավելի մեծ ներուժ»:[335] Տղամարդկանց ներառող մոտեցման հաջողված օրինակ է 2016թ. Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համագործակցությունը Շվեդիայի դեսպանության հետ՝ Յոթը փաստագրական թատերական ներկայացումը Հայաստան բերելու շուրջ. գլխավոր դերերում բարձրաստիճան տղամարդիկ և կանայք կարդում էին խտրականության ու բռնության փորձառություններ ապրած յոթ հզոր կանանց պատմություններ:

[333] Անուշ Պողոսյան, հարցազրույց, 2017թ.
[334] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ
[335] Նույնը

Երիտասարդություն

Հաշվի առնելով, որ հակագենդերային հռետորաբանությունը հագեցած է թյուրըմբռնումներով՝ քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ մատնանշում են Հայաստանի երիտասարդության շրջանում քննադատական մտածողություն զարգացնելու կարևորությունը, որպեսզի վերջիններս կարողանան հարցականի տակ դնել ստատուս քվոն և քննադատորեն մտածեն իրենց սպառած նորությունների մասին:[336] Կանանց ռեսուրսային կենտրոնից Անահիտ Սիմոնյանը վստահ է, որ երիտասարդության հետ դեռևս լայնածավալ շատ աշխատանքներ պետք է տանել, մի բան, որ պահպանողականները կարողացել են ավելի մեծ հաջողությամբ անել: Ըստ նրա՝ նաև հարկ է ավելի շատ աշխատել երիտասարդ կանանց առաջնորդությունն ուժեղացնելու ուղղությամբ՝ մենթորության միջոցով, ինչպես նաև ոչ-ֆորմալ ու ֆորմալ ներգրավման ճանապարհով:[337] Հաջողված օրինակների թվում են՝ հասարակություն առանց բռնության կազմակերպության կողմից Հայաստանի մարզերում երիտասարդական կրթական ծրագրերի մշակումը և Երևանի պետական համալսարանում Գենդերային հետազոտությունների ու առաջնորդության կրթական ծրագրի մշակումը:

Եկեղեցի

Հարցազրույցներին մասնակցած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ոմանք կիսեցին իրենց կարծիքն այն մասին, որ օգտակար կլիներ ավելի շատ աշխատել եկեղեցու հետ՝ գենդերային խնդիրների և մասնավորապես կանանց նկատմամբ բռնության շուրջ գոյություն ունեցող առասպելները ցրելու ուղղությամբ: Կրթության մասնագետ Նվարդ Մանասյանը, չնայած ընդունում է եկեղեցու հայրիշխանական կառուցվածքը, այնուամենայնիվ կարծում է, որ ամուսնության ինստիտուտը օգտագործելու որոշակի ներուժ կա՝ որպես զույգերի հետ երկխոսություն սկսելու և ոչ-բռնի վարքագծեր քաջալերելու մեկնակետ:[338] Նա պաշտպանում է այնպիսի մոտեցման որդեգրումը, որը «կհամալրի եկեղեցու բառապաշարը մարդու իրավունքների լեզվով» ու նաև ավելացնում է, որ ակտիվիստները «չեն կարող իրենց թույլ տալ եկեղեցուն աչքաթող անելու շքեղությունը»:[339] Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնից Վահան Բուռնազյանն առաջարկում է «կրոնական շրջանակները մերժելու փոխարեն՝ ներգրավվել դրանցում: Բոլորին ներառելը քրիստոնեական մոտեցում է, և որևէ մեկին բացառելը հակաքրիստոնեական է»:[340]

Պետական պաշտոնյաներ

Հակագենդերային քարոզարշավից հետո քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ գիտակցեցին գենդերային զանազան հարցերի շուրջ պետական պաշտոնյաներին կրթելու և ներգրավելու անհրաժեշտությունը, մանավանդ հաշվի առնելով քվոտավորված համակարգի նախատեսվող ընդլայնումը, չնայած նրանց համար բավականին բարդ է մեկուսացնել մարդկանց, ովքեր կարող էին աջակցել իրենց գործին:[341] Լոնդոնի տնտեսագիտության համալսարանից Արմինե Իշխանյանը շեշտում է կառավարությունում դաշնակիցներ գտնելու անհրաժեշտությունը՝ պնդելով, որ.

[336] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.
[337] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ.
[338] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[339] Նույնը
[340] Վահան Բուռնազյան, հարցազրույց, 2017թ.
[341] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.

«[Պետական պաշտոնյաները] չափազանց զգուշավոր են ու անպատրաստ՝ ռիսկի գնալուն: Նրանց պետք է տրամադրել ապահով հարթակ, որին նրանք ավելի հարմար կզգան միանալ դրան: Եվ սա հնարավոր է անել... սակայն տարիների հետևողական ճնշում է պահանջվում: Գուցե դա չլինի նախարարը, գուցե ավելի ցածրաստիճան մեկը լինի, սակայն կարևոր է նրանց էլ գործի մեջ ներգրավել և նրանց հետ հաղորդակցվելու ձև գտնել»:[342]

Ակտիվիստները որոշ չափով աշխատել են քաղաքական գործիչների հետ, սակայն դաշինքները քիչ են և միմյանցից հեռու: Օրինակ, վերջին տարիներին «Նոր Սերունդ» կազմակերպությունը պետական պաշտոնյաների հետ դասընթացներ է անցկացրել խտրականության, խոշտանգումների և գենդերային ինքնության մասին՝ ի թիվս այլ թեմաների,[343] իսկ Կանանց աջակցման կենտրոնը վերջերս ընտանեկան բռնության թեմայով համապարփակ դասընթացներ է անցկացրել մի քանի հարյուր ծառայողների հետ, որոնցից շատերը պետական մարմինների ներկայացուցիչներ էին:[344] Խորհրդարանական կառավարման համակարգի անցնելուց հետո, ինչպես նաև երկու նորաստեղծ առաջադիմական մոտեցումներով կուսակցությունների ի հայտ գալուց հետո ավելի մեծ թվով քաղաքական գործիչների հետ կապ հաստատելու ներուժ կա:

Իրավապաշտպան համայնք

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում են, որ լայն իմաստով իրավապաշտպան հանրությունը հետաքրքրություն չի ցուցաբերել կանանց և ԼԳԲՏ իրավունքների հետ կապված խնդիրների դեպքում իրենց հետ զորակցելու հարցում,[345] որի պատճառներից մեկը «գենդեր» եզրույթի համընդգրկուն կիրառումն է,[346] իսկ ցույցերի ժամանակ նրանք նույնիսկ հոմոֆոբ խոսքեր են հնչեցրել:[347] Հասարակություն առանց բռնությունից Լիդա Մինասյանը գտնում է, որ ակտիվիստները պետք է ավելի շատ իրազեկեն երեխաների իրավունքներով, սոցիալական աշխատանքով և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպություններին և նշում է «Չեմ կարող ասել, թե նրանք ազատամիտ են, բայց եթե նրանք այսօր մեզ չեն միանում, չի նշանակում որ երբեք էլ չեն միանալու»:[348] Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայից Զարուհի Հովհաննիսյանն ավելացնում է «Մենք մերժում ենք նրանց հետ աշխատել այն հիմքով, որ նրանք գենդերային զգայունություն չունեն, սակայն ինչպե՞ս կարող են նրանք ավելի զգայուն դառնալ գենդերային հարցերում, եթե մենք նրանց հետ չաշխատենք»:[349]

Չսպասված ջատագովներ

Դիմադրությունը Գենդերային հարցերին մեծ մասամբ սկսվում է վերևում ու իջեցվում ներքև, սակայն հակագենդերային քարոզարշավը ցույց տվեց, թե ինչ կարևոր դեր կարող են խաղալ ներքևից վերև ուղղված արմատաբուխ ջանքերը՝ բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավելու իմաստով: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարծում են, որ իրենք ավելի շատ ջանք պիտի գործադրեն, որպեսզի իրենց ձայնն ու գործը հասանելի դարձնեն այն համայնքներին, որտեղ մինչև օրս աշխատանքներ չեն տարվել և ոգեշնչեն նրանց՝ ներգրավվել ծլարձակող ֆեմինիստական շարժման մեջ:[350] Որպես հակագենդերային քարոզչության դեմ պայքարի մի մոտեցում՝

[342] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[343] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[344] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[345] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ. և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[346] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.
[347] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[348] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[349] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[350] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ.

որոշ ակտիվիստներ առաջարկում են ավելի շատ ներգրավել ներկայում հակագենդերային շարժման մեջ ակտիվորեն ներգրավվածներին: Կանանց աջակցման կենտրոնից Հասմիկ Գևորգյանի կարծիքն է, որ. «Որպես ավելի լայն ռազմավարության մաս՝ մենք կարող էին հասնել նաև Համահայկական ծնողական կոմիտեի որոշ անդամների (ո՛չ հիմնական դերակատարներին, բայց գուցե եկեղեցու այն ներկայացուցիչներին, ովքեր գենդերային հավասարության մասին օրենքի դեմ էին խոսում) և նրանց հետ բաց քննարկում ծավալել, բայց մենք դա չարեցինք»:[351]

Բ. Ճիշտ ուղերձի ընտրություն



Մարդու իրավունքների և ընտանեկան արժեքների հռետորաբանությունների հավասարակշռում

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հիմնականում գիտակցում են, որ շատերի համար մարդու իրավունքները չափազանց վերացական հասկացություն են, և որ հանրությունը, այդ թվում՝ նաև իշխանության բոլոր ճյուղերի ներկայացուցիչները, շատ թերի են իրազեկված կանանց իրավունքներին, ԼԳԲՏ իրավունքներին վերաբերող տեղական ու միջազգային իրավական գործիքների և խտրականության հասկացության մասին:[352] Ինչպես տեղին նկատում է «Իրավունքի ուժ» կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանը՝ «Մենք սկսում ենք, օրինակ, այսպես խոսել՝ «Ժնևում Ստամբուլի կոնվենցայի կողմերի կոմիտեն...», և մարդիկ այլևս չեն լսում շարունակությունը, որովհետև դու արդեն իրենց համար անծանոթ երեք բառ ես օգտագործել»:[353]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ոմանք, գիտակցելով հանդերձ, որ մարդու իրավունքների լեզուն շատերի համար ընդունելի չէ, այնուամենայնիվ կարծում են, որ այդ եզրույթներով խոսելն անհրաժեշտ է:[354] Այս միտքը երկրորդում են նաև նրանք, ովքեր գտնում են, որ լայն իմաստով հասարակությունը պատրաստ չէ զգացմունքային վերաբերմունք դրսևորել այնպիսի արժեքների նկատմամբ, ինչպիսին, օրինակ, նույնասեռ միությունների ընդունումն է:[355] Եվ ուստի, նրանց կարծիքով ավելի արդյունավետ կլինի շեշտել մարդու իրավունքների խախտումները, մի լեզու, որ ավելի հասկանալի է մարդկանց համար և որի հետ մարդիկ կարող են նույնականացնել իրենց:[356] Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնից Վահան Բուռնազյանն ասում է, որ՝ «Մարդիկ կորցնում են հավատը մարդու իրավունքների նկատմամբ, երբ տեսնում են, որ այս հասկացությունը քաղաքականացվում

[351] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[352] Ջեմմա Հասրաթյան, Լիլիթ Ջաքարյան, Գայանե Արմագանովա, Թամարա Հովնաթանյան և Գայանե Մերոյան, «Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների և ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքներ», Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014թ.
[353] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[354] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ. և Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[355] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[356] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ. և Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.

է և պետությունների կողմից օգտագործվում է որպես պարան, որի մի կողմից մեկն է քաշում, մյուս կողմից՝ մյուսը»:[357] Նա զգուշացնում է, որ քաղաքացիական հասարակությունը լուսանցքավորման ավելի մեծ վտանգի մեջ է հայտնվում, երբ սահմանափակվում է միայն մարդու իրավունքների խախտումները գրանցելով, մանավանդ հաշվի առնելով, որ քաղաքացիական հասարակությունը լրատվամիջոցների նկատմամբ վերահսկողություն չունի:[358]

Որոշ դեպքերում մարդու իրավունքների մասին խոսելն այնպիսի համատեքստում, որտեղ այդ իրավունքները բացահայտորեն ոտնահարվել են, կարող է նույնիսկ հակառակ ազդեցությունն ունենալ: Անկախ ֆեմինիստ Աննա Նիկողոսյանը զգուշացնում է, որ այդ դիսկուրսը կարող է իր դեմ շուռ գալ, եթե մարդու իրավունքների հասկացությանն անծանոթ մեկի հետ զրույցում չհստակեցվի համատեքստը. «Եթե չես բացատրում, թե ինչ է տրանսգենդերը, ինչպես է ձևավորվում բինար գենդերայնությունը (տղամարդ-կին երկատումը), եթե հարցականի տակ չես դնում իրողություններն, այլ ուղղակի խոսում ես մարդու իրավունքների մասին (որ տրանսգենդեր մարդիկ բռնության զոհ են և հավասար իրավունքներ պիտի ունենան), ապա մարդիկ ավելի շատ են սկսում ատել նրանց, որովհետև մտածում են՝ ինչո՞ւ նրանք պետք է իրենց հավասար իրավունքներ ունենան»:[359] Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայից Զարուհի Հովհաննիսյանն էլ մեկ քայլ առաջ է գնում՝ ասելով.

«Մենք խոսում ենք մարդու իրավունքների մասին, բայց ոչ լեգիտիմ կառավարություն ունենք: Մեզ ասում են, որ մեր իրավունքների համար պայքարենք դատարան դիմելով, բայց մենք տեսնում ենք, թե ինչպես են աշխատում համակարգն ու քաղաքական գործիչները. նրանք միջազգային համաձայնագրեր են ստորագրում, բայց չեն կատարում իրենց պարտավորությունները: Մեր հասարակությունը դրան չի հավատում: Մենք վերցնում ենք ուրիշ երկրների փորձը և փորձում ենք այն այստեղ օգտագործել, բայց այդպես բան չի ստացվում»:

Վերը նշվածն ի նկատի ունենալով՝ կարելի է պնդել, որ հասարակության շրջանում միայն մարդու իրավունքների ընկալման խորացումը և իրավական պաշտպանություն պահանջելը բավարար չեն մարգինալացված համայնքների համար ավելի հավասար պայմաններ ստեղծելու համար, քանի որ Հայաստանի հանրությունն այնքան կարևորություն չի տալիս մարդու իրավունքներին, որքան այլ արժեքների:[360] Գուցե, հաշվի առնելով ընտանեկան արժեքների կարևորությունը հայաստանյան հասարակությունում, տեղին կլինի փորձել ընտանիքի հասկացությունն ավելի առաջադիմական ձևով վերաձևակերպել:

Ահատականացնել ուղերձները և խոսել զգացմունքների հետ

Ակտիվիստները կարծում են, որ ավելի մեծ աշխատանք պիտի կատարվի գենդերային հավասարությունը, ֆեմինիզմն ու ԼԳԲՏ հարցերն անձնական պատմությունների ոսպնյակով ներկայացնելու համար: Օրինակ, հաշվի առնելով այն փաստը, որ հետազոտության արդյունքների համաձայն՝ բնակչության շատ փոքր հատվածն է ասում, թե հարաբերվել է ԼԳԲՏ անձանց հետ և որ անձնական կապեր ունեցող մարդիկ «անհամեմատ ավելի հանդուրժող են, քան նրանք, ովքեր երբևէ չեն շփվել ԼԳԲՏ անձանց հետ»,[361] արժե ավելի շատ իրագործել այնպիսի նախաձեռնություններ, որոնք կմարդկայնացնեն ապրված փորձառություններն

[357] Վահան Բուռնազյան, հարցազրույց, 2017թ
[358] Նույնը
[359] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ
[360] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.
[361] Նույնը

ու հանդուրժողականություն կկերտեն: Հակախտրականության կոալիցիայի անդամներն աշխատում են փոխել տիրապետող պատումը՝ անձնական պատմություններ պատմելով:[362] Օրինակ, 2016թ. ՓԻՆՔ-ի պատրաստած «Լսիր ինձ» փաստագրական ֆիլմը ցույց է տվել Հայաստանում ապրող տասը ԼԳԲՏ անհատների պատմություններ ու նրանց փորձառություններն ընտանիքի, ընկերների և ավելի լայն հասարակության հետ: Ֆիլմը ցուցադրվել է մի քանի տարածքներում՝ Հայաստանում և Սփյուռքում: Մեկ այլ դրական օրինակ է այն, թե ինչպես Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան 2013թ. մի քանի հազար քաղաքացիների մոբիլիզացրեց՝ միանալու ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման օգտին ստորագրահավաքին՝ օգտագործելով պարզ, անձնական պատմություններ, որոնք գրավեցին մարդկանց ուշադրությունը:[363]

◂ Հիբրիդային մոտեցումներ. գտնել ոսկե միջինը

Փորձագետ մասնակիցները շեշտում են դերակատարների սպեկտր ունենալու կարևորությունը, որտեղ կլինեն արմատականից մինչև չափավորներ ու կստեղծվեն տարբեր տարածքներ ու պատումներ: Հարցազրույցի մասնակիցներից նույնիսկ նրանք, ովքեր ամուր հակված են այն տեսակետին, որ ֆեմինիստական դիսկուրսը զիջման ենթակա չպետք է լինի, այնուամենայնիվ ընդունում են, որ նման դիսկուրսը հեռու է տիրապետող դիսկուրսների շրջագծում ընդունելի լինելուց: Ոմանք կողմնակից են ռազմավարական կարևորության ժամանակահատվածներում ֆեմինիստական դիսկուրսից հետ կանգնելուն՝ հանուն ավելի լայն հանրությանը ներգրավելուն, բայց միաժամանակ նրանք նաև որոշակի իմաստով անհարմար են զգում օգտագործել զանգվածներին հաճոյացնող ուղերձներ: Օրինակ, բռնության թեմայի շուրջ աշխատող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում որոշակի անհամաձայնություն կա այն մասին, թե ինչպես ավելի ընդգրկուն ու ներառական կերպով խոսել բռնության մասին: Քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ ակտիվիստները չպետք է սահմանափակվեն միայն զուգընկերների կողմից բռնության գործադրման մասին խոսելով, այլ պիտի խոսեն նաև երեխաների նկատմամբ բռնության, երեխաների կողմից ծնողների ու տարեցների նկատմամբ բռնության մասին՝ ի թիվս բռնության այլ ձևերի:[364] Մինչդեռ մյուսները պնդում են, որ թեև կարևոր է խոսել երկրորդային զոհերի և բռնությունից տուժած մյուս անձանց մասին, սակայն եթե չափազանց լայնացնենք խնդրի առարկան, ապա դա կթուլացնի ֆեմինիստական դիտանկյունը և կնոջ՝ որպես տուժողի ընկալումը:[365]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ռազմավարական մոտեցումները տարբերվում են: «Մոխրագույն ազատագրում»[366] կոչվածի նմանությամբ՝ ոմանք կոչ են անում սոցիալական նորմերին մարտահրավեր նետել ավելի չափավոր լեզու օգտագործելով: Երևանի պետական համալսարանից ու Կանանց ռեսուրսային կենտրոնից Գոհար Շահնազարյանը, ով կողմնակից է այնպիսի ռազմավարական մոտեցումների, որոնք համադրում են մարդու իրավունքների և ընտանեկան արժեքների հռետորաբանությունները, միաժամանակ զգուշացնում է, որ պետք է հեռու մնալ «դոգմատիկ մոտեցումներից» և հաստատում է, որ մինչև օրս քաղաքացիական հասարակության ուղերձներն անարդյունավետ են եղել:[367] Կանանց աջակցման

[362] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.
[363] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[364] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ. և Մարիա Աբրահամյան, հարցազրույց, 2017թ.
[365] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ
[366] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերե՞լք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.
[367] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.

կենտրոնից Մարո Մաթոսյանը համաձայնվում է՝ ասելով, որ արմատական դիսկուրսը «հակադարձ ալիք է ստեղծել մի հասարակությունում, որն անպատրաստ է»:[368] Հակառակ սրան՝ Հասարակություն առանց բռնության կազմակերպությունից Լիդա Մինասյանը կողմ է «արդյունքների վրա հիմնված, թիրախի նկատմամբ զգայուն և ամբողջական մոտեցմանը» և պնդում է, որ չնայած կոնտեքստից ելնելով՝ պետք է զիջումների գնալ, սակայն արմատական դիսկուրսն իր տեղն ունի:[369]

Ավելի լայն լսարանների հասանելի դառնալու համար օգտակար կարող է լինել այնպիսի մոտեցումը, որը կկարողանա գենդերային խնդիրները կապել քաղաքացիների առօրյա կյանքի վրա ազդող հարցերի հետ:[370] Աշխարհի տարբեր տեղերում կանանց մոբիլիզացումները հենց այսպիսի հիբրիդային մոտեցում են որդեգրել, օրինակ, ընտանեկան բռնության մասին խոսելիս՝ ընտրելով գենդերային առումով չեզոք լեզու և երեխայակենտրոն ուղղվածություն:[371] Կրթության փորձագետ Նվարդ Մանասյանը կոչ է անում «ոչ թե խուսափել, այլ ընդունել» տարբեր կյանքի ուղիներ անցած, տարբեր տեսակետներ ունեցող կանանց և անուշադրության չմատնել մայրության շուրջ երկխոսությունը՝ որպես ընդհանուր պայքարի մեջ կանանց շարժման մեջ ներգրավելու հենակետ: Սոդեթորնի համալսարանից Էլժբիետա Կոլորձժուկը հավելում է. «Կարիք կա որպես ֆեմինիստական ռազմավարությունների մաս՝ հանդես գալ քաղաքական մատերնալիզմի մի որևէ նոր ձևով, ինչպես նաև գենդերային հավասարության ու ԼԳԲՏ իրավունքների խթանմանն ուղղված համայնքային մոտեցումներով»:[372] Միևնույն ժամանակ, Լունդի համալսարանից Շարլոթ Տապանին վիճում է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է ռազմավարական մոտեցում ցուցաբերի նման քայլի հարցում.

«Մայրության արձակուրդի հարցը՝ որպես ծնելիության մակարդակի նվազման խնդիր վերաձևակերպելու դեպքում՝ կորչում է ավելի լայն օրակարգը, որում էլ արմատացած է խնդիրը, այսինքն՝ կանանց իրավունքներ, ազատություններ և ազատագրում՝ սրանք են այն հիմնական հարցերը, հանուն որոնց գործում են կանանց կազմակերպություններն ու անհատ կանայք: Այնուամենայնիվ, եթե թեման չափազանց վիճելի է, ապա բռնության ու ազատազրկվելու ռիսկ է առաջանում, որն էլ արդյունավետորեն լռեցնում է քաղաքական պահանջները»:[373]

Բառիմաստի հետ կապված խնդիրների հաղթահարումը

Լեզուն սերտորեն կապված է նորմերի ու համոզմունքների համակարգի կերտման հետ: Հաշվի առնելով, որ «գենդեր» եզրույթը մեծամասամբ թյուրըմբռնվում և չարաշահվում է, թերևս երկու ուղիներ պետք է հաշվի առնել. 1) ավելի շատ իրազեկել հանրությանը՝ սուտ պնդումներին դիմադրելու և գենդերը հանրության համար կարևորություն ներկայացնող խնդիրների հետ կապելու համար, և 2) հակազդել այն քաղաքական մարտահրավերներին, որոնք առաջանում են գենդերը որպես տեխնիկական կատեգորիա սահմանելու հետևանքով, և օգտագործել նոր լեզու, որն ավելի մարսելի կլինի լայն հանրության համար:[374]

[368] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[369] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[370] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[371] Կատալան Ֆաբիան, Անվանում տալով իրավունքներին. ազգը, ընտանիքն ու կանանց իրավունքները ժամանակակից Հունգարիայում ընտանեկան բռնության շուրջ բանավեճերում, Հունգարագիտության ակնարկ ամսագիր, հատոր XLI, համարներ .1-2, 2014թ.
[372] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.
[373] Շարլոթ Տապանի, Արդյո՞ք լուծումը ներառումն է. Հայաստանում կանանց կազմակերպությունների ու անհատ կին ակտիվիստների քաղաքական մասնակցության ուժային վերլուծություն, մագիստրոսական թեզ, 2016թ.
[374] Էսթեր Կովաց և Մաարի Պոիմ, Գենդերը՝ որպես խորհրդանշական սոսինձ. Եվրոպայում հակագենդերային մոբիլիզացման մեջ պահպանողական ու ծայրահեղ աջական կուսակցությունների դիրքն ու դերը, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2015թ.

Ակտիվիստները պետք է շարունակեն մերկացնել գենդերի շուրջ հյուսվող առասպելները, ինչպես նաև կրթեն պետության ներկայացուցիչներին և որոշ գլխավոր դերակատարներին շահագրգռեն, որ վերջիններս ավելի ակտիվ դիրքորոշումներ ցուցաբերեն: Այնուհանդերձ, հաշվի առնելով գենդերին առնչվող ամեն ինչին դիմադրելու հակվածությունը հանրային դիսկուրսում, ինչպես նաև պետության՝ չխառնվելու քաղաքականությունն այս հարցում, միայն նախկինում գործածված մարտավարությունների գործադրումը կարող է անբավարար լինել:[375] Ավելի հավանական է, որ արդյունավետ գործեն հիբրիդային մոտեցումները, որոնք հանրության հիմնական շերտերին կրթող իրենց իրազեկման նախաձեռնություններում «գենդեր» եզրույթը կկիրառեն ավելի չափավոր հակա-լեզվի հետ համատեղ: Այս հարցի կապակցությամբ Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնից Վահան Բուռնազյանը ասում է.

«Մենք չենք խոսում մարդկանց հետ, մենք խոսում ենք նրանց վրա: Մեզ չեն հասկանում, որովհետև մենք, փոխանակ խոսելու՝ ելնելով հայաստանյան իրողություններից, մտքերն ուղղակի արտագրում ենք ուրիշ տեղերից, և սա է, որ ուրիշներին թույլ է տալիս ասել, թե մենք օտար գաղափարներ ենք օգտագործում: Ինչպե՞ս կարող ենք որևէ հստակ բան անել կոնկրետ այս գյուղի կնոջ համար: Կարիք կա՞ արդյոք, որ ես «գենդեր» եզրույթն օգտագործեմ: Արդյոք կռիվը եզրույթի՞ շուրջ է, թե՞ այն ամենի, ինչին կոչված ենք հասնելու այդ եզրույթի միջոցով»:[376]

Քաղաքացիական հասարակության՝ գենդերային խնդիրներին առնչվող ուղերձները հակված են մեկուսացնել մշակույթը՝ որպես



Շուշանիկ Կուրղինյանը համարվում է առաջին հայ ֆեմինիստական հեղինակներից մեկը: Կուրղինյանի գրած քառիակից է: Այն ասում է. «Ինձ մի սիրիր ծաղկի նման, Կուզեմ ապրել արժանի՝ Որպես հյուլեն՝ վշտի տիտան, Որպես զավակ խուժանի:»

[375] Վահան Բուռնազյան, հարցազրույց, 2017թ.
[376] Նույնը

ժողովրդավարացման խոչընդոտ, ինչն, ըստ Լոնդոնի տնտեսագիտական համալսարանի դասախոս Արմինե Իշխանյանի՝ «թերի և կարճատես ռազմավարություն է, որն անտեսում է ավելի լայն քաղաքական, սոցիալական ու տնտեսական գործոնները» և մշակույթը պատկերում է որպես տեղական ու համաշխարհային իրողությունների կողմից ազդեցություն չկրող մի բան:[377] Կրթության մասնագետ Նվարդ Մանասյանն էլ գանգատվում է, որ ակտիվիստներին չի հաջողվել ցրել առասպելները, որովհետև երբ նրանք խոսում են բռնության մասին՝ առանց դա ընտանեկան կառույցի մաս ներկայացնելու, «արգելապատնեշ է ստեղծվում»:[378] Նա կարծում է, որ լավ սկիզբ կլինի «ապակոդավորելն ու բանավոր բացատրելը, թե ինչ է նշանակում հայկական ավանդական ընտանիքը», և այս դեպքում մարտահրավերը լինելու է «մասնագետների միայն նեղ շրջանակի համար ընկալելի մեր չոր լեզուն ու մասնագիտական ժարգոնը թարգմանել այնպիսի օրինակների, որոնք ցույց կտան, որ այս երկուսը [ակտիվիստների ու պահպանողականների տեսակետները] չեն հակասում միմյանց»:[379]

Պարզեցված, ռեդուկցիոնիստական և էսենցիալիստական ուղերձները կարող հավանական աջակիցերին շարժման մեջ հրավիրելու փոխարեն՝ նրանց ավելի օտարել: Իշխանյանը փաստարկում է, որ «պետք է փորձենք չսահմանել մշակույթը որպես զարգացման, սոցիալական փոփոխության ու արդիականացման խոչընդոտ, այլ փորձենք տեսնել, թե մշակույթի ո՛ր տարրերը կարող ենք շեշտադրել՝ դրանք մեր առաքելությանը ծառայեցնելու համար»:[380] Նա ավելացնում է «եթե փորձես տեղայնացնել բռնությունը և սերտորեն կապել այն հայկական մշակույթի հետ, փակուղի կմտնես՝ մասամբ այն պատճառով, որ բախվելու ես ազգայնական նարատիվներին»:[381] Հիմնական զանգվածային լրատվամիջոցներով այնպիսի ուղերձներ տարածելը, որոնք Հայաստանը չեն ներկայացնի որպես մի տեղ, ուր բռնությունը տարածված է, այլ կշեշտադրեն հայկական մշակույթի դրական կողմերը, կարող է ավելի մեծ աջակցություն ապահովել քաղաքացիական հասարակության համար: Սրա օրինակը կարող է դառնալ այնպիսի մեդիա-նախագծի մշակումը, որը կգովաբանի ուժեղ ու առաջադեմ դերային մոդելների և կցուցադրի ոչ-բռնի զուգընկերական ու ընտանեկան հարաբերություններ:

◂ Պատասխանել հասարակության մտահոգություններին

Քաղաքացիական հասարակության շրջանակներում ընդունում են, որ ակտիվիստները հաճախ մեկուսացված են գործում և շարունակում են ներգրավել իրենց համախոհ, առաջադեմ մարդկանց:[382] Բաց հասարակության հիմնադրամներից Աննա Հարությունյանը հաստատում է, որ «ՀԿ-ների մի շրջանակ կա, որն ստեղծել է քննարկումների էլիտար տարածք, որն այլևս հնարավոր չէ մեյնսթրիմի վերածել ու հասանելի դարձնել այլ ՀԿ-ների համար»:[383] Կրթության փորձագետ Նվարդ Մանասյանն ակտիվիզմի որոշ ձևեր համարում է բացառող և հասարակության անդամների դեմ ծառացած խնդիրների հետ չառնչվող:[384] Սա է պատճառը, որ քաղաքացիական հասարակության շատ ներկայացուցիչներ կարծում են, որ ավելի շատ ջանք պետք է ներդրվի հասարակությանը հավասարության կարևորության մասին կոնկրետ

[377] Արմինե Իշխանյան, Ժողովրդավարության կառուցումն ու քաղաքացիական հասարակությունը հետխորհրդային Հայաստանում, Լոնդոն, Նյու Նորք, Ռութլեջ հրատարակչություն, 2008թ.
[378] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.
[379] Նույնը
[380] Արմինե Իշխանյան, Անձնականը քաղաքական է: Հայաստանի ՀԿ ոլորտի զարգացումը հետխորհրդային շրջանում, Բերկլիի խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրությունների ծրագիր, 2003թ.
[381] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[382] Աննա Հարությունյան, հարցազրույց, 2017թ. և Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[383] Աննա Հարությունյան, Վեր հանելով գենդերային դիսկուրսը Հայաստանում. Հիստերիայից մինչև կառուցողական երկխոսություն, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2017թ.
[384] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

առօրյա օրինակներով կրթելու ուղղությամբ՝ մի լեզվով, որն առավելի ընկալելի է:

Հայկական իրականության մեջ օպտիմալ տարբերակ կարող է լինել գենդերային խնդիրների զուգորդումն ավելի լայն սոցիալ-քաղաքական իրողությունների հետ: Օրինակ բերելով, որ հետտրավմատիկ սթրեսով տառապող պատերազմի վետերաններն ավելի հակված են իրենց ընտանիքներում բռնության դիմելուն՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայից Զարուհի Հովհաննիսյանը համարում է, որ «չի կարելի սոցիալական խնդիրներն առանձնացնել գենդերային խնդիրներից» և որ իդեալական տարբերակում ուղերձները պետք է վստահելի ու գրավիչ պատասխաններ տան սոցիալ-տնտեսական մարտահրավերներին, աղքատությանը, գործազրկությանը, ժողովրդավարության պակասին, խղճուկ առողջապահական ու կրթական համակարգերին և Հայաստանում տիրող համակարգային անհավասարությանը:[385] Ոլորտի ակտիվիստները կարող են խոսել նաև կոռուպցիայի հետ կապված իրենց մտահոգությունների մասին, որը Հայաստանում եղած մեծագույն խնդիրներից մեկն է և ազդում է սոցիալական, քաղաքական ու տնտեսական ոլորտների վրա. կարելի է նաև ճնշում գործադրել անել օրենքի գերակայության, ժողովրդավարական ընտրական գործընթացների, կառավարման համակարգերի և ինստիտուտների հաստատման, և անպատժելիությունը վերացնելու ուղղությամբ:[386]

Երևանի պետական համալսարանից և Կանանց ռեսուրսային կենտրոնից Գոհար Շահնազարյանն էլ կոչ է անում բաց, անկեղծ խոսակցություն սկսել, որ կազմակերպություններն ու ակտիվիստներն հաշվի նստեն այն փաստի հետ, որ քանի դեռ իրենց ուղերձներում արտացոլվում են արևմտյան գաղափարախոսությունները, նրանք հակադարձ ռեակցիա են ստանալու:[387] Նա վստահ է, որ հանրությանն ավելի հասանելի դառնալու համար ակտիվիստները պետք է վերագնահատեն իրենց մոտեցումները՝ մեջբերելով գյուղերում կանանց սեռականության մասին կրթող դասընթացների օրինակը. «Ի՞նչ կարևորություն ունի սեռականությունը, եթե անձը փող չունի... Եթե նրա հիմնարար կարիքները բավարարված չեն, ապա նա չի մտածելու իր սեռական բավարարվածության մասին»:[388]

◂ Պատմական նարատիվները կապելով մերօրյա շարժումների հետ

Շատ առումներով՝ կանանց և ԼԳԲՏ իրավունքները հավասարեցվում են «եվրոպական արժեքներին», ինչը քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչների համոզմամբ՝ արջի ծառայություն է մատուցում այն քաղաքացիներին, ովքեր համակրում են այդ արժեքներին, սակայն հարմար չեն զգում հարել մի բանի, ինչը արևմտյան արժեհամակարգ է որակավորվում:[389] Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս Վահան Բուռնազյանի կարծիքով՝ մարդու իրավունքները հեղինակազրկվել են ամբողջ աշխարհում՝ «ուժային կառույցների կողմից սքողված առավելի գերակա նպատակներին ծառայեցվելու», ինչպես նաև պետությունների կողմից շահարկվելու պատճառով:[390] Մեջբերելով Հայաստանի ուշ-խորհրդային շրջանի բնապահպանական շարժումը՝ Բուռնազյանը հաստատում է, որ ցանկացած հակահիրավական դիսկուրսին դիմակայելու համար պահանջվում է «վերամեկնաբանել այն, թե ինչպես են մարդու իրավունքները մեր սոցիալական կառուցվածի հիմնարար մասը կազմել»:[391] Այսպիսով, որպեսզի իրազեկենք, թե ինչպես են մարդու

[385] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[386] Վահան Բուռնազյան, հարցազրույց, 2017թ.
[387] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.
[388] Նույնը
[389] Վահան Բուռնազյան, հարցազրույց, 2017թ.
[390] Նույնը
[391] Նույնը

իրավունքներն իրականում համապատասխանում շատերի կրած արժեքային համակարգին, դրանք որպես Արևմուտքից ներմուծված մի բան ներկայացնելու փոխարեն՝ կարելի է ավելի լավ վերլուծել պատմական և մերօրյա այն նախաձեռնությունները, որոնք ձգտում են պաշտպանել ու աջակցել քաղաքացիներին:

Ռազմավարական ուղղություններից մեկը, որը մինչև օրս Հայաստանում թերի է գործադրվել, բայց այժմ սկսում է ամրապնդվել, օսմանյան և խորհրդային պատմությունների ընթացքում հայ ֆեմինիստների կատարած աշխատանքին հնչեղություն տալն է: Հաշվի առնելով, որ գենդերային խնդիրների ընդդիմախոսները պնդում են, թե դրանք Արևմուտքում մշակված և հայաստանյան ավանդույթի հետ կապ չունեցող բաներ են, կանանց իրավունքների մասին պատմական ուղերձների վերհանումն ու տարածումը կարող են կամուրջի դեր կատարել:[392] Այս իմաստով ողջունելի է գիտնական Լեռնա Էկմեկչօղլուի աշխատանքը. նա կազմում է մի գիրք և օնլայն հարթակ, ուր տեղ են գտնելու Օսմանյան կայսրության շրջանի պակաս հայտնի հայ ֆեմինիստ գրողների աշխատանքները: Նման նախաձեռնությունները, որոնք հանրության շրջանում տարածվում են զանգվածների համար հասկանալի լեզվով, կօգնեն առաջ մղել ֆեմինիստական դիսկուրսը:

կնոջ ու մարդու իրավունքների առաջխաղացման նոր նորմեր ստեղծելու հնարավորություն: Օրինակ, հաշվի առնելով, որ մարգինալացված բնակչությունն ամենից շատ է տուժում նեոլիբերալ քաղաքականություններից, ավելի շատ նախաձեռնություններ կարող են իրականացվել՝ կապված հենց այս երևույթի հետ, ինչը նաև ուղղակիորեն կազդի մարդկանց կյանքի վրա: Հասարակություն առանց բռնության կազմակերպությունից Լիդա Մինասյանը կիսում է իր տեսակետն այն մասին, որ կարևոր է ներառել ռազմականացման մասին դիսկուրսը: Նրա կարծիքով, սա այն հարցն է, որ ներգործություն ունի Հայաստանում կյանքի բոլոր ոլորտների վրա, թեև միաժամանակ, քչերն են պատկերացնում, թե ինչպես է կարելի իրավիճակը փոխել:[393] Այնուամենայնիվ, ոչ բոլոր ակտիվիստներն են համաձայն ռազմականացման դիսկուրսը ներառելու հետ մի շարք պատճառներով, այդ թվում՝ հասարակության անպատրաստության և ֆեմինիստական շրջանակներում հակամիլիտարիստական ջանքերի կոնցեպտուալացման պակասի պատճառով:[394] «Սևազգեստ կանայք» նախաձեռնությունը, սկզբնավորման փուլում լինելով հանդերձ, ֆեմինիստական դիսկուրսը խաղաղաշինության ու կոնֆլիկտների կառավարման շուրջ կառուցելու լավ օրինակ է և հնարավորություն է տալիս կանանց՝ մտնել մասկուլին տարածք:[395]

Նախաձեռնել խաղաղարարական երկխոսություն

Ակտիվիստները կարող են օգտվել համաժողովրդական մակարդակի քննարկումներից և պահն օգտագործելով՝ ներկայացնել քննարկվող թեմայի ֆեմինիստական դիտանկյունը՝ որպես արդարության, հավասարության, հարգանքի և

[392] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[393] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ. և Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[394] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ. և Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.
[395] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.

գ. Հանրային մոբիլիզացման ապացուցողական ու հնարամիտ ռազմավարություններ



Նախնական գնահատում, մոնիթորինգ և արդյունքների գնահատում

Գենդերային հարցերի մասին հանրային ընկալումները փոփոխելուն ուղղված հզոր քարոզարշավ ստեղծելու համար հրամայական է գոյություն ունեցող մոտեցումների մանրակրկիտ քարտեզագրումը: Քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ իրազեկվածության բարձրացման ջանքերի մասին խոսելիս՝ նրանցից մի քանիսը հղում են կատարել հակագենդերային դերակատարների լավ պատրաստվածությանը,[396] ի տարբերություն որոնց՝ քաղաքացիական հասարակության կողմից հանրային մոբիլիզացիաների նախնական գնահատման, մոնիթորինգի ու արդյունքների գնահատման, ինչպես նաև արդյունավետության ստուգում անցած ուղերձների հարցում կան թերացումներ:[397] Կանանց ռեսուրսային կենտրոնից Անահիտ Սիմոնյանը կարևոր է համարում որոշակի համայնքի ռեսուրսները և իրենց տարածած ուղերձների ընկալման մակարդակը չափելը, ինչը կանանց կազմակերպությունները հիմնականում չեն հաջողել անել:[398] Կանանց և ԼԳԲՏ իրավունքների կազմակերպությունները կարող են ավելի լավ օգտագործել հավաքագրված տվյալներն ու ավելի թափանցիկ դարձնել տեղեկատվության փոխանակումը՝ կենտրոնանալով ընդհանուր մեկնարկային տվյալների հավաքագրման վրա և փոխադարձաբար աջակցելով փոփոխությունները չափող տվյալների հավաքագրման ու վերլուծության հարցում:

Որդեգրել նախաձեռնողական դիրքորոշում

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հիմնականում միակարծիք են, որ իրենց հակագդեցությունը հակագենդերային քարոզարշավին հիմնականում կրավորական դիրքից էր (ռեակցիոն) և ռազմավարական ուղղվածություն ունենալու ու հետ-քարոզարշավային գործողությունների առումով՝ թերի էր: Որպես անկախ ֆեմինիստ՝ Աննա Նիկողոսյանը նշում է՝ «Մենք շախմատի պես մի քանի քայլ առաջ չենք մտածում»:[399] Կանանց ռեսուրսային կենտրոնից Անահիտ Սիմոնյանն էլ շեշադրում է հակագենդերային արշավներին արձագանքելու միջազգային փորձից սովորելու կարևորությունը՝ միևնույն ժամանակ օգտագործելով տեղի գիտելիքները, այլ ոչ թե այլ համատեքստերից պարզապես արտագրելը:[400] Որոշ մասնագետներ ընդհանրապես հոգնել են հակագենդերային քարոզչության դեմ պատերազմելուց և կողմ են, որ քաղաքացիական հասարակությունն իր սեփական օրակարգն առաջ մղի:[401] Վորլդ Վիժն Հայաստանից Սևան

[396] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[397] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[398] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ.
[399] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.
[400] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ

Պետրոսյանը տեղին է նկատում, որ. «Երբ որևէ մեկը խաղի կանոններ է ստեղծում, և դու փորձում ես հակազդել նրան, ապա ամեն պարագայում պարտվելու ես»:[402]

Հնարամիտ մուլտիմեդիա քարոզարշավների լայն իրականացում

Կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունների կողմից ավելի բազմակողմանի ու ճիշտ թիրախներով իրազեկման քարոզարշավներին աջակցելը, շեշտադրելով թվային ակտիվիզմը, կարող է օգնել հաղթահարել սոցիալական նախապաշարմունքներն ու բռնության ընդունելի լինելը, խրախուսել կանանց բարձրաձայնել իրենց խնդիրների մասին և պայքարել հասարակությունում տիրապետող գենդերային կարծրատիպերի ու առասպելների դեմ: Կանանց աջակցման կենտրոնից Հասմիկ Գևորգյանը քննադատորեն է խոսում մինչև օրս կանանց կազմակերպությունների որդեգրած մոտեցումների մասին՝ նշելով, որ քարոզարշավներին հատկացված ֆինանսավորումն ավելի արդյունավետ կլիներ, եթե ուղղվեր մուլտիմեդիա քարոզարշավներին:[403] Օրինակ, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի թեժ գծի հեռախոսազանգերի թիվը կտրուկ աճեց 2014թ. Հայաստանում Ամերիկյան դեսպանատան հովանավորությամբ իրականացված և հեռուստատեսությամբ հեռարձակված «Խոսիր» հոլովակների արդյունքում: Չնայած սա բարդ ու ծախսատար միջոցառում է սահմանափակ բյուջեով աշխատող հասարակական կազմակերպությունների համար, այնուամենայնիվ չի կարելի թերագնահատել նման քարոզարշավների կարևորությունը հանրային իրազեկման մեջ, ինչպես նաև՝ իբրև լոբբինգի ու շահերի ջատագովության գործիք:

Ակտիվիստները նաև համոզված են՝ որպեսզի դպրոցներում տիրող ստատուս քվոն փոխվի, ավելի մեծ շեշտադրում պիտի կատարվի «կրթության այլընտրանքային ձևերի վրա»,[404] և գենդերային խնդիրները պետք է զննվեն նաև այնպիսի արվեստային մեթոդներով, ինչպիսին, օրինակ, պատմություններ/հեքիաթներ պատմելն է:[405] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են, օրինակ, ոգեշնչում ստանալ այնպիսի հաջող արմատաբուխ քարոզարշավներից, ինչպիսին 2016թ. «Ինքնիկ աղջկաս հետ» հեշթեգ քարոզարշավն էր, որը կոչ էր անում հայաստանցի հայրերին «տոնել հայկական ընտանիքներում աղջիկների գոյությունը՝ սոցիալական մեդիայում տարածած լուսանկարների միջոցով պատմելով իրենց աղջիկ երեխաների նկատմամբ տածած ծնողական սիրո մասին»: Սա արվում էր սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թիվը նվազեցնելու միջոցառումների շրջանակում: Չնայած այս հեշթեգ քարոզարշավը բացահայտորեն առաջ չէր մղում կանանց իրավունքների տեսանկյունը, այն մանրակրկտորեն էր մշակված, տեսողական իմաստով գրավիչ էր և այնպիսի ուղերձ էր փոխանցում, որն ամբողջ երկրով մեկ հուզում էր մարդկանց: Ուշադրություն դարձնենք, որ քարոզարշավը չէր վերարտադրում հասարակության կողմից կնոջը վերագրված կարծրատիպերը: Փոխարենը, այն փոխում էր անհավասարության ու խտրականության հիմքում ընկած նորմերն ու սիրո ուղերձ էր փոխանցում:

[401] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[402] Սևան Պետրոսյան, հարցազրույց, 2017թ.
[403] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[404] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.
[405] Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ. և Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.

դ. Ռազմավարական դաշինքներ ու լոբբինգ

Ներխմբային հավաքականության ամրացում

Ակտիվիստները մեծամասամբ միակարծիք են, որ հակագենդերային արշավի ժամանակ կար դրսից արտահայտվող որոշակի զորակցություն ու աջակցություն, սակայն չկար հարձակումներին հակադարձելու ու զրպարտության հետագա քարոզարշավներից պաշտպանվելու համապարփակ ռազմավարություն: Կարևոր է ընդգծել, որ կանանց ու ԼԳԲՏ կազմակերպություններից մի քանիսը, հատկապես նրանք, որոնք ուղղակիորեն հարձակման չէին ենթարկվել, նախընտրել էին չներգրավվել քննարկումներում:[406] Միասնական ճակատի ու ռազմավարական գործողությունների պլանի բացակայությունը բավարար էր քաղաքացիական հանրությանը լիովին լռեցնելու համար:[407]

Կանանց ու ԼԳԲՏ շահերի մի շարք պաշտպաններ ընդունում են, որ իրենք պետք է լայնացնեն հանրային քննարկման տարածությունը, նաև նշում են, որ ընթացիկ աշխատանքների ժամանակ բավարար չափով չեն համագործակցում միմյանց հետ՝ դրանով նպաստելով կապերի թույլ լինելուն ու անբավարար հավաքականությանը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բարձրաձայնում են, թե ինչպես է ի տարբերություն զորակցության՝ մրցակցությունը ստեղծում մի միտում դեպի հատվածականություն ու հկ-ացում (քաղաքացիական հասարակության նեղացումը շահերի պաշտպանությամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող մասնագիտացած հկ-ների) ու չի նպաստում ընդհանուր ուժերով շարժման կառուցմանը: Մի բան, որ հաճախ կարող է նաև պայմանավորված լինել դոնորների քաղաքականությամբ ու պրակտիկաներով:[408]



Խնդիրն ավելի բարդացնում ու առաջընթացն արգելակում է այն փաստը, որ որոշ կազմակերպություններ ղեկավարում են «պսևդո գենդերային մասնագետներ», իսկ նրանց պրակտիկաները չեն համընկնում ֆեմինիստական սկզբունքների ու արժեքային համակարգերի հետ:[409] Ակտիվիստների տեսակետներն այս հարցում տարբերվում են. մի մասի կարծիքով՝ սա արգելակում է առաջընթացը: Ըստ Կանանց աջակցման կենտրոնից Հասմիկ Գևորգյանի՝ «Մենք մեր իսկ դիրքորոշման շուրջ համաձայնության չենք եկել, ուր մնաց թե մեր օրակարգը միասնաբար առաջ մղեինք: Որպեսզի մյուս ակտիվիստներին ներգրավենք, պետք է հասկանանք, թե յուրաքանչյուր խմբի ինչպես մոտենանք, որն է մեր ռազմավարությունը, ինչպես ենք մենք խնդիրն առաջ տանում, ինչպես ենք սկսում աշխատել նրանց հետ»:[410] Այս քննադատությունները հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում հակագենդերային քարոզչության դեմ պայքարի գլխավոր ուղղություններից պետք է լինի առաջին հերթին հաղորդակցության բաց ուղիներով արտահայտել համընդհանուր արժեքներ ու գործընկերություն

[406] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[407] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.
[408] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.
[409] Աննա Հարությունյան, հարցազրույց, 2017թ.
[410] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.

հաստատել որոշակի խմբերի ու անհատների հետ ու այդ գործընկերությունը գերակա դարձնել, որպեսզի կառուցվի ավելի ուժեղ ճակատ, նվազեցվի հատվածականությունը ու պայմաններ ստեղծվեն արդյունավետ համագործակցության համար:

Փոխհատվելիություն (Intersectionality)

Համընդհանուր կոլեկտիվ գործողության տարբեր ոլորտներ ստեղծելը կօգնի գենդերային հավասարությունն ու մարդու իրավունքները առաջ մղել ավելի ընդհանրական կերպ: Ինչպես արդեն նշվել է, կանանց նկատմամբ բռնությունը հայաստանյան հասարակությունում առկա ավելի հիմնարար խնդիրների՝ գործազրկության, աղքատության և արտագաղթի ախտանիշն է, որը չի կարող լուծում ստանալ մեկուսի:[411] Լոնդոնի տնտեսագիտության համալսարանի դասախոս Արմինե Իշխանյանը հորդորում է ռասայի, դասակարգի ու սոցիալ-տնտեսագիտության փոխհատումների բացահայտմանն ուղղված մարդաբանական ավելի խորքային աշխատանքներ կատարել, որպեսզի հնարավոր լինի վեր հանել այն նրբությունները, որոնք կապված են բռնության պես խնդիրներին առնչվող փաստարկների հետ:[412]

Տարբեր սոցիալական շարժումներից, լինեն դրանք՝ բնապահպանական, հաշմանդամների իրավունքների, երեխաների կամ աշխատավորների իրավունքների շարժումներ, աջակցելուն պատրաստ ջատագովներ ներառելը խրախուսի, որ կրիտիկական զանգվածը պահանջի ռեֆորմներ: Վերջին տարիներին ավելի ու ավելի շատ ենք ականատես լինում փոխհատվելիության դրսևորումների, երբ ձևավորվում են կոալիցիաներ, ներառյալ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության և Հակախտրականության կոալիցիաները, ինչպես նաև՝ Հյուման Ռայթս Հաուսը (ՀՌՀ, Մարդու իրավունքների տուն).[413] Կիրառված տակտիկաներից է եղել նաև կոալիցիայի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների համար Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ դասընթաց վարելը[414] և պետության ներկայացուցչիների հետ ավելի լայն թեմաների շուրջ, օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ԼԳԲՏ իրավունքների շուրջ քննարկումներ վարելը:[415] Ոչ ֆորմալ և ֆորմալ ձևաչափերով գիտելիքների նման փոխանակումը հանգեցրել է ծրագրային գործողությունների ներառականությանը: Օրինակ, հաշմանդամություն ունեցողների իրավունքներով զբաղվող կազմակերպությունների ընգրկումը Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի մեջ նպաստել է, որ ընտանեկան բռնության թեժ գիծը և ապաստարանի ծառայություններն ավելի ներառական դառնան:[416]

Սակայն փոխհատվելիությանն ուղղված ոչ բոլոր ջանքերը կարող են կարճաժամկետ կտրվածքով շահավետ լինել: Հայաստանի պես համատեքստերում, որտեղ ԼԳԲՏ խնդիրները վիճարկվում են, ու հասարակության մեջ հոմոֆոբիան տարածված է, կանանց ու ԼԳԲՏ խնդիրների համատեղումը՝ քաղաքական օրակարգում կանանց ու ԼԳԲՏ իրավունքների միաժամանակ ներառման փոխարեն, ցավոք, հանգեցնում է կանանց խնդիրների անտեսման առհասարակ:[417]

[411] Արմինե Իշխանյան, Անձնականը քաղաքական է: Հայաստանի ՀԿ ոլորտի զարգացումը հետխորհրդային շրջանում, Բերկլիի խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրությունների ծրագիր, 2003թ.

[412] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.

[413] Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.

[414] Զառա Բաթոյան, հարցազրույց, 2017թ.

[415] Արման Սահակյան, հարցազրույց, 2017թ.

[416] Զառա Բաթոյան, հարցազրույց, 2017թ. և Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.

[417] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ. և Գոհար Շահնազարյան, հարցազրույց, 2017թ.

◂ Համագործակցություն երկրի ներսում առկա ցանցերի հետ

Բռնությունը և խտրականությունը դատապարտող ու բացառող ուղերձների հնչեղությունը կտրուկ բարձրացնելու համար կարևոր է, որպեսզի երկրի ներսում գործող խմբերը զարգանան հորիզոնականորեն, այսինքն՝ ահրաժեշտ է ընդլայնել քաղաքացիական հասարակության սահմանումը և թիմ կազմել առավել անկախ ակտիվիստների, անհատների ոչ ֆորմալ միավորումների, լրատվական կազմակերպությունների, կրոնական խմբերի, ինքնօգնության խմբերի, արհմիությունների, ոչ պետական բիզնես ասոցիացիաների և սոցիալ-քաղաքական համատեքստի լավ իմացություն ունեցող այլ միավորների հետ: Համայնքի կարծիքը ձևավորող կարևոր հաստատություններին բացառելը, լինեն դրանք՝ եկեղեցին, իրավապաշտպան կազմակերպությունները, ուսուցիչները, լրագրողները թե քաղաքական գործիչները, կօգնի գտնել ու զարգացնել դաշինքներ այն հաստատությունների հետ, որոնք պատրաստակամ են պայքարել հանուն կանանց ու ԼԳԲՏ իրավունքների: Գենդերի մասնագետները կարծում են, որ Հայաստանի քաղաքացիական հանրությունը դեռևս չի կազմել այնպիսի կոալիցիաներ ու չի մշակել այնպիսի գործողությունների պլաններ, օրակարգեր ու ռազմավարական նպատակներ, որ բավարար լինեն իրենց պայքարը ավելի առարկայնորեն առաջ մղելու և վերջիվերջո կանանց իսկապես հզոր շարժում զարգացնելու համար:[418]

Թեև հակագենդերային արշավը մեծապես քաղաքականացված էր, արժե ընդգծել, որ լայն հանրությունը հակագենդերային մոբիլիզացիան չի մեկնաբանել որպես Ռուսաստանից ներմուծված վերազգային երևույթ, այլ ընկալել է որպես տեղային մակարդակում ծագած մի բան: Քաղաքացիական հասարակությունը կարող էր ավելի մեծ ջանքեր ներդնել և մատնանշել այս կապերն ու հզորացնել իրազեկման իր ջանքերը՝ համագործակցելով գիտա-վերլուծական կենտրոնների, լրագրողների և այլոց հետ, ովքեր իրական ժամանակում կհետաքննեին այս զարգացումները: Օրինակ, կա մի հետազոտություն, որտեղ հարցված հայաստանցիները նախընտրում են ԼԳԲՏ հարցերի մասին լսել ավելի շուտ մասնագետներից ու լրագրողներից, քան ԼԳԲՏ անձանցից կամ կազմակերպությունների ներկայացուցիչներից:[419] Այսպիսով, գիտա-վերլուծական կենտրոնների աշխատակիցներին, ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներին, քաղաքական վերլուծաբաններին ու հարակից մասնագետներին երևան հանելը կարող է մարդկանց ուշադրությունը գրավելու և ԼԳԲՏ իրավունքների մասին բացասական ընկալումները փոխելու լավ ռազմավարություն լինել: Շատ կարևոր է քաղաքացիական հասարակության այսպես կոչված՝ «գործիքակազմում» ունենալ այնպիսի գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն կոչ հղել մարդկանց մի կրիտիկական զանգվածի, որը կմոբիլիզանա ու իրական ժամանակում կհակազդի հակագենդերային վնասական հարվածներին:

Ինչ վերաբերում է ռազմավարական համագործակցություններ հաստատելուն, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ոգեշնչվելու նկատառումներով կարող է ուսումնասիրել այլ մշակութային համատեքստերը: «Հունգարիայի կանանց լոբբի» շարժումն, օրինակ, օգտագործում էր քաղաքական գործիչների, գիտա-վերլուծական կենտրոնների, դասախոսների ու լրատվամիջոցների հետ ունեցած իր կապերը, որպեսզի նրանց ներգրավի վերահսկողական գործողությունների մեջ, մասնավորապես՝ ակադեմիական

[418] Վլադիմիր Օսիպով, հարցազրույց, 2017թ.
[419] ՓԻՆՔ և ՀՌԿԿ, Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հկ և հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան, 2016թ.

հետազոտություններ իրականացնելու, CEDAW կոմիտեին, Եվրոպական հանձնաժողովին ու այլ կառույցներին ստվերային զեկույցներ ուղարկելու մեջ: Այն նաև ներգրավված էր քաղաքականության մշակման մեջ ու փոխհատվելիության մոտեցման կիրառմամբ՝ բարեփոխումներ ջատագովելու աշխատանքներ էր իրականացնում: Շարժումը նաև մեծամասշտաբ տեղեկատվական արշավներ էր կազմակերպում ու գլոբալ արշավներին մասնակցում:[420] Լեհաստանում, օրինակ, հակագենդերային քարոզչությանն ի պատասխան՝ լեհական քաղաքացիական հասարակությունը հրապարակեց մի շարք գենդերային հետազոտություններ, քաղաքականություններ ու հայտարարություններ, ներգրավվեց ակադեմիական համաժողովներում, որպեսզի ճնշում գործադրի պետության վրա սատար կանգնել Ստամբուլի կոնվենցիային: Նրանք նաև իրականացրեցին մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ՝ ստորագրահավաքներ, բողոքի ցույցեր կազմակերպելով ու պաշտոնական դատական հայցեր ներկայացնելով, որպեսզի քննարկում հարուցեն ու փոխեն հանրային կարծիքը:[421]

Համագործակցություն դրսի ցանցերի հետ

Փորձը ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարությանն իր ներպետական, տարածաշրջանային և միջազգային հանձնառությունների հարցում պատասխանատվության կանչելու ուղղությամբ ակտիվ լոբբինգն ավելի է ուժեղանում, երբ դրան միանում են նաև միջազգային գործընկերները: Այն ակտիվիստները, որոնք միջազգային կազմակերպությունների հետ կապերը խորացնելն արժևորում են, նշում են, որ նման համագործակցությունները կարելի է շարունակել կիրառել՝ որպես պետության սատարումը ստանալու և Հայաստանում կանանց դրությունը բարելավելու լծակ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համարում են, որ նրանք պետք է հետամուտ լինեն ավելի մեծ աջակցություն ստանալու հարցում՝ կոնկրետ դերակատարների, ասենք՝ օմբուդսմենին, դեսպանատան ներկայացուցիչներին կամ գենդերային հարցերի նկատմամբ զգայունություն դրսևորող այլ անձնանց շահագրգռելու միջոցով,[422] ինչպես նաև ջատագովեն, որ ավելի շատ միջազգային ներկայություն լինի Հայաստանում, օրինակ՝ ՄԱԿ-ի Կանայք կառույցի (UN Women) ներկայացուցչություն:[423] Որոշ ակտիվիստներ նշում են, որ սփյուռքի հետ ավելի մեծ կապեր հաստատելու ներուժ կա,[424] թեև ոմանք էլ թերահավատ են այս հարցում և համարում են, որ հայաստանյան հասարակությունը դադարել է ուշադրություն դարձնել սփյուռքի կոչերին:[425]

Արտասահմանյան ցանցերի հետ արդյունավետ փոխանակումների օրինակներ են՝ կանանց կազմակերպությունների համագործակցությունը «Կանանց գլոբալ իրավունքներ»-ի, «Ընդդեմ կանանց նկատմաբմ բռնության - Եվրոպա» ցանցի և վերջերս՝ Ասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կանանց իրավունքների պաշտպանության միջազգային կոմիտեի հետ, երբ վերջիններիս ներկայացուցիչները դասընթացներ են վարել CEDAW-ին փաստարկված ստվերային ու այլընտրանքային զեկույցներ գրելու և Ժնևում ՄԱԿ-ի կոմիտեում լոբբինգ անելու հարցում:

[420] Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հակագենդերային շարժումները վերելք են ապրում. Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում գենդերային հավասարության ռազմավարություններ, Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, 2015թ.

[421] Նույնը

[422] Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.

[423] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ. և Մարո Մաթոսյան, հարցազրույց, 2017թ.

[424] Նվարդ Մանասյան, հարցազրույց, 2017թ.

[425] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ. և Զարուհի Հովհաննիսյան, հարցազրույց, 2017թ.

Ռազմավարական լոբբինգ

Վերջին տարիներին կանանց ու ԼԳԲՏ կազմակերպություններն ավելի շատ են շեշտադրել ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների, հատուկ ընթացակարգերի ու Համընդհանուր պարբերական դիտարկման ուղղությամբ աշխատելը, որպեսզի արտահայտեն իրենց մտահոգությունները պետության կողմից իր միջազգային պարտականությունների ձախողման մասին: Ըստ նրանց, սա դրական միտում է:[426] Սակայն քաղաքացիական հանրությունը կարող է ավելի հետևողականորեն ու արդյունավետորեն իրականացնել կառավարության ռազմավարությունների մշտադիտարկումը, լոբբինգ անել ռազմավարական ծրագրերի ու քաղաքականությունների գենդերային բյուջետավորման, ինչպես նաև գենդերային հավասարության համապետական մեքենայի ստեղծման ուղղությամբ, և ավելի արդյունավետորեն օգտվել միջազգային ու տարածաշրջանային մարդու իրավունքների շրջանակներից: Օրինակ, չնայած այն փաստին, որ Հայաստանը գենդերային խտրականության ու բռնության վերաբերյալ մի շարք կոնվենցիաներ է ստորագրել, CEDAW կոմիտե ու Մարդու իրավունքների եվրոպական դատարան քչերն են բողոք ներկայացրել իրենց շահառուների իրավունքների ոտնահարման կապակցությամբ:[427] Հայաստանի քաղաքացիական հասարակությունը կարող է նաև կապեր հաստատել Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի հետ, որպեսզի նա այցելի Հայաստան ու մասնավոր դեպքերի առիթով հայտարարություններ հրապարակի, ինչն ուժեղ ազդակ կլինի կառավարությանը:[428] Սրանք բոլորը հզոր գործիքներ են, որոնք դեռևս լայնորեն չեն կիրառվել, բայց կարող են իշխանություններին ստիպել զբաղվել մարդու իրավունքների ակնբախ խախտումներով ու հարգել բռնությունից տուժածների պաշտպանությանը միտված՝ ստորագրված միջազգային կոնվենցիաները:

Երկրի ներսում ու երկրից դուրս համագործակցությունների հետ համատեղ՝ քաղաքացիական հանրության կողմից արդյունավետ ջանք կլիներ լոբբինգին վերաբերվել ռազմավարական մոտեցմամբ, ինչն օգտակար կլինի գենդերային հավասարությունն առաջ մղելու և հակագենդերային հիստերիային տեղում հակազդելու հարցում: Քաղաքականության բարեփոխումներ առաջ մղելու ու հանրության իրազեկվածությունը բարձրացնելու պատեհ առիթներից օգտվելը առանցքային նշանակություն ունի նման հեղհեղուկ քաղաքական միջավայրում:[429] Հասարակական կազմակերպությունները պետք է անդադար գնահատեն նոր զարգացումներն ու ընտրեն լոբբինգի տեսանկյունից առավել արդյունավետ որոշակի ռազմավարություն: Եթե հավանական է, որ փոխարենը նրանց շահերը ընդգրկվեն պետական ընթացակարգում, դրանք դառնան յուրացված օրակարգ, ապա միգուցե նախընտրելի կլինի, որ նրանք հեռավորության վրա պահեն իրենց ու օգտվեն հանրության ներսում համապետական քննարկումների պահից՝ որպես լծակ ֆեմինիստական դիատանկյունները մարդկանց պատկերացումներում ներգծելու համար:[430] Լունդի համալսարանից Շարլոթ Տապանին չներառելու փաստարկի հետ կապված՝ բերում է ընտանեկան բռնության մասին օրինագծի լոբբինգի օրինակը:

«2007թ.-ի ի վեր կանանց կազմակերպությունները համագործակցում են նախարարությունների հետ ընտանեկան բռնության մասին օրինագծի մշակման շուրջ, ու մինչ օրս այն ընդունված չէ: Կանանց

[426] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ
[427] Արման Ղարիբյան, Հայաստանում ընտանեկան բռնության կանխումն ու դրա դեմ պայքարը: Ներպետական ու միջազգային իրավական դաշտերը, մագիստրոսական թեզ, 2016թ.
[428] Արման Ղարիբյան, հարցազրույց, 2017թ.
[429] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[430] Շարլոթ Տապանի, Լարդյո՞ք լուծումը ներառումն է. Հայաստանում կանանց կազմակերպությունների ու անհատ կին ակտիվիստների քաղաքական մասնակցության ուժային վերլուծություն, մագիստրոսական թեզ, 2016թ.

կազմակերպություններն այս դեպքում ներգրավվել են պետության կողմից, սակայն առանց իրական ներգործության կամ ուժը կիսելու, քանի որ պետությունը պնդում է, որ ընտանեկան բռնության օրինագծի իրականացման համար չկան բավարար ռեսուրսներ: Պետության կողմից ներգրավված լինելով՝ երևանյան կանանց կազմակերպությունները կանգնած են իրենց օրակարգի յուրացման ռիսկի առջև, և լինելով համակարգի մի մաս, որը հենց իրենց է կեղեքում՝... տեղի է ունենում ժողովրդավարության կորուստ, քանի որ պետության մեջ ներառվելով, քաղաքացիական հասարակությունը դառնում է պակաս անկախ ու մասնակիորեն կորցնում է իր ընդդիմադիր դիրքը»:[431]

Ըստ անհրաժեշտության՝ հկ-ները պետք է համագործակցեն պետական հաստատությունների հետ, եթե ցանկանում են փոխակերպել գենդերային խնդիրների շուրջ քաղաքականություններն ու ծրագրերը: Քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ պնդում են հօգուտ տեղական մակարդակում ակտիվիզմի խորացման, քանի որ հակագենդերային արշավն ինքնին արտացոլում է հասարակության անվստահությունը արևմտյան քաղաքականության նկատմամբ, իսկ հասարակության խորքային մակարդակներում շատ քիչ բան է կատարվում:[432] Պրոակտիվ, սակայն դեռևս ոչ-ճակատային ու գործակցային դիրքորոշում ընդունելով՝ որոշ հկ-ներ հաջողել են առանցքային համարվող քաղաքական գործիչների, որոշում կայացնողների ու ակնառու անհատների հետ հարաբերություններ հաստատելու ու կառուցակարգային բարեփոխումներ (institutional reform) առաջ մղելու հարցում:

Երբ հարց ինչեց՝ ներկայացնել հկ-ներ-պետություն գործընկերության դրական օրինակներ, տրվեցին հետևյալ պատասխանները. 1. Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի աշխատանքն՝ իր փորձն ու գիտելիքները տրամադրելու հարցում և իշխանություններին քրեական օրենսգրքի՝ սեռական բռնության դեպքում պատժի հոդվածներում փոփոխություններ անելու հարցում,[433] 2. Կանանց աջակցման կենտրոնի երկար տարիների համագործակցությունը ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ բաժանմունքի, ՀՀ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ու մի շարք մարզային բաժանմունքների հետ՝ նրանց ընդհանուր և մասնագիտացած աշխատակազմերի հետ ընտանեկան բռնության վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու շուրջ,[434] 3. Հասարակություն առանց բռնության կազմակերպության համագործակցությունը Կրթության ազգային ինստիտուտի և ՀՀ կրթության նախարարության հետ հանրակրթական դպրոցներում գենդերային կրթության ուսուցչի ձեռնարկ ու կրթական ծրագիր մշակելու շուրջ:[435] Նման նախաձեռնությունները կարող են մեկնակետ հանդիսանալ, որպեսզի ավելի լայն քննարկումներ ծավալվեն այն մասին, թե ինչպես կարող է պետությունն աշխատել քաղաքացիական հանրության հետ ու բարեփոխումներ առաջ մղել:

Ակտիվիստներն, ըստ անհրաժեշտության, ինչ-որ չափով հանուն իրենց գերակա նպատակների զիջումների են գնացել՝ կապված լեզվի հետ: Օրինակ, Հասարակություն առանց բռնության կազմակերպությունը կառավարության ներկայացուցիչների գենդերային հավասարության ու անխտրականության վերաբերյալ դասընթացներին հրավիրելիս՝ երբեմն միտումնավոր խուսափել է «գենդեր» եզրույթից, սակայն օգտվել է առիթից պնդելու, որ պետությունը կատարի մարդու իրավունքների հետ կապված իր պարտականությունները:[436] Կազմակերպության ներկայացուցիչ Լիդա Մինասյանը հիշատակում է, թե իրենց նախաձեռնությունն առաջ տանելու ու պետության ներկայացուցիչներին հաշվետու

[431] Նույնը
[432] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[433] Նույնը
[434] Հասմիկ Գևորգյան, հարցազրույց, 2017թ.
[435] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ
[436] Նույնը.

դարձնելու հարցում որքան են օգնել ոչ ֆորմալ կապերը, շարունակական բանակցություններն ու հետևողականությունը: «Երբ հարցը վերաբերում է միջազգային հանձնառություններին, եթե պետությունը տեսնում է, որ քաղաքացիական հասարակությունը պատրաստակամ է իրեն օգնել որոշ պահանջներ, օրինակ՝ գենդերային կրթություն իրականացնելու հարցում, ապա նա աշխատում է քաղաքացիական հասարակության հետ», նշում է Լիդա Մինասյանը:[437] Արժե այս օրինակները ուսումնասիրել և պարզել, թե պետական մարմինների հետ ավելի արդյունավետորեն համագործակցելու համար ինչ մոտեցումներ պետք է դրսևորել:

Ե. Դոնորների օրակարգի վերաձևակերպում

Ֆինանսավորման առաջնահերթություններ

Հայաստանում գենդերային խնդիրների լուծմանն ուղղված արտաքին ֆինանսավորումը սահմանափակ է, ինչը խնդրահարույց է թե՛ դոնորների, թե՛ երկրի կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունների համար: Միջազգային դոնորները աստիճանաբար հեռանում են Հայաստանից, քանի որ այն միջին եկամուտ ունեցող երկիր է, և հարևան այլ երկրների հետ համեմատաբար՝ Հայաստանի համատեքստն այդքան խիստ չի թվում:[438] Դոնորների կողմից առաջնահերթությունների փոփոխման միտումները պահանջում են, որ կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունները համապատասխանեցնեն իրենց գործունեությունը փոփոխվող իրավիճակին և խուսափեն իրենց տեղական համայնքներին ավելի լավ ծառայելու ներուժ ունեցող երկարաժամկետ ծրագրեր մշակելուց:[439] Անկախ ֆեմինիստ Աննա Նիկողոսյանի տեսանկյունից՝ «Նասակար պատկերացում փոխելուն միտված ավելի երկարաժամկետ, կայուն ֆինանսավորման կարիք կա, ինչպես նաև՝ անհրաժեշտություն՝ անցում կատարել դեպի այնպիսի դրամաշնորհներ, որոնք օժանդակում են առավել դժվարաչափելի նախաձեռնություններին:[440] Քաղաքացիական հասարակության բազում ներկայացուցիչներ գանգատվում են, որ ստիպված են ուշադրությունը և կենտրոնացումը տեղափոխել խոշոր պատկերին ուղղված ծրագրերից՝ դեպի կոնկրետ նախագծային միջոցառումներ: Հետևաբար, ֆինանսավորման տեսանկյունից՝ հկ-ներին օգտակար կլիներ նորագյուտ ու նորարար պրակտիկաներ հորինելու ու առաջարկելու փոխարեն՝ կենտրոնանալ շարունակական աջակցության, երկարաժամկետ ծրագրերի և ապացույցների վրա հիմնված շահերի պաշտպանության վրա:

[437] Նույնը

[438] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.

[439] Արմինե Իշխանյան, Անձնականը քաղաքական է: Հայաստանի ՀԿ ոլորտի զարգացումը հետխորհրդային շրջանում, Բերկլիի խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրությունների ծրագիր, 2003թ.

[440] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.

Աջակցություն արմատաբուխ (grassroots) նախաձեռնություններին

Ինչպես նշվեց, կանանց և ԼԳԲՏ մասնագիտացած կազմակերպությունները ընդհանուր առմամբ նպաստել են քաղաքացիական հասարակության նեղացմանը: Իսկապես կենսունակ քաղաքացիական հասարակություն զարգացնելու մեջ ավելի մեծ ներդրում կատարելը հակագենդերիզմի ահագնացող երևույթին դիմակայելու ամենաուժեղ ռազմավարություններից է: Դոնորները կարող են խթանել պակաս կայունացած խմբերին՝ տրամադրելով նրանց կարողությունների զարգացման և գենդերային հավասարության, ֆեմինիզմի և կանանց իրավունքների համընդհանուր ընկալում կերտելու ավելի մեծ հնարավորություններ: Ավելի մեծ ջանքեր կարող են ուղղվել դեպի ռազմավարական պլանավորումը, մոնիթորինգը և գնահատումը, դրամահավաքները, առաջարկներ գրելու սեմինարները, և կանանց ու ԼԳԲՏ կազմակերպություններին իրենց լեզուներով տարբեր ռեսուրսներ, ասենք՝ ինտերնետային նյութեր և առցանց ուսուցման ծրագրեր հասանելի դարձնելը: Նորարար ու ավելի արտահայտված քաղաքական ֆեմինիստական աշխատանք կատարող ոչ ֆորմալ նախաձեռնություններին և խմբերին գտնելու ու աջակցելու ուղղությամբ ավելի համակարգված ջանքեր պետք է գործադրվեն՝ միևնույն ժամանակ շարունակելով օժանդակությունն արդեն հաստատված կազմակերպություններին: Սա կօգնի ամրացնել ընդհանուր առաքելությունն ու կնպաստի հակագենդերային արշավներին հակազդելուն: Կենտրոնական եվրոպական համալսարանից Անդրեա Պետյոն այս հարցի շուրջ պնդում է.

«Արդեն պարզ է դարձել, որ հակագենդերային շարժումը եվրոպական քաղաքականության մեջ նոր երևույթ է, որը պահանջում է առաջադիմական ուժերի կողմից իմաստալից հակազդեցությունների կազմակերպման նոր մեթոդներ և մտածելակերպ: Եթե առաջադեմ քաղաքականությունը մոռանա իր արժեքները և նորարար լինելն ու հանրության արմատներից բխելը, ապա միայն արդեն իսկ հնարված գենդերային քաղաքական միջոցները չեն կարող երկարաժամկետ իմաստով կանխել այս նոր հակագենդերիզմ կոչվող երևույթը: Պետք է օրինակ վերցնել նախկինում անվիճելի կարծրատիպերը կասկածի տակ դրած պատմական քաղաքական դերակատարների խիզախությունից և ինքնատիպությունից:»[441]

Դոնորների ուշադրությունն առաջնահերթ սևեռված է մասնագիտացած կազմակերպությունների վրա, և սա ոչ միայն թուլացնում է շարժում ստեղծելու ներուժը, այլև խոչնդոտ է դառնում հնարավոր «փոփոխություն ստեղծող ավելի ռիսկային, փորձարարական միջամտությունների» համար:[442] Ավելի փոքր արմատաբուխ միավորումների համար դրամաշնորհները հասանելի դարձնելը կապահովի, որ ավելի շատ ձայներ լսելի դառնան և կնվազեցնի կասկածները, որ ֆինանսական աջակցությունը հասնում է միայն որոշակի, սահմանափակ թվով կազմակերպություններին:[443] Ավելին, հաշվի առնելով, որ կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունները կտրված են գյուղական համայնքներից, արմատաբուխ ակտիվիստները կարող են մայրաքաղաքից դուրս համայնքներում ձևավորվող կարիքների մասին տեղեկություններ տրամադրել: Կարելի է փաստել, որ մինչ այժմ ավելի մեծ ուշադրություն է հատկացվել օրենսդրության ընդունման վրա, քան հանրության

[441] Էսթեր Կովաց և Մաարի Պոիմ, Գենդերը՝ որպես խորհրդանշական սոսինձ. Եվրոպայում հակագենդերային մոբիլիզացման մեջ պահպանողական ու ծայրահեղ աջական կուսակցությունների դիրքն ու դերը, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2015թ.

[442] Ալեքսանդրա Փիթման, Ուսումնասիրելով կանանց իրավունքները և ֆեմինիստական շարժման ձևավորումը Հայաստանում. Դասեր անցյալից և ռազմավարության մշակում ապագայի համար, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013թ.

[443] Սարա Մենդելսոն և Ջոն Գլենն, Օժանդակություն ժողովրդավարությանն ու ՀԿ ռազմավարություններ, Խաղաղության Կարնեգի հիմնադրամ, 2000թ.

իրազեկման:[444] Փոքր դրամաշնորհներ տրամադրելով՝ դոնորները արդյունավետ կերպով կմոտենան համայնքի ավելի մեծ թվով անդամների և կառաջարկեն անհրաժեշտ ծառայություններ:[445] Ըստ Հասարակություն առանց բռնության կազմակերպությունից Լիդա Մինասյանի՝ իրենց գենդերային կրթական ծրագրի հաջողության պատճառներից մեկը արմատաբուխ հեռանկարները հաշվի առնելը և մայրաքաղաքից հեռու շրջաններ գնալը, այնտեղ քաղաքապետների և դպրոցների աշխատակիցների հետ կլոր սեղան քննարկումներ կազմակերպելն էր:[446]

Դրամատու-դրամառու կապի բարելավում

Դոնորները պետք է հաճախ շփվեն դրամառու կազմակերպությունների հետ, սակայն այնպես, որ նրանց օրակարգերը չտանեն ֆինանսավորվող ծրագրերի ուղղորդման, այլ իրականում աջակցեն կազմակերպություններին լուծել իրենց խնդիրները՝ դրանց վերաբերող մեթոդների ու լուծումների շրջանակների, դիսկուրսների և տեղում երևան եկած մտքերի վերաբերյալ կարծիքների փոխանակում կազմակերպելու միջոցով:[447] Ավելի լավ արդյունքներ ստանալուն կօգնի նաև դրամատու-դրամառու հարաբերություններին ներհատուկ՝ ուժային անհավասարության մասին մշտապես հիշելը, քանի որ այն «ազդում է հասկացությունների սահմանման, գիտելիքի ստեղծման, տեղեկատվության շրջանառության, որոշումների կայացման և հետևաբար՝ ծրագրերի և քարոզարշավների արդյունքների վրա»:[448] Հատկանշական է, որ դոնորների հետ երկարատև հարաբերություններ ունեցող կազմակերպությունները առավել քան երբևէ սկսել են մարտահրավերներ նետել այն ամենին, ինչ իրենց է հասնում արդեն դոնորների կողմից սահմանված և կարողանում են պաշտպանել իրենց դիրքորոշումները՝ կապված այն մեթոդների ու պրակտիկաների կիրառման հետ, որոնք իրենց կարծիքով առավել արդյունավետն են տվյալ համատեքստում:[449]

Նպաստել երկրի ներսում համախմբվածությանը և ավելի լավ շփմանը

Ինչպես բացահայտեց այս հետազոտությունը, կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունների միջև թույլ կապերը և դրսևորվող մոտեցումների բազմազանության պակասը նպաստել են հակագենդերային արշավի հաջողությանը: Սա հաշվի առնելով՝ միգուցե դոնորները սկսեն ավելի շատ շեշտը դնել երկրի ներսում համախմբվածության վրա՝ ռազմավարական պլանավորման հանդիպումներ, գիտելիքի փոխանակման սեմինարներ, շարժում կառուցելու հանդիպումներ ֆինանսավորելու միջոցով, որոնց շնորհիվ կազմակերպությունները և տարբեր խմբերը կկարողանան զորակցություն ձևավորել ու նպաստել խաչաձև համագործակցություններին:[450] Նրանք կարող են նաև փորձել միջնորդի դեր ստանձնել, որպեսզի ապահովեն ակտիվիստների բովանդակային ներգրավվածությունը քաղաքականության մշակման մեջ, ինչն իր հերթին կարող է ուժեղացնել հակազդեցությունը հակագենդերային արշավին, երբ կանանց և ԼԳԲՏ անձանց հարցերը քաղաքականապես շահարկվում են:

[444] Նվարդ Մարգարյան, հարցազրույց, 2017թ.
[445] Սարա Մենդելսոն և Ջոն Գլենն, Օժանդակություն ժողովրդավարությանն ու ՀԿ ռազմավարություններ, Խաղաղության Կարնեգի հիմնադրամ, 2000թ.
[446] Լիդա Մինասյան, հարցազրույց, 2017թ.
[447] Արմինե Իշխանյան, Անձնականը քաղաքական է: Հայաստանի ՀԿ ոլորտի զարգացումը հետխորհրդային շրջանում, Բերկլիի խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրությունների ծրագիր, 2003թ.
[448] Արմինե Իշխանյան, Ժողովրդավարության կառուցումն ու քաղաքացիական հասարակությունը հետխորհրդային Հայաստանում, Լոնդոն, Նյու Նորք, Ռութլեջ հրատարակչություն, 2008թ.
[449] Արմինե Իշխանյան, հարցազրույց, 2017թ.
[450] Աննա Նիկողոսյան, հարցազրույց, 2017թ.

Առավել մարգինալացվածների զորացում

Ընտանեկան բռնություն վերապրած կանայք և ԼԳԲՏ անձինք, հաշմանդամություն ունեցող մարդիկ, էթնիկ փոքրամասնությունները, գյուղական համայնքների բնակիչները և աղքատության մեջ ապրողները հիմնականում մնում են քննարկման շրջանակներից դուրս: Դրությունն ավելի է վատթարացնում այն, որ աղքատության իգականացումը և գենդերային հիմքով բռնության բարձր ցուցանիշը պայմանավորված է կանանց ցածր տնտեսական ակտիվությամբ: Բարեփոխումների առաջարկները պետք է վերաբերեն ոչ միայն կոնկրետ գենդերային քաղաքականությանը, այլև՝ առավել մարգինալացված խավերի վրա աշխատուժի քաղաքականության թողած հետևանքներին՝ որպես գենդերային անհավասարության ու բռնության դեմ պայքարի մի մաս: Այդպիսի ջանքերը պետք է նպաստեն նրան, որ բռնությունը վերապրածները կարողանան տնտեսապես ուժեղանալ, որպեսզի հանդես գան որպես իրենց շահերի պաշտպաններ: Ընտանեկան բռնությունը վերապրածների համար բիզնեսի և ձեռներեցության այնպիսի ծրագրերի իրականացումը, ինչպիսին, օրինակ, Մերձավոր Արևելքի հիմնադրամինն է, պետք է ընդլայնվի ու ներառի ավելի շատ կանանց՝ հատուկ ուշադրությունը բևեռելով առավել մարգինալացված խավերի վրա:

Խտրականության և/կամ բռնության ենթարկված և հրապարակային հանդես գալու ցանկություն ունեցող մարգինալացված անձանց անմիջականորեն ուղղված դոնորների նախաձեռնությունները ոչ միայն զորացնող կլինեն, այլ նաև հասարակությանը հզոր ազդակ կուղարկեն:[451] Դրական օրինակ է ընտանեկան բռնություն վերապրածներին զորացնելու՝ Կանանց աջակցման կենտրոնի մոտեցումը, որը նրանց նաև օժանդակում է դատական գործերի հնչեղության ու այլ միջոցներով իրենց ուղերձները տեղ հասցնելու հարթակ ունենալու հարցում: Մեկ այլ դրական օրինակ է 2016 թվականին Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կազմակերպած բողոքի ակցիան, որը հանրության ուշադրությունը հրավիրեց Արդարության նախարարության հարկադիր կատարման ծառայության կողմից երեխաների խնամակալության գործերի թերի վարման վրա: Այս ակցիայի ժամանակ երեխաների խնամակալության համար պայքարող վերապրածներն իրենք էին գլխավորում բողոքի ակցիաները: Մինչ օրս այդ գործողությունների արդյունքում բռնություն վերապրած կանանցից երեքը կարողացել են վերամիավորվել իրենց երեխաների հետ:[452]

[451] Անահիտ Սիմոնյան, հարցազրույց, 2017թ.

[452] Կանայք բողոքում են ԴԱՀԿ-ի գործունեությունից, Պանորամա, 2016թ. նոյեմբերի 3

Եզրակացություն

2013 թվականի հակագենդերային արշավը միանշանակ խորը հետքեր է թողել: Կանայք և ԼԳԲՏ անձինք շարունակում են թիրախավորվել, որին զուգահեռ՝ գենդերային անհավասարության դրսևորումները շարունակում են սահմանափակել նրանց սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավունքները: Ակտիվիստները չէին կանխատեսել այդ արշավը, նրանցից շատերն անձնական սպառնալիքներ են ստացել, ինչը նրանց ստիպել է մտահոգվել սեփական անվտանգության համար: Նրանք պայքարել են, որպեսզի հակազդեն թունոտ հաղորդագրություններին և հիմնականում լռեցվել են:

Ապագայում կանանց և ԼԳԲՏ իրավունքների առնչությամբ հավանական ծանր հետևանքներ կարող են լինել, եթե պահպանողական և ծայրահեղ աջական միավորները շարունակեն հակագենդերային տրամադրվածություններ հրահրել և շարունակաբար ավելի մեծ տեղ զբաղեցնեն հանրային դիսկուրսում: Քանի դեռ հասարակությունը կառչած է ավանդական, կարծրացած և կնատյաց վերաբերմունքներին, որոնք պաշտպանված են ազգայնական-պահպանողական արժեքային համակարգի և աջակողմյան կառավարության կողմից, Հայաստանը շարունակ բախվելու է խոչընդոտների, որոնք բացասաբար են անդրադառնում հատկապես իր առավել մարգինալացված քաղաքացիների վրա: Ես հույս ունեմ, որ հետազոտության արդյունքում ձևավորված առաջարկները կարող են նպաստել Հայաստանում գենդերային հավասարությանը հասնելու առաջընթացն արգելակող տարբեր խնդիրների հաղթահարմանը:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարծում են, որ հաղորդակցության բաց ուղի ստեղծելու հարցում մեծ է տեղական մակարդակում շահագրգիռ բոլոր կողմերին քարտեզագրելու ու նրանց տեղեկատվություն հասցնելու կարիքը՝ սկսած քաղաքականություն ընդունողներից մինչև հավասար իրավունքների պայքարին նվիրված հասարակ քաղաքացիներ ու բազմատեսակ դերակատարներ: Ակտիվիստները կարծում են, որ պետք է ավելի ջանք գործադրվի կանանց և ԼԳԲՏ իրավունքների հարցում չեզոք դիրքորոշում ունեցող մարդկանց ընդգրկելու ռազմավարություններ մշակելու հարցում, քանի որ այս մարդկանց հետ քաղաքացիական հասարակությունը կարող է հաստատել սերտ աշխատանքային հարաբերություններ և ժամանակի ընթացքում նրանց ներգրավել գենդերային դիսկուրսի մեջ:

Ներկայիս գենդերային դիսկուրսը տեղակայված է երկու բևեռներում, որտեղ ջատագովները և պահպանողականները տրամագծորեն հակադիր դիրքերում են՝ տեղ չտալով ավելի լայն, բոլոր նրբություններին անդրադարձող քննարկումների ծավալմանը: Արդյունքում՝ ուղերձները վերածվում են համատեքստից կտրված խոսքերի պատառիկների, որոնք «ավանդական» հայերին տրամադրում են կանանց և ԼԳԲՏ ակտիվիստների դեմ՝ թուլացնելով և վարկաբեկելով նրանց ուղերձները: Կանանց և ԼԳԲՏ կազմակերպությունների ներկայացուցիչները ընդունում են, որ մինչ օրս չեն գործադրել թիրախավորված ռազմավարություն և որ զգում են վերաբերմունքը փոխող դիսկուրսներ զարգացնելու մասնագիտացված գիտելիքների պակաս:

Հակագենդերային արշավի հաջողության առանցքային կողմերից մեկը կարելի է վերագրել նրան, թե որչափ էր այն նյութապես զինված և ինչ լայնորեն էր գործածում սոցիալական մեդիան, հեռուստատեսությունն ու լսարաններին լսելի լինելու ռազմավարական գործիքները: Ուստի խիստ անհրաժեշտ է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն հնարամիտ ռազմավարությունների և մուլտիմեդիա հարթակների գործածման վրա: Եթե տեղեկատվական արշավների մշակումը հիմնված լինի ապացուցողական պրակտիկայի վրա, որում ուղերձները կլինեն շիտակ ու նախապես կստուգվեն, ինչպես նաև արշավներից հետո կիրականացվեն դրանց ազդեցությունը ու իրավունքամետ նպատակները գնահատող հարցումներ, ապա հնարավոր կլինի հանրային պատկերացումներում իրական փոփոխություն արձանագրել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ համախոհ կազմակերպությունների և անհատների ուղղահայաց դաշինքները, թե՛ երկրից դուրս ավելի խոշոր ցանցեր ունեցող հորիզոնական դաշինքները կարող են զուգահեռաբար գործադրվել քաղաքականության օրակարգի հիմնական խնդիրները առաջ տանելու ուղղությամբ: Քաղաքացիական հասարակության շատ ներկայացուցիչներ կիսում են մի շարք մտահոգություններ, թե ինչպես հավատարիմ լինեն իրենց սկզբունքներին՝ տեղական մակարդակում ակտիվիստների և ավելի լայն միջազգային համայնքի հետ գործակցություններ փնտրելիս:

Առաջընթացին խանգարող վերոնշյալ արգելքներն ու սպառնալիքներն ի նկատի ունենալով հանդերձ՝ ակտիվիստները կարծում են, որ դոնորները պետք է հաշվի առնեն, որ խորապես արմատավորված խտրական սոցիալական նորմերը փոխելը ժամանակատար է, ուստի նրանք պետք է մեծացնեն կայուն հիմնական (ոչ ծրագրային) աջակցությունը կամ ճկուն ֆինանսավորումը՝ ի տարբերություն ծրագրային ֆինանսավորման: Քաղաքական և ֆեմինիստական ջատագովության նախաձեռնությունների և հկ-ների հզորացման ռազմավարությունը կօգնի հեռանալ «ծրագրից-ծրագիր» մոտեցումից և խթանել ինչպես ավանդական, այնպես էլ՝ ոչ ավանդական քաղաքական մասնակցությամբ բնորոշվող կոլեկտիվ գործողություն, որն այդքան անհրաժեշտ է շարժում ստեղծելու համար:

Հավելված. Հետազոտության մեջ ներգրավված հիմնական մասնակիցները

Անահիտ Սիմոնյան, Կանանց ռեսուրսային կենտրոնի շահերի պաշտպանության ու քաղաքականության մշակման պատասխանատու, «Մարդու իրավունքների կրթության կենտրոնի» տնօրեն և հիմնադիր

Աննա Հարությունյան, «Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի» կրթական ծրագրերի համակարգող, Բեռլինի Ազատ համալսարանի գիտությունների թեկնածու

Աննա Նիկողոսյան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համատեղությամբ համակարգող, անկախ ֆեմինիստ

Անուշ Ալեքսանյան, Կրթության ազգային ինստիտուտի կրթական հոգեբան, «Երկուսով» մասնագիտական հոգեբանական կենտրոնի տնօրեն

Անուշ Պողոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոնի սեռական առողջության վերապատրաստող

Արման Ղարիբյան, «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համահիմնադիր

Արման Սահակյան, «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի գրասենյակի տնօրեն

Արմինե Իշխանյան, Լոնդոնի Տնտեսագիտության համալսարանի դասախոս, Սոցիալական քաղաքականության բաժնի՝ Սոցիալական քաղաքականություն և զարգացում մագիստրոսական ծրագրի տնօրեն

Գայանե Աբրահամյան, «Հոդված 3» ակումբի հիմնադիր և տնօրեն, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության հաղորդավար/լրագրող, EurasiaNet լրատվական կայքի թղթակից

Գայանե Հովակիմյան, Արտարադատության նախարարության վերականգնողական ծրագրերի կենտրոնի տնօրեն

Գոհար Շահնազարյան, Երևանի պետական համալսարանի Գենդերային հետազոտությունների ու առաջնորդության կենտրոնի տնօրեն, Կանանց ռեսուրսային կենտրոնի համատնօրեն

Հասմիկ Գևորգյան, Կանանց աջակցման կենտրոնի ծրագրերի համակարգող

Լիդա Մինասյան, Հասարակություն առանց բռնության հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն

Մարիա Աբրահամյան, «Հոդված 3» ակումբի մարդու իրավունքների ծրագրերի համակարգող, «Հավասար իրավունքներ» հասարակական կազմակերպության մարդու իրավունքների ծրագրերի համակարգող

Մարո Մաթոսյան, Կանանց աջակցման կենտրոնի գլխավոր տնօրեն

Նվարդ Մանասյան, Հայկական կրթական հիմնադրամի կրթաթոշակների խորհրդի անդամ, Թրանսփարենսի ինթերնեշընալ Հայաստան հակակոռուպցիոն կենտրոնի խորհրդի անդամ

Նվարդ Մարգարյան, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հասարակական կազմակերպության նախագահ

Սևան Պետրոսյան, Վորլդ Վիժըն Հայաստան միջազգային կազմակերպության գենդերային ծրագրի ղեկավար

Վահան Բուռնազյան, Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն ծրագրի դոցենտ

Վլադիմիր Օսիպով, Գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Զառա Բաթոյան, «Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպության նախագահ

Զարուհի Հովհաննիսյան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համատեղությամբ համակարգող, անկախ ֆեմինիստ, իրավապաշտպան, հրապարակախոս

Անի Ջիլոզյան